Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ZLbn
776, 2356

1999

ԻՆՉԼԻՍԼԻՕՐԻՑԻՆԵՐԻ

Դ ՊԱՏԱՐԱԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ

Յովհաննէս Կոլէնեանց

և

Միքայէլ Պապիկեանց։

Դ Հայրապետութեան Տեառն Տեառն Ն. Ներսիսի Սրբազնագոյն Կաթուղիկոսի մեր Հայոց, ծայրագոյն Պատրիարգի առաքելական մայր Ա. Թառոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

Դ ՏՓԽԻՍ

Դ Տպարանի Ներսիսեան Ողորմելիարանի ընծայեցելոյ յաղնութեան Պէտրգայ Ա. ՐԾ-ՐՈՒՆԵԱՅ։

Ի 1853 ամի և Ազգաւոր 1302

Հ. Ա. Հայրապետ

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ.

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ. 5 го Февраля 1853 го года.

Исправляющій должность Цензора И. Кайтмазовъ.

28 778

4776-40

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Պատմաբանական կրիտիկան ցանկանում է իմանալ, թէ ո՞վ էր էս մեր թարգմանած գրքի հեղինակը, և թէ ինչ՞ աղբիւրներից է վերառել նա ինքնէքսէյնոյն (1) պատմութեան նիւթերը։ Ա. յս հարցմունքներին պատասխանում ենք հեղինակի կենցաղագրութիւնովը։

Յովհաննէս Անտոնիոս Լ օրէնաէ ծնաւ 1756 ին Ամրակոնիայում, հին՝ այլ ոչ հարուստ ազգատոհմից Ամենտիսապալաց։ Տասն և չորս տարեկան հասակումը մնաւ նա հոգևորական կոչման մէջ, և ինչպէս ժամանակը պահանջում էր՝ պարապեցաւ փիլիսոփայութիւնով և ֆիզիգայով։ 1776 ին Սարրակոսի համալսարանումը ուսաւ կանոնիկների (2) օրինադրութիւնները, և թէպէտ քան երեք տարեկան էր, բայց ստացաւ օրինաց վարդապետի բարձր աստիճանը։ Երբ վերադարձաւ Մադրիտ քաղաքը 1781 ին արժանացաւ ստանալ ադվոկատի (փաստաբանի) աստիճան Կաստիլիոյ բարձրագոյն դատարանումը և մնաւ թագաւորական Հեմարանի անդամոց կարգը։ 1785 ին Իսպանիոյ Ինկվիզիցիայի ժողովը Լ ոկրոնիոյ քաղաքումը ընտրեց նրան գործակալ, և չորս տարիից յետոյ սեկրետար (ստիպատարի) Ինկվիզիցիայի պալատին։ Կոմսն Ֆլորիտայ Բլանկայ, որ էս ժամանակին Իսպանիոյ գլխաւոր նախարարն էր, հրաւիրեց Լ օրենտին Մադրիտի նոր հաստատած պատմաբանական վարդապետարանի (Ակադեմիայ) անդամ լինել։ 1793 ին մին քանի բարեմիտ Եպիսկոպոսներ սկսան Ինկվիզիցիայի դատարանումը մին քանի մասնաւոր փոփոխութիւններ անել։ Գոծոյի իշխան Անրայ համաձայնեցաւ

Ծանօթութիւն։ (1) Ինքնէքսէյնոյ, էս բառը Լ ատինեերէն է և նշանակում է քանու�։ բայց իսկապէս գործածուած է հաւատոյ կամ Հռոմէական եկեղեցոյ ծէսերի հակառակ գործերի համար։ Բարբարոսաբար մեր եկեղեցին և ազգը ազատ լինելով էս տուեալի լուծից, չունի էս բառին խոսական թարգմանութիւնը։ ուստի մենք էլ բոլոր Եւրոպացոց հետևելով, լաւ համարեցինք նոյն ինքնէքսյոյ բառը գործածել, առանց գատաւորներին էլ անուանելով ինքնէքսիսէր։

(2) Կանոնիկ — զիտութիւն եկեղեցական կանոնագրութեանց։

Ծան. Խմբ.

պաշտպանել այն օգտակար ձեռնարկը, բայց շուտով վէճ բնկաւ իրա-
բարձր իշխանութիւնից և բոլոր դիտաւորութիւնը խափանուեցաւ։ Ի-
ժամանակը ինկվիզիցիոնները յանկարծ ձեռք դցին Ի օրէնսդիր բա-
ըսվագրերը, որոնց մէջ պարզաբար խօսած էր, թէ ինչքան հար-
կաւոր է Ինկվիզիցիայն վերացնել, և էստով Ի օրենքը ազատ-
գործակալի և սեկրետարի պաշտօններից և ընկաւ տուգանքի տակ.
բայց 1806 ին կրկին հրաւիրեցին նրան համալսարանի ամբիոնը։
1808 ին երբ Ֆրանսիացիները Իտալիայ վրա դիմեցին, Ի օրէնսը Յով-
սէփ Բոնապարթի կողմը պահեց, և երբ բոլոր ժողովուրդը ապըս-
տամբեցաւ, նրա հետ փախաւ Ալ Իտալիայ։

1809 ին ինկվիզիցիան ոչնչացաւ և Ի օրէնսին յանձնեցին քըն-
նել դիւանները և գրել Ինկվիզիցիայի դատարանի պատմութիւնը։
Երկու ամբողջ տարի ժողովը դուրս էր գրում միայն թուղթերի
պատճէնները (էրէ՝ը) և մեծ մեծ մագաղաթի վրայ գրած վճիռ-
ներից հաւաքած քաղուածները։ Ա. հա՛ սրանք են էն աղբիւրները,
որոնցից Ի օրէնսը գրել է այս պատմութիւնը, որ հէնց առաջին
դուրս գալիս թարգմանեցաւ Գերմաներէն, Ֆրանսերէն և Ան-
գղլերէն։ Ֆրանսէ լեզուաւ տպած է 1817 ին անունով Կրէ-
պինիանո պատմութիւն Իսպանիոյ Ինկվիզիցիոյ, շատ մեծ հատոր է շատ
գրաւոր ապացոյցներով (պիէսներով) և Հշմարիտ վկայութիւնով։ Ինչ կա-
րելի դրել, թէ այս տպագրութիւնը քանի հալածանքների, ոնգա-
ւանութիւնների և թշնամութիւնների պատճառ դառաւ հեղինա-
կին, ոչ միայն Իսպանիոյ մէջ, այլև Ֆրանսիումը։ Ի օրէնսը մեռաւ
1823 ին։

Ի էտուարդ Գալլուայ կամելով Ինկվիզիցիայի պատմութիւնը ներ-
կայացնել անխզելի կարգաւ և հեշտացնել նրա կարդալը, հանեց
բոլոր գրաւոր ապացոյցները և բոլոր ընդարձակ քաղուածները դոր-
ծքերից, և հաւաքելով միայն իսկական նիւթերը համառօտեց Ի օ-
րէնսի մեծահատոր աշխատանքը։ Պ. Ի յիսլէրը թարգմանեց Գալ-
լուայի թարգմանութիւնը Գերմաներէն։ Նոյնը թարգմանեց Ռու-
սերէն Պ. Պոտեատովը 1845 ին։

Ինկվիզիցիայի անունը շատ անգամ, մանաւանդ նոր կայ դարում,
կարդում ենք լրագրերի մէջ. բայց բովանդակ պատմութիւնը դեռ չունինք։
Մեր կարծիքով այս գիրքը կարող է մեծ օգուտ բերել ընդհանուր
պատմութեան, լուսաբանելով Իսպանիոյ և Պորթուգալիոյ պատմութիւնների
մութ տեղերը. մանաւանդ որ Ինկվիզիցիայի դատարանը անոյայտուն

անպերի մէջ ծածկեալ իրա բոլոր անօրէնութիւնները, միշտ ժողովրդի աչքի հանար էր իբրև խորհրդաւոր, անմերձենալի և. անհասանելի Հակառակորդը, որը որ ընտրում էր իրա զոհերը ինքնակամ, և յաւիտեան կորցնում էր նրանց։ Ծառանակը վերցրուց նրա դէմքից սև քողը, լուսաւորութիւնը մերկացրուց կեղծաւորներին, շրջթայով կապեց Ֆոնոպիոնը (1) և մարդկային անցեալ մոլորութից պատմութիւնը կը զարհուրացնէ քարասիրտ ընթերցողներին, թափելով նրա աչքից շատ կարեկցութիւններ հրապարակական Ս.քիպօ-պա-քէ (2) մէջ դատապարտածների վրայ և անպաշտպան անմեղութեան կոյր դահիճների վրայ։ Սրա հետ միասին չէ կարելի չ'ուրախանալ, թէ մին ազգ՝ որ հեռու է ճնացել լուսաւորեալ Եւրոպայներից կատարելութեան Հանապարհումը, մին ազգ՝ որ կամակորութիւնով և երկար ժամանակ հեռանում էր ամենայն օտարազգի բաներից - ինչպէս մեր ազգի համար առում են ստարները - երբէք չի անքայլել Կաթոլիկութեան լուծի տակը, որ տանջանքներով և կրակով է պաշտպանում քրիստոնէական ուսման մաքրութիւնը. հարկաւորութիւն չէ ունեցել Ինկվիզիցիայի դատարանի, չէ՛ ունեցել նրա տանջանքները. այլ ինչպէս առաջ, ինչպէս էլ հիմի հաւատոյ գործերում կառավարել է իրա հոգևոր իշխանութեան հեզ և բարերար հոգացողութիւնովը և հաւատոյ ազատութեամբ։

Ս.յս գիրքը թարգմանելու մեր նպատակն է նախ՝ ծանո-

---

(1) Ֆոնոպիոն է բառ Լատիներէն, որի արմատն է Քոնոմ - պոմ. տաճարի ծառայողներին ասում էին Ֆոնոպէ. յետոյ ամենայն կոյր զկուրայն մին բան պաշտպանողի անունը դրին Ֆոնոպէ. Նորումն այս բառը թարգմանել են Տոչէատոնոսկոն, Տոչէատոնոն։

(2) Ս.Քիպօ - պա - քէ է բառ Յունական, և նշանակում է գործ հաւատոյ. երբ Ինկվիզիցիան եկեղեցական հանդիսում մեծ բազմութեան առաջը դատապարտածների վրայ այրում էր հերետիկոս կարծուածներին. և որովհետև այս բառը, որ պատրաստում է իրա մէջ այն հանդէսի բոլոր գործողութիւնը, ամենայն Եւրոպայքը իրանց լեզուներ մէջ գործ են ածել, մենք էլ արժան համարեցինք նոյն բառը գործ ածել այս թարգմանութեան մէջ։

Օրոն. Ներգ.

Թացնել մեր աղգը էն առաջկայի հետ, որի վրա այսքան շատ խոսում են, և այսքան Թերի դատում են, չ՝ունենալով հաստատ տեղեկություն Թէ ուն Կոնկլեզեցիայի վրա. և երկրորդ՝ մարդկային աղգի պատմութեան ընդարձակ և անչափ ասպարիզի մէջ ամենայն պարբերող մարդոյ բնական զգացմունքը - հաղորդել ընկերին ամենայն նոր բան, ինչ որ վերաբերում է հին և նոր ժամանակին, և որը որ կարող է պատմութեան մութ տեղերը պարզեցնել։

ՍԱՍԻ ԱՌԱՔԱԼԻՆ

ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹԻՒՆՔԻ ԵՒ ԻՆԳԼԻՍԻԱՅԻ

ԳԼՈՒԽ ԱՌԱՔԱԼԻՆ

Սէջ՝ Հերետիկոսութիւնք և Ինկլիսիայէ։

Այաղուց՝ երբոր քրիստոնէական հաւատը դեռ նոր էր տարածուել աշխարհի վերայ, ստուգեան հայրը, հին մարդասպանը սկսեց սուտ քարոզութեան որոմները ցանել Քրիստոսի հաւատացեալոց մէջ։ Դեռ և Քրիստոսի եկեղեցւոյ առաջին դարումը տեսնում ենք շատ քարոզութիւններ, որոնք հեռու են ուղղափառ դաւանութիւնից։ Բէչ ժամանակից յետոյ հերձուածները շատացան։

Բայց սուրբ ուղղափառ եկեղեցին, ամուսդաբ հոգալով իրա Հշմարիտ և մոլորած որդկերանց համար, երբէք չէր դադարում հերետիկոսների դէմ բռնաւորական հնարքներ, ինչպէս որ տեսնում ենք քրիստոնէութեան երեք դարուց պատմութեան մէջ։ Մինչև մեծ Կոստանդիանոսի ժամանակը, որն որ խաղաղացրուց եկեղեցին, ամենայն եկեղեցեաց ընդհանուր կանոնն էր՝ միշտ վարուել հերետիկոսների հետ հեղութեամբ և մարդասիրութեամբ, որ աւելի չըկամակորին։ Նկեղեցին, հերետիկոսներին չըմատներով մարմնաւոր տանջանաց, ամենայն հնարքներով հետևում էր միայն համոզելով յետ դարձնել նրանց դէպի ուղղափառ հաւատը։ Նթէ արևմտեան հոգևոր իշխանները պահէին էս կանոնը Կոստանդիանոսի մեռնելից յետոյ էլ, աշխարքը չէր տեսնիլ Ինկվիզիցիայի դատարանը, հերետիկոսների թիւը այսքան չէր շատանալ և նոյն իսկ հերձուածները երկար չէին տևել։ Բայց չորրորդ դարու Պապերը իրանց համար իսկական պարտաւորութիւն համարեցին՝ ուժով ջնջել հերետիկոսութիւնը - և սկսան վարուիլ կռապաշտների քուր-

մերի նման, թէև առաջ քրիստոնէի բռնութիւնը իրանք պատրաստում էին։ Մէկ էլ որ՝ ունենալով թագաւորների վրա մեծ ազդեցութիւն, նրանք յորդորում էին նրանց հրատարակել թունդ օրէնքներ չարտիաւոնների դէմ, ցոյց տալով, թէ հերետիկոսները տէրութեան դէմ յանցաւորներ են և էնդուր հաւատը արժանի են մարմնաւոր տանջանքի։ Պատիժները, որոնք դործ էին ածում հերետիկոսների դէմ այս երկրորդ շրջանի մէջ, այն է չորրորդից մինչև ութերրորդ դարը, էին՝ պատուից, ապտիճանից և արժանաւորութիւնից զրկել, կայքը խլել և այլն։

Էնց որ պապերը տեսան, թէ հերետիկոսներին կարելի է դցել մարմնաւոր տանջանքի տակ, իսկոյն հարկաւոր համարեցին աւելի մեծ տանջանքներ դնել, զրօրինակ՝ մորսկաւ ծեծել, հայրենիքից աքսորել (տղել), մշակութիւնի տալ։ Պահանջ պատիժ տալիս էին միայն Պանիքեցիներին և Ռոնատեաններին էն խռովութիւնների համար, որ նրանք անում էին Պիրիկայումը և Ռոմի մէջ։ սակայն մոլորուածները կարող էին զղջալ, եթէ կամենում էին ազատուիլ էն մարմնաւոր դատաւորների հալածանքից։ Ռատատանական իշխանութիւնը տալիս էին եպիսկոպոսներին միայն մինչ քանի դիպուածներումը։

Խսպանիոյ եկեղեցին պահում էր էս ընդհանուր դիսցիպլինան (կանոնը) մինչև Տոլեդի չորրորդ ժողովը, որ հաւաքեցաւ Սիղեբոնդ թագաւորի համաձայնութիւնով (631 — 636)։ Էս ժողովքումը առհմանեցին, որ Ռէգանները լինին եպիսկոպոսների իշխանութեան տակ, էնպէս որ՝ նրանք կարողանան մատնել նրանց տանջանքի և էնդրով տալով հրէութիւնը թողուլ։ Քրիստոնէութիւնից կրապաշտ դառնողների համար պատիժը տահմանում էին մահիկ տալով նրա ատիճանին։ ապոստատներին քանադրում և աքսորում էին իրանց հայրենիքից, իսկ հասարակ մարդկանց՝ մտրակով ծեծում, մաղերը կտրում և կայքը խլում էին։

Էս միջոցս հոգևորականութիւնը ստացաւ թագաւորներից և կայսերներից մեծ արտօնութիւններ։ Արանցից յետոյ եկեղեցան տուաղելիրատալեանները (հոնորարները), որոնց միտքը հասկանալու ժողովուրդը դեռ հոգ չէր տանում, վասն զի նոքա դեռ ևս ընկղմած էին տգիտութեան մէջ և նեղացած էին (գեբմոռոցի) բարբարոսների պատերազմներից։ Էս դեկրետալեանները (հոնորարները) տուին պապի աթոռին էնքան մեծ զօրութիւն բոլոր արևմտեան քրիստոնէութեան վրայ,

որ յետոյ ոչով չէր համարձակւում կարծիք տանել պապերի ծայրագոյն իշխանութեան վրայ և թէ այս իշխանութիւնը իրաւունք ունի գերազանց լինել ամէն բարձրագոյն իշխանութիւնների վրայ։ Դու յաւուկ էլ էնպէս իլաւ։ Երբ որ Հռովմայեցիք աքսորեցին իրանց վերջին ազարապետ Հերոդ Ավգուստին, Հռովմի քաղաքական կառավարութեան տանձը վերառաւ Գրիգոր Բ պապը. իսկ նրա յաջորդ Գրիգորը Դ ամէն դաշնախօսութիւնների մէջ, որ ունէր Լոմբարդիոյ թագաւորաց հետ, թագաւորի նման էր վարւում։ Դա ժամանակից պապերը սկսեցին բաժանել թագաւորներին թագ, և առանց ընդդիմութեան ձեռները առին իրաւունքը՝ ազատել ժողովրդին էն երդումից, որ նրանք ընդունել էին իրանց թագաւորներին հաւատարմութիւնով հպատակելու, իսկ արևմտեան քրիստոնեայ թագաւորները պարտաւորւեցան ամէն բանը կատարել, ինչ որ կամենայ նրանց Սրբազնակատարութիւնը։ Յետոյ կրտեանենք, թէ էս հանգամանքները ինչքան օգնեցին Ինկվիզիցիային։ Մինչև էս ժամանակը պապերը չէին կամենում Ինկվիզիցիայի բաներումը դուրս անել իրանց մարդկերանց (հոգևորականներին), որ նրանք վերահասու լինին քրիստոնէից ուղղափառութեան վրայ, և արթուն լինէին, որ նոր քրիստոնեայ դարձած կռապաշտները նոյն ուսման մէջ հաստատ մնան և ընդ հակառակին նրանց դէպի ուղիղ Քանապարհն ուղեն։

Երրորդ շրջանումը փոխուեցաւ հեղութեան և հաւատոյ ազատութեան կանոնը։ Կայսրն Միքայէլ (842-867) աթոռ նստելու օրը վերանորոգեց Մանիքեցւոց սպանելու բոլոր օրէնքները։ Թէ ժամանակից յետոյ Գատշալկ բեներդիկտեան կարգի վարդապետը սկսեց քարոզել նախասահմանութեան սուտ ուսումը, որի մէջ կային երեսուն եպիսկոպոսներ և աբբաներ, վՀռեց ծեծել՝ նրան և բանտարկել։ Դա դարի սկիզբին դուրս եկան Օրլեանումը և Ֆրանսիայի ուրիշ քաղաքներումը էնպիսի հերետիկոսներ, որոնք համաձայն էին Մանիքեցւոց. իսկոյն ժողով հաւաքուեցաւ և հերետիկոսներին դատապարտեց այրել քաղաքական իշխանութեան ձեռքով. և ողորմելիքը ստացան էն պատիժը, որը որ սահմանել էին եպիսկոպոսները։

Թէ ժամանակից յետոյ Հռովմէական արքունիքը հերետիկոսաց հալածումը Ս. ստուգածային պաշտօնի կարգը դրեց, և ոչ որ յօժարութիւն ցոյց կըտար այն գործին օգնելու, ստանում էր

Խորոնէնցէոյ (1)։ Այս՝ և սրա նման շատ օրինակներ ցոյց են տալիս, թէ դեռ էն ժամանակումը որքան հեռի էին քրիստոնէութեան առաջին երկու դարերի Հանապարհից։ Կամաց կամաց մոցնում էին քրիստոնեայ թագաւորների սրտումը էն խորհուրդը, թէ պէտք է Կոնկիլիոյեցոյ սահմանել, որի նպատակը լինի բառնալ հերետիկոսները և ուրացեալները։

Դապէս էր ժողովրդեան մտաց դրութիւնը չորրորդ շրջանումը, երբոր մեծանուն Հիլդեբրանդը նստաւ պապի աթոռը Գրիգորի Է անուամբ։ Ամենայն քրիստոնեայ թագաւորների իշխանութիւնից դերագանց իշխանութիւնը, որ սեպհականեց պապը իրան, թէ և ուղղակի հակառակ էր աւետարանին, իսկապէս հատաւ մինչև էն ծայրը, որը որ իւր նախորդներումն անյայտ էր։ Գրիգոր պապը եկեղեցուց մերժեց դերմանացւոց կայսր Հենրիկոսին, որին որ ապատամբ Սաքսոնցիք անուանեցին հերետիկոս, նրա հպատակներին երդման պարտաւորութիւնից արձակեց և հրամայեց ուրիշ թագաւոր ընտրել։ Արդար և տգիտութեան մառախուղը թանձր պատկած էր էս ժամանակների վրայ, և չէր թողնում ոչ թագաւորներին, ոչ եպիսկոպոսներին որ պապի և նրա ժք դաքու յոյժորդների բանադրելու իրաւանց չարաչար գործածութեան դէմ զլխուորին։

Դատող հարկաւոր է գիտել, թէ արևմտեան եկեղեցին քրիստոնեութեան մէջ էր կայսերումից բաժանուելից մինչև ժք դարը։ Թէ պատահում էր խաղաղութեան վրդովումը, ոչ հերետիկոսները, ոչ հերետիկոսութիւնը երևելի պատուղներ չէին ունենում։ Բայց երբ պապերի և կայսերաց մէջ իրաց միաձայնութիւնը վերացաւ, շուտով սկսան վէճերը, և արևմտեան խաղաղութիւնը շլոթեցաւ. պապերը և նրանց անթիւ կամակատարները սկսան իրանց ամենայն դիտաւորութիւնը և անձնական նպատակները սարածել եկեղեցւոյ անունով. և ընդ հակառակը կայսերները ամենազաղտը հնտևում էին էս զօրութիւնը տկարացնել և դնել սահ-

---

(1) Խորոնէնցէոյ Հռովմայ քահանայապետին առաջ ապստամբեցին էր, որով քահանայապետը թողութիւն էր տալիս անցեալ, ներկայ նա և ապառնի մեղքերումն։

Դան. Խորկ.

մանի մէջ։ Այս կռիւը ծնող եղաւ Արտօնեան, Ալտղենեան, Աղբիզեան և այլ հերետիկոսութեանց, որոնք շատ վատանդաւոր էին պատուական իշխանութեան, ինքնուրոյն որ սրանցից առաջ իւրաքանչիւր հերետիկոսութիւնները բոլորը կռուում էին հաւատոյ մասանց վրայ. իսկ ժամանակ դարու հերետիկոսները յարձակւում էին հոգևորականաց բարոյականութեան, ուսման և մանաւանդ նրանց արտօնութեանց վրայ։

Ինչպէս հերետիկոսութիւնը վնասում էր պատերի համար. ինքնուրոյն համար նրանք էդ նպատակին հասնելու ոչ ինչ չէին խնայում. նրանք բաւական չէին համարում սաստիկ հետաքրքրութիւնը, ապա՝ համարձակութեան և արգելել թագաւորներին, իրենց վասալներին, պահել իրանց տէրութեան մէջ հերետիկոսներ և առիթում էին աքսորել նրանց։

Այսպէս ամէն բան յայտնի պատրաստում էր կարգել Ինկվիզիցիայ։ Խաչակրաց պատերազմի ժամանակուայ դպրութիւնները, որոնք մնում էին մարդկանց մէջ, վերացրին էն մանր արգելքները էլ, որոնց որ պատերը կարային հանդիպիլ թագաւորների և եպիսկոպոսների կողմից։ Ժողովուրդը արդէն ընտելացել էր էն դատարկ կանոնին, թէ ոչ միայն թոյլատրեալ է պատերազմել Եկեղեցուոյ ուսմանց չըհամաձայնողների դէմ, այլ և նոյն իսկ պատերազմը կըհամարուի արժանաւոր ծառայութիւն։

Ռոմէական քահանայապետանները հրամայեցին հրատարակել խաչակրաց պատերազմ մահմեդականաց դէմ, բայց էդ բաւական չըհամարեցին. նոքա հաճում էին ժողովրդին զինուորել հերետիկոսաց դէմ, որոնք բնակւում էին քրիստոնեայ տէրութեան մէջ և բռնադրած էին նրանց։ Աղէքսանդր Զ-ը պապը՝ էլ առաջ գնաց։ Նա Ֆրանսիայ դեսպան ուղարկեց Կարլոսի Աղբալին, որ շարունակեն հերետիկոսաց դէմ պատերազմը, և էս Աղբան թուրը ձեռին գլուխ դառաւ Ֆրանսական զօրքին, և Ֆրանսիայի աշխարհը լցուց կրակով և աւերածով։

Բայց այս խաչակրաց պատերազմը բնաւ հաճելի չէր ազգի դիտաւորութեանը։ Իսկ Աղբան շատ ուզում էր յայտնել էշնամիներին, բայց պատերը էն էլ, ինչ որ միշտ լինում է, նեղացած բանակութեան մէջ, այս ինքն, հակառակորդներ փոխ ունակ ակարանալու, այնքան սասանութիւնից դադարն աւելի վատանալու։ Ուստի և սաստիկ նեղութեամբ Աղբիկցուց։ Այդ ինքնին

և Լիոնի աղքատների ընդդիմութիւնից և առ հասարակ բոլոր Նարբոնեան Գաղղիոյ հերետիկոսներից, ժողով գումարեց 1184 ին Լիոնումը, ուր ներկայ գտնուել խոստացաւ և Ֆրիդերիկոս Ա։

Ժողովը սկսեց գործածել հերետիկոսաց դէմ սաստիկ հնարքներ. նա սահմանեց, որ կոմսերը, բարոնները և այլ ամենայն ազատիչխանաւորները երդմամբ պարտաւորին ամենայն զօրութեամբ օգնել եկեղեցւոյն երկնչելով բանադրանքից և իրանց կայքից և ազատիչխանից զրկուելից. որ ամենայն հասարակ մարդիք էլ երդում անեն մատնել եպիսկոպոսին կամ նրա փոխանորդներին ամենայն հերետիկոսութեան կասկածաւորներին, և բոլոր նրանցից ծածուկ ժողով ունողներին. որ եպիսկոպոսները իրանք տարին երկու անգամ մանգան իրանց վիճակի քաղաքներումը և գիւղերումը և փնտրեն հերետիկոսներ. որ մատնեն քաղաքական դատարանի էն մարդկանց, որոնց համար եպիսկոպոսը կ'ասէ թէ հերետիկոս են, և որոնք չեն խոստովանիլ իրանց յանցանքը. և վերջապէս որ յայտնի հերետիկոսները յաւիտեան զրկուին իրանց պատուից և ազատիչխանից։ Դա կանոնների զօրութիւնով և պապի խրատներից դեսպանի ուխտմամբը Ալբրակոնից Թագաւոր Ալֆոնս Բ Իսպանիումը հրամայեց Պալատեաններին, Լիոնի աղքատներին և այլ ամենայն հերետիկոսներին առանց զանազանութեան աքսորել իրանց կալուածներից, արգելեց իրա հպատակներին տալ նրանց բնակութեան տեղ երկնչելով էն պատիժից, որ սահմանած է Թագաւորի դէմ յանցաւորների համար, զրկելով միանգամայն կայքից էլ։ Երեք տարիից յետոյ էս կարգադրութիւնները կրկին հաստատեց նրա որդի Պետրոս Բ, որը որ վերի գրածի վրայ աւելցրուց հերետիկոսների հետ վարուիլ ամենայն անարդանքով, բաց 'ի մեռցնելից և վերաւորելից։

Պերանից ժողովքին կանոնիկական սահմանադրութիւնը պատճառ տուաւ մին քանի պատմաբանների Ինկվիզիցիայի սկիզբը համարել 1184 թուից։ Իրաւի, էս կանոնադրութեան գլխաւոր միտքը հենց դրա էս դատարանի, բայց եթէ նկատենք թէ էս ժողովը դեռ պարտաւորում էր եպիսկոպոսներին պաշտպանել հաւատը, յայտնի տեսնում ենք որ պատմիչները սխալուել են։ Պերանից ժողովը սահմանեց միայն էն՝ ինչ որ անշուշտ համարում էր հարկաւոր հերետիկոսներին հալածելու համար, մնացել էր սահմանել նոր հոգևորական կարգ, եպիսկոպոսներից ջոկ. սպիսպել որ նրանք գտնեն և հալածեն հերետիկոսներին անընդմիջական պաշտ-

պանութեամբ պապերի. այնպէս կազմել էս կարգը, որ թագաւորները և ուրիշ իշխանները հնազանդին նրան, վախենալով քանդարդանքից և իշխանութիւնից զրկուելից։ Այս կարգը հաստատուեցաւ ժդ դարի սկիզբումը։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

Ընդհանրական Ինքնիշխանի հաստատելը։

Գ Ինոկենտիոսի պապական գահը բարձրանալը 1198 թուին Ինկվիզիցիայի պատմութեան երևելի դարն է։ Այս պապը ունէր ընդունակութիւն ոչ միայն եկեղեցւոյ ընդարձակ նոր կարգը պաշտպանելու, այլև նրան տարածելու և հաստատելու մինչև էնատեղ, որ իրա նախորդներուն բոլոր միտքերը ընդունեցին հաստատ ձև։ Տեսնելով թէ Ալբիգոյնեանց հերետիկութիւնը ծիծաղում է պապական կոնդակների վրայ, և անբաւական լինելով եպիսկոպոսների կարգադրութիւնից Ֆրանսիոյ ժողովի կարգադրութիւններ կատարելումը, նա վստահացաւ ուղարկել նրանց տեղը ատիճանաւորներ՝ բառնալ էն չարութիւնը, որը որ ջրկարացին եպիսկոպոսները տանել։ և թէպէտ նա ջրկաթաց էս վերջիններից խլել հերետիկաց վերաբերեալ դրածց դիտութիւնը, այլ դատաւ հնարը բառնալ եպիսկոպոսաց հեղինակութիւնը։ Նրինչելով, որ ապրած հնարքները եպիսկոպոսների կողմից չըհանդիպին սատակ ընդդիմութեան, Ինոկենտիոս փ ջրկարաց հաղորդել Ինկվիզիցիային ոչ ձև և ոչ հաստատութիւն մշտնջենաւոր և հոգևորական կարգի։ Նա բառական համարեց կարգել մանաւոր ժողով, հաստատ հաւատալով, թէ ժամանակը կըհատարէ նրա գործը և կըտայ նրան անյաղթելի զօրութիւն։

Այսպէս դիտաւորութիւնով էս քահանայապետը 1207 թուին զրկեց երկու կրօնաւորները Սիստրի աբբայութիւնից (Ցիստէ։-

Նէռն գաղղիական) Պետրոս Կաստելնաուին և Ռուսլին քարոզ տալ Ս. Լուսաւորչեան հերետիկոսութեան դէմ. և նոքա խոսքութեամբ կատարեցին այս յանձնարարութիւնը։ Այն ժամանակը պապը վատահացաւ յարմար ժամանակը ձեռքից չընթացնել, սահմանեալ կարծելով նիզակը Ինկվիզիցիոն արնեալ անիրաւ եպիսկոպոսներից - իրաւամբ հերետիկոսները հալածելու։ Նա՝ Սիմոն Ս. Բրոյին և Պետրոս և Ռուսլ կրօնաւորներին ձեռնադրեց առաքելական դեսպան։ Տուեց նոցանց լիակատար իշխանութիւն գործածել ամէն հնարքներ, որ հարկաւոր համարին հերետիկոսներին Կաթոլիկութիւն դարձնելու համար. քանդել ամէն անհաւատներին և մատնել մարմնաւոր դատաստանի. այս պատճառով հետևիւսին էր կոյս քիսի խլելը և հերետիկոսների արտաքսը։

Յանձնելով այնքան ընդարձակ իշխանութիւն Սիմոն վանահօրը և երկու կրօնաւորներին, հրաման տուեց նա Ֆրանսայի թագաւոր Ֆիլիպպոսին և նրա մեծ որդի Լուդովիկոսին, կոմսերին, դուքսերին և տէրութեան բարոնները, որ՝ նրանք հերետիկոսներին հալածեն և բոլոր նրանց պաշտպանների կոյս քը խլեն։ Ս. Յակոբի ջերմեռանդութեան վարձ խոստացաւ կատարեալ ինդուլգենցիա, որը որ տրուած էր էն քրիստոնեաներին, որոնք գնացած էին սուրբ երկիրը անհաւատների հետ պատերազմելու։

Ֆիլիպպոսը շատ սաստն ընդունեց էս հրամանը և գործ չդրաւ ոչ մին հնարք էդ գործումը։ Միւս կողմից Տուլուզից, Ֆոայից, Բեզից, Կասկասոնի և Կոմենի կոմսերը, սեռնելով թէ Ս. Լուսաւորչեանք անչափ տարածուած են, հրաժարեցան արտաքսել իրանց խաղաղ և հնազանդ հպատակներին, վախենալով իրանց երկրի բազմամարդութիւնը տկարացնել, և ցամքեցնել իրանց բարգաւաճեան աղբիւրները։ Բայց պապի դեսպանների ջանքերը աւելի նուազում էին եպիսկոպոսների կողմից իրած ապոլոգիներից, որոնց էս դեսպանութիւնը շատ անուախրժ էր, և պրոպէս Սիմոնի կրօնաւորները չկարացին յաստիճանութիւն ցոյց տալ, ասկոյն էս քանի անցաւորութեանց դիմաւորով նրանք չէին կարցնում իրանց արիութիւնը և շարունակում էին հերետիկոսների հալածումը, վերատնելով իրանց կարգից երկու կրօնաւոր էլ և երկու հոխանդ յոյլ Խարարեցիներ (որոնք յետոյ երեսուն Խարարեցի դարձան, Ռոմի կոյս Ասարեա Ֆանգի եպիսկոպոսին և Ռամիրեի Կոնցիլիին, արիւն ու կաթոլիկներ արոյ հարդ դարձան

Այս միջոցումը Պրավանսի և Գասքոնիայի Գասոզ եպիսկ իշխան-

նելը պապի հրամանները կատարում էին ծանր և կէս կտուր. նրանցից ամենից հզօրը Տուլուզի Կոմն է։ Բայմունտը համարեա թէ ծիծաղում էր էս հրամանների վրայ։ Պետրոս Կաստել-Նաու Պեսպանը անդադար ապառնում էր նրան բանադրել, բայց ժամանակ չ'ունեցաւ իրա ապառնալիքը կատարել, որովհետև Ալբիգոյանք իրան շուտ սպանեցին. ժողովրդեան բռնութիւնը պատճառուեց պապին ժողովել երկրորդ խաչակրաց պատերազմ հերետիկոսաց դէմ և մանաւանդ Տուլուզեոյ Կոմսի դէմ։

Ահա այս երկրորդ պատերազմի ժամանակումը կարծւում է թէ սկսուել է Ինկվիզիցիան, որը որ պտղը երկար ժամանակ պատրաստում էր իրա գործակալների ձեռքով. նոյն գործակալները, որոնց հետ միացան Դոմինիկը և մին քանի քահանաներ, Ընտրելագեսպանից ստացան իշխանութիւն ոչ միայն քարոզել խաչակրաց պատերազմ հերետիկոսների դէմ, այլ և աչք բռնել էն մարդկերանց վրայ, որոնք նրանց շրջելուն կը հաւակուին, վերահասու լինել նրանց հաւատին, ընդունել զղջացող հերետիկոսներին, իսկ կամակորներին մատնել Մոնֆորտեոյ կոմս Սիմոնին, որ խաչակրաց պատերազմի կարգադրիչն էր։

Ուրեմն կարելի է հաստատ ասել, թէ Ինկվիզիցիան սաղբուեցաւ Ֆրանսիումը 1208 ին։ Փիլիպոսի թագաւորութեան և Ինոկենտիոսի քահանայապետութեան ժամանակը։ Յետոյ կը տեսնենք թէ էս քրիստոնէութեան հակառակ դատարանը անցկացաւ Ալբիան և Պիրենեան սարերի էն կողմը, ամէն տեղ ունէր անսահման իշխանութիւն և ահ ու դող ձգեց թագաւորների և ժողովուրդների վրայ։ Այսպէս չարագործութեան սաղարիզումը առաջին քայլը, որուն առաջքը մին բանով չ'առնուեցաւ, բերում է ամբողջ շարք կրօնական հետևանքների։ Եթէ Բոլոնիայի մօտ յաղթողը, որը որ բարի դիտաւորութիւն ունէր գործակից չըլինել պապի դիտաւորութեանը, և որ չէր հաճում պաշտպանել էն դեսպաններին, որոնք հալածում էին հերետիկոսներին, արտաքսէր ֆանատիկ քարոզիչներին, որոնք մտցրին նրա տէրութեան մէջ ընտանի պատերազմի կրակը, կարելի է պապերը երբէք չէին համարձակուիլ իրել եպիսկոպոսների ձեռքից հերետիկոսաց յանցանքներին վերահասու լինելու իրաւունքը, և Ինկվիզիցիան՝ թէ ժամանակաւորը և թէ հաստատը՝ երբէք չէր կարող կատարել իրա զարհուրելի ծառայութիւնը։

Եթէ շատ հեշտ չէ կարելի իմանալ ողորմելի Ալբիգոյանաց

թիւը, որոնք էս դարուն մը վիշացան կրակի մէջ, գոնեա՛ չէ կա-
րելի խորը արտից չըշարժել կարդալով էն ժամանակի պատմութիւնը,
երբ հաղարներով դատապարտուեցան մեռնել անտանելի տանջան-
քներով 'ի վառս էն հաւատքի, որուն մեր վրկիչը աւանդեց հե-
ղութեան և գթութեան բնութիւն։

Էն ժամանակը երբոր պատերազմը և Ալբիգոյնեանց դէմ
դեսպանութիւնը շարունակւում էին աւելի մեծ կատաղութեամբ,
Ս. Ինոկենտիոսը գումարեց երկրորդ ընդհանուր ժողով, որ կոչ-
ւում է չորրորդ Լատերանու ժողով։ Ինտեղ պապը ասաց նոր
հնարքներ հերետիկոսաց դէմ աւելի սաստիկագոյն և աւելի ընդարձակ
քան Երոնիոյ ժողովքի կանոնադրութիւնները։ Նշանակած Ինկվիզիթո-
ները ստացան լիակատար իրաւունք դործել համաձայնութիւն եպիսկոպոս-
ների և առանց նրանց, ինչպէս որ առաջ էր, բայց մահը կտրեց
պապի կեանքը և թոյլ չըտուաւ նրան, որ եպիսկոպոսական Ինկվի-
զիցիայից զոկ ուղարկած Ինկվիզիցիային տար հաստատուն և անխոտոր-
ձև, որը որ Ինկվիզիցիան յետոյ ստացաւ յաջորդ պապերից։

Ինոկենտիոսի մահից մինչ քանի ամիս առաջ Հոնորիոսը,
որին պապը սիրում էր հերետիկոսները հալածելու նախանձա-
յուզութեան համար, հրաման խնդրեց նրանից կրօնաւորական նոր
կարգ սահմանել, որի պաշտօնը լինի քարոզել հերետիկոսաց դէմ,
պապը ուրախութեամբ ընդունեց էս առաջարկութիւնը և Հոնո-
նիկոսը գրեց իրա դաղափարները և տուաւ էս նոր կարգին սրբոյն
Դոմինիկոսի կանոնները։

Դոմինիկոս նամանավէս կարգեց Բրիեպոսի գ Ինոսոյ՝, որի յաջոր-
դները յետոյ շատ զարհուրելի դառան Ինկվիզիցիի էպիսկոպոս անուամբ։

Ինոկենտիոս ճ անբաւական լինելով եպիսկոպոսների և
նրանց ատենաւորների սառնութիւնից, յոյս ունէր, թէ էն ա-
մենայն յատկութիւնները, որոնք հարկաւոր էին իրա նպատակին
հասնելու համար, կըգտնի նոր կարգած Դոմինիկեան կարգի
կրօնաւորների մէջ։ Ոգեւորական անձինքը՝ որոնց նա մտադիր էր
յանձնել հուսաստոյ վերաբերեալ գործոյ հերետիկութեան պաշ-
տօնը, պէտք էր որ բոլորովին կախուած լինին Հռոմայ գահից, և
բոլորովին նրա օգտին անձնատուր լինին. Դոմինիկեանք ունէին
Հռոմի հետ անսահման մտերմութիւն։ Պապի համար հարկաւոր
էին ամենայն պաշտօնից ազատ անձինք, որոնց ջանքը միւս նոյն նպա-
տակին դիմէր. Դոմինիկեանք ուխտ դրին լուռ և միայն մնալ և

սկսան տխրել։ Նրանց հրամայեցին իրանց բոլոր ժամանակը դործ ածել հերետիկոսների հետաքննութեան համար։ Ինկվիզիցիոնները պէտք է լինէին հասարակութեան աչքումը անենչան մարդիկ, որ այսպոր կոչումը նրանց տար էն պատիւը, որոնք ուրիշ հոգևորականները չէին ցանկանում։ Ողորմութիւնը, վանքերի աղքատութիւնը և մանաւանդ մուրացկանութիւնը և անարդութիւնը - որոնք էին դոմինիկեանների ուխտը - ատիպում էին նրանց՝ մանկ տալ Ինկվիզիցիոնների պաշտօնին իրրև ցանկալի պաշտօնի, որ կարող էր բաւականացնել նրանց արտաքին վատութիւնը։ Հարկաւոր էին նրանց այնպիսի մարդիկ՝ որք չունենային ոչ ազգական, ոչ կապակցութիւն, ոչ յարաբերութիւն և ոչ որի մօտ սէր։ Դոմինիկեանների ազգային անունից հրաժարուիլը վասն երդմնաւորութիւն էր, թէ բնութեան և ազգակցութեան զգացմունքը չեն կարող նրանց մօտենալ։ Հարկաւոր էին նրանց անգութ, անկողոքում և անխնամ մարդիկ, որովհետև ապրում էր առաջնորդներից աւելի ստատիկ դատարան։ Դոմինիկեանների խստաբարոյ կանոնները և ստատիկ պահեցողութիւնները չէին կարող գցել նրանց սրտումը մերձաւորի վրայ գութ. նրանց սրտումը՝ որոնք կեանքին էլ չէին խնայում։ Հարկաւոր էին հաւատոյ նախանձայոյզներ. - Դոմինիկեանները էին յատուկ նախանձայոյզք գոնեա այնքան, որքան կարելի է լինել նոր հաստատուած կարգի մէջ։ Հարկաւոր էին քիչ հասկացող կամ աւելի չքաւորած անձինք։ Այս կրօնաւորները գլուխ էին միայն աբբայական ուսումն և նոր կանոնիկեան իրաւունքը։ Վերջապէս ընտրեալները պէտք էին ցանկալ հերետիկոսների ջնջելուն մէկ առանձին պատճառաւ. Դոմինիկեանները խստացանկանում էին հերետիկոսների կորուստը, որոնք բռնքում էին նրանց վրայ և անխնայ հետևում էին հասարակութեան աչքումը նրանց խայտառակել։

Այս էսպէս - պապը գտաւ էս կրօնաւորներումը ամենայն ուզածները, որոնք հարկաւոր էին Ինկվիզիցիոնների համար, և յանձնեց նրանց էն պաշտօնը առանց կասկածի։ Կրտեանենք, թէ ինչպէս շուտով դերազանցեցին նրանք քան զպապի յոյսը։

Գ. Ամորիոս Ինոսենտիոսի յաջորդը այնպէս դուհ էր Գրոմինիկոսի և նրա վարքերի վարքից, որ հաստատեց տարածել էդ կարգը ամենայն քրիստոնեայ տէրութեանց մէջ, և Գրոմինիկեանք քիչ քիչ տարածուեցան Իսպանիումը և Իտալիումը։

Պատմութիւնը չէ ասում, թէ Ինկվիզիցիան մուտ Իտալիոյ Դոմինիկոսի յայտնուելու ժամանակը, ինչպէս հաստատում են մեր քանի պատմիչներ. նա ընդ հակառակը մուտ միայն 1232 թուին, ինչպէս կըտեսնենք յետոյ։ Այդ ամենից ճշմարիտը էն է, որ 1221 ին, երբոր հերետիկոսութեան նշանները երևեցան Հռովմայ մէջն էլ, Հոնորիոսը պարտաւորուեցաւ հրատարակել նոր կանոնադրութիւն Իտալիոյ հերետիկոսների դէմ, և խնդրեց Ի Ֆրիտերիկոս կայսրից էս կանոնադրութեանը օրէնքի զօրութիւն տալ։ Երբեք տարիից յետոյ Ինկվիզիցիան տարածուեցաւ բոլոր Իտալիոյ մէջ, բայց 'ի Վենետիկոյ ըեսպուբլիկայից (հանրապետութենից), Նէապոլոյ և Սիկիլիոյ թագաւորութիւններից։ Որովհետև մեր գիտաւորութիւնը չէ Իտալիոյ Ինկվիզիցիի լիակատար պատմութիւնը գրել, վասն որոյ բերում ենք էստեղ միայն մէկ օրէնք, որն որ 1224 ին հրատարակեց հերետիկոսաց դէմ նոյն Ֆրիտերիկոս Ի Ձեռնասուն աշակերտը Ինոսենտիոսի Գ., և որն որ յայտնեց իրան պաշտպան Ինկվիզիցիոն օրէնքի։ Էս օրէնքը բաց 'ի ուրիշ խիստ կարգադրութիւններից բովանդակում էր հետևեալները։

1. Էն մարդիկը, որոնց եկեղեցին անուանել է հերետիկոս, և որոնք մատնուած են քաղաքական դատարանի, պէտք է պատժուին իրանց յանցանքի չափով։

2. Պատիժից վախենալով հաւատոյ միութեան դարձածը ընկնի եկեղեցական ապաշխարանքի տակ, յաւիտեան բանտի մէջ մնալով։

3. Էն հերետիկոսին, որ կըգտնուի թագաւորութեան որ և իցէ մասումը, Ինկվիզիցիոն օրէնքը կամ ջերմեռանդ ուղղափառները կարող են մատնել դատաւորներին, բանտարկել և պահապանների պահել էնքան ժամանակ, մինչև որ առելին եկեղեցուց դուրս գցուի, դատապարտուի և մահի մատնուի։

4. Հերետիկոսների թաքցնողները և կողմնապահները ընկնին նոյն պատիժի տակ։

5. Մահը տեսնելիս հերետիկոսութիւնից զղջացողը, և առողջանալից յետոյ կրկին մոլորութեան մէջ ընկնողը դատապարտուի նոյն օրինակ պատիժով։

6. Ստուած հայհոյելու յանցանքը երկրաւոր թագաւորի հայհոյելից մեծ է. և Ստուած պատժում է ոդիքը հոր յանցանքի համար. էնդուր համար հերետիկոսի ոդիքն էլ մինչև երբ-

կրոդ սերունդը՝ չեն կարող մանել աղքունի ծառայութիւն, և հանել պատուի բաց 'ի են որդիներանցից ,որոնք կ'ուրանան իրանց ծնողքը։

Ինկվիզիցիան ամէն տեղ, ուր որ սաղքուում էր, սատանում էր շատ զարհուրելի կերպ։ բայց դեռ հաստատուն դատարան չէր դառել, ինչպէս նրա հաստատող պապերի նպատակն էր։ Ի Գրիգորիոս պապը այնքան մեծ նախանձայուղութեամբ ջանք էր անում Ինկվիզիցիայի օգտի համար, մինչև որ վերջապէս կարաց նրան հաստատուն դատարան շինել։ Իրեւ ջերմեռանդ պաշտպան Ամինիկոսի և մտերիմ ընկեր Ֆրանչիսկոս Ասիզցոյ, նա հաստատեց Ամինիկեան կրօնաւորներին Ինկվիզիցիոյի պաշտօնի մէջ և միացրուց նրանց հետ Ֆրանչիսկեաններին, ուղղելով նրանց էն երկիրները, ուր տեղ Ամինիկեանները չը կային, կարգելով նրանց Ամինիկեաններին աշխատակից լինելու համար։

Այն ժամանակը երբոր Ինկվիզիցիաները հետաքրքրում էին հերետիկոսներին Ֆրանսիումը և Իտալիումը, պապի դեսպանները եռանդ ժողովքներ էին գումարում Տուլուզիայումը, Մելանիայումը և Ռէգիսումը, որոնց մէջ ներգում էին հերետիկոսաց դէմ հրաբանները, որոնք առաջ հաստատուած էին Ալբիգոյումը և Լանգրեդոկ ի ժողովումը, անդադար աւելացնելով նրանց վրայ ուրիշ պապից թոյլատրած և Ինկվիզիցիաների անգութ ձեռքով գրած խիստ կանոնները։ Այս նոր կանոնների բուն միտքը հետագայքս են։

1. Ամենայն տան և չորս տարեկան տղերք և տան երկու տարեկան աղջկերք երդումով պարտաւորուում են հետաքրքիր լինել հերետիկոսներին, իսկ եթէ չը համաձայնին, հերետիկոսութեան կարծիքի տակ են։

2. Ով որ տարին երեք անգամ անխափան խոստովանութեան չէ ներկայանալ՝ նմանապէս հերետիկոսութեան կարծիքի տակ է։

3. Այն քաղաքը, ուր տեղ յայտնուում է հերետիկոս, որ տակաւին չ' գտնուլին վճարել մէկ արծաթի մարքա (դրամ) ամէն մին յայտնած հերետիկոսի համար։

4. Այն տունը, ուր տեղ թաքցրած է լինել հերետիկոս, հիմքից քանդուի։

5. Հերետիկոսների և նրանց մատնակիցների կայքը խլուի և նրանց որդիքը ամենևին իրաւունք չ'ունենան մատն պահանջելու։

6. Իրա կամքով դարձած Հերետիկոսը իրաւունք չ'ունեցայ բնակիլ իրա Հայրենիքումը։

7. Հերետիկոսները պարտաւոր են կրել իրանց շորերի վրայ երկու դեղին խաչ. մինը կուրծքի վրայ և մինը մէջքի վրայ, որ կարելի լինի ճանաչել նրանց ուղղափառներից։

8. Վերջապէս աշխարհականներից ոչ ոք չը համարձակուի կարդալ Աստուածաշունչը իրա Հայրենի լեզուաւ։

Թ. Գրիգորի համար բաւական չ'էլաւ հրատարակել ժողովները եւ սատանի եկեղեցական կանոնները, այլ 1231 ին հրատարակեց հերետիկոսաց դէմ ղարհուրելի կոնդակ, որ նրանց բոլորին քանդումի էր, և հրամայում էր մատնել մարմնաւոր դատարանի իրանց յանցանքի չափով պատիժ ստանալու համար։

Այս բոլոր կարգադրութիւնները, որոնք կատարւում էին սուրբ Լուդովիկոսի և Գ. Ֆիլիպերիկոս կայսեր պաշտպանութեամբ, տուին Ինկվիզիցիոր կրօնաւորներին և նոյն իսկ Ինկվիզիցիին այնպիսի ձև և բնութիւն, որն որ դերազանց էր եկեղեցւոյ ամենայն ակնկալութիւնից, և որոնք իսկութեամբ անչափ մեծացրին պապերի աշխարհական իշխանութիւնը։

Այս դարումը Ֆրանսիան և Իտալիան ընկան Ինկվիզիցիայի տաժանելի լուծի տակ։ Նոյն ինքն Նէապօլսոյ թագաւորը ընդունեց նրան իրա տերութեան մէջ։ Գ. Գրիգորին մնացել էր միայն հաստատել Ինկվիզիցիան Իսպանիումը. ժամանակը շատ յարմար էր, և պապը ձեռքից չը թողուց նրան։ Տգիտութիւնը և Ֆանատիզմը Ինկվիզիցիան հրաւիրեցին Պիրենեան սարի էն կողմը. նա արձակաբայլ թռաւ սարի էն կողմը և տարաւ իրա հետ իրա բարբարոսական կանոնգիրքը, և թեւերը քաց արաւ էն սիրուն երկրների վրայ, որոնք յետոյ դարձան դլխաւոր տեսարան նորա արիւնահեղ կարգադրութիւնների։

ԱՌԱՋ ԵՐԿՐՈՐԴ։

ՀԻՆԵՆԻՈՅԻՑԻՆ ԻՍՊԱՆԻՈՅ։

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՄՈՒԱՋԻՆ։

Խոպոնիոյ մէջ Ինկվիզիցիոյն պատմութիւնը։

1231 թուին էն դարումը, երբոր Գրիգորը թ. կոնդակով հրատարակեց ամենայն հերետիկոսներուն վրայ բանադրանք, Խոպանիան բաժանուած էր չորս քրիստոնեայ թագաւորութիւն։ Կաստիլիոյ, որն որ շուտով մահմեդականները վիացրին Սեվիլլայի, Կորդուվի և Գրանադայի հետ։ Արքոգոնիոյ, որի թագաւորը շուտով տիրեց Վալենցիայի և Մայիորքայի։ Նաւարրայ և Պորթուգալիոյ։ Այս չորս քրիստոնեայ թագաւորութիւնների մէջ վաղուց կային Հռոմիկեանց վանքեր. և թէպէտ կարծուում են, թէ Ինկվիզիցիայ էլ կար, բայց ոչինչ գրաւոր ապացոյց չըկայ, թէ Ինկվիզիցիան իրած է Խոպանիոյ մէջ 1232 ից առաջ։ Այս թուին պապը ուղարկեց Տարրակոնիոյ Արքեպիսկոպոսին հրաման, որի մէջ գրած էր, թէ ինչպէս ինքը տեղեկանում է, հերետիկոսութիւնը ներս է մտել Խոպանիոյ մին քանի վիճակների մէջ, և էնդուր համար խրատում է Արքեպիսկոպոսներին և եպիսկոպոսներին մոլորութեան տարածուելու դէմ առնել, վնտրելով և վնտրել տալով հերետիկոսներին և նրանց մասնակիցներին համաձայն 1231 թուի կոնդակին։

Տարրակոնիոյ Արքեպիսկոպոսը հաղորդեց էն կոնդակը Հռոմինիկեանց գլխաւոր Ոդրիկեց Էլլատարէսին, որի իշխանութիւնը տարածուած էր նոյն տէրութեան՝ չորս քրիստոնեայ թերակղզիների վրայ։ Սա կարդեց իրա կրօնաւորներից մին քանի աբեղաները, որոնք

ինքը ընդունակ էր համարում Կոնկորդիայի պաշտօնը կատարելու։ Պապի կոնդակը ուղարկուեցաւ նմանապէս Երիտոյ եպիսկոպոսին, որ շուտով կատարեց հրամանը և իրա վիճակումն էլ կարգեց առաջին Խալանիական Կոնկորդիան։ Ուրգելեայի եպիսկոպոսն էլ մեծ ջանքով հետևեցաւ նորա օրինակին. բայց էստեղ Ռոմինիկեան Կոնկորդիթ որ Պետրոս Պլանէտիսը կեանքը վէր դրեց էս պաշտօնի համար։ Կամաց կամաց Կոնկորդիան իրա լուծի տակն առաւ բոլոր Կատալոնիան և բոլոր Արրագոնիան։

Անյարմար չի լինիլ էստեղ նկատել, թէ թէպէտ այս ժէ դարումը ժողովուրդը շատ տգէտ և շատ մոլեռաշտ էր, սակայն Կոնկորդիան ամէն տեղ հանդիպում էր արիւնահեղ ընդդիմութիւնի։ Ան ատելութիւնը, որը որ ամէն տեղ Կոնկորդիթօրների արհեստը ժողովրդի որտումը սերմանում էր, ենթարկեց շատ Ռոմինիկեան, նաև Ֆրանչիսկեան կրօնաւորների արիւնահեղ մահի։ Մենք գիտենք արդէն, թէ ինչպէս Սիդոյի Արբան մեռաւ Արիզոնեանների ձեռքից։ Կոնկորդիայի առաջին խիստ ընթացքը Իսպանիոյ մէջ Ռոմինիկեան Պետրոս Պլանէտիսի մահուան պատճառ էլաւ։ Յետոյ կըտեսնենք Իսպանիացիներ, որոնք քարկոծեցին Կոնկորդիթօրներին, նաև սպանեցին սեղանի առաջը դաշնակներով (խանչալով)։ Հէնց Կոնկորդիան հաստատուեցաւ Կատալոնիայումը, Տարրագոնիոյ Արքեպիսկոպոսը գաւառական ժողովք գումարեց, ուր սահմանեց հնարքներ հերետիկոսաց հետևարուելու, և նշանակեց եկեղեցական ապաշխարանքի կանոնները դարձողների համար։ Սահմանուեցաւ անզեղջներին մատնել մամնաւոր դատարանի, որ պատժէին գլխապարտութեան պատիժով։ Եկեղեցւոյ գիրքը կրկին ընկալածներին տարը տարի շարունակ ամէն կիրակի կանգնեցնել եկեղեցւոյ դրանը ապաշխարողի շորերով, որի վրայ կարած էին երկու խաչ այլ և այլ գուներով։

Ինոսկենտիոս Գ. Կոնկորդիայի նախանձայոյզ պաշտպանը՝ ինչպէս իրա նախորդները՝ աւելացրուց Կոնկորդիթօրների իրաւունքները, հրամայելով նրանց խլել կայքերը, աստիճանները և պատիւները, ոչ միայն հերետիկոսներից, այլ և նրանց պաշտպաններից, մատնակիցներից և թաքցնողներից։

Կոնկորդիթօրները պաշտպանած լինելով պապերից, Արրագոնիոյ թագաւորից և Ֆրանսիոյ թագաւոր Ը. Լուդովիկոսից, սկսեցին մանր հետազօտութիւններ անել, ոչ միայն Կենդանի հե-

բեռիկատաց դէմ, այլ և վաղուց թագած մեռելների հոգերու դէմ։ Փոքրելով դերեզմանները դուրս հանեցին Ռոնսլաի, կոմս Ֆորկալքիէի, Ուրդելի և ուրիշ շատերի ոսկորները և այրեցին փայտակուտի վրայ։ Տես, թէ ուր էր հասել Ֆանատիզմը, մինչև որ ակռեցին մեռելներին էլ հալածել։

Ինկվիզիցիայի այսպիսի գործերը էս դարումը, որոնք խայտառակութեան ստուեր տարածեցին երևելի դերդաստանների վրայ, Ինկվիզիթոր Պետրոս Կատիրետի մահուան պատճառ եղան։ Ժողովուրդը քարկոծեց նրան։ Ու թէպէտ շատ էր այն զոհերի թիւը, որոնք մատնուեցան սոսկալի դատարանի պաշտօնը կատարելիս, բայց այնու ամենայնիւ շատերը հետամուտ էին Ինկվիզիցիայի պաշտօնին, որովհետև փառասէր կրօնաւորը քաշած նեղութիւնների դէմ առատ վարձ էր ստանում խիստ ընդարձակ իշխանութիւնով, ատելանով և արտօնութիւնով, որոնք անգամ էին զանազան յանձնարարութիւններից և էնդուրով էլ, որ Ինկվիզիթորի վրայ աչք ունէին կառավարութիւնները, թագաւորները և եպիսկոպոսները։ Իմն հեշտ է հասկանալ, թէ ինչքան մեծ էր էն մարդը, որը որ ընտրում էր պաշտօնեանը այս դատարանի գործիք լինելու համար։ Իսպանիոյ մէջ հին Ինկվիզիցիայի հաստատուելու օրից մինչև ժէ դարի սկիզբը, բոլոր Թերակղզի մէջ միայն վիճակաւորը (Ռոմեռիէռ կարգից) իրաւունք ունէր կրօնաւորներից ընտրել Ինկվիզիթոր։ Բայց երբ որ այս հոգևորական կարգի վանքերը շատացան, նրանց առաջնորդը 1301 ին կարգադրեց, որ երկու վիճակ լինին, որոնց մէնը (Ռոպոնիկոն), պարունակելով Կաստիլիան և Լեոնդուգալիան, իսկ երկրորդը (Արրոֆոնիկոն) պարունակելով Վալենցիան, Կատալոնիան, Ռուսիլոնը, Էնդրանիան և Ռալէարեան կղզիների թագաւորութիւնները։ Թէպէտ այսպէս բաժանուեցաւ, բայց Իսպանիոյ վիճակաւորը չէր յօժարում իրա պատիւը երկու կատար անել, հետևակելով ասելանաւորներ Արրագոնիոյ վիճակաւորի խորհրդակցութեամբ։ Բայց վէճը երկար չըքաշեց. էն պատճառաւ Թերակղզի մէջ եղած երկու գլխաւոր վիճակային տեսուչները, որք ամէն տեղ ուղարկում էին մանաւոր Ինկվիզիթորներ, ուր որ հարկաւոր էին համարում, և ամէն տարի հրամայում էին տալքել ասիսո-դա-ֆէ քանի անգամ որ հարկաւոր լինէր։

Վէճ ժամանակից յետոյ, այսինքն 1308 ին, Ս. Կլէմէնտը հրաման գրեց Արրագոնիոյ, Կաստիլիոյ և Լեոնդուգալիոյ թագա-

ւորներին, և էս երկիրների Ինկվիզիցիաներին բանդարկել պաճպոչին-
ներին (պոմբլեէր), որոնք դեռ Հալածանաց տակ չէին ընկել, հերե-
տիկոսութեան մէջ կասկածաւորների պէս։ Ինկվիզիցիան առաջ
խլեց նրանց կայքը պապի հրամանի համաձայն, յետոյ ցրը-
ուեց նրանց զանազան վանքերի մէջ և սկսեց քննել նրանց հա-
ւատը և վարքը։ Մին քանիսը դարձան եկեղեցւոյ գիրկը, իսկ միւսները
մատնուեցան պատիժի, որոնց ողջ ցց թեթեւն էր աքսորը։

1314 ից երբ յայտնուեցան Ս. Բարդոնիոյ մէջ հերետիկոսները,
մինչև 1356 ը, երբ Ղոմինիկեան կարգից Նիկոլայ Ֆ. յմերիխը
Ինկվիզիցիոյ գլուխ դառաւ էս տէրութեան մէջ, պատմութիւնը
ասում է, թէ Ս. Բարդոնիոյ գլխաւոր Ինկվիզիցիաները և Կատա-
նիայի, Վալենցիայի, Մայորկայի, Բուսելիոնի և Յերոնայի մաս-
նաւոր քննիչները անդադար հալածում էին հերետիկոսներին և
հերետիկոսութեան մէջ կասկածաւորներին, և անդադար կատա-
րում էին ափդօ-դա-ֆէ հանդէսները։

Բրակի մատնած քսանչաղտների միջումը, որոնք էրուեցան Յա-
կոբ Թագաւորի և նորա երկու որդւոց առջևը, տեսնում ենք երկու
օրէնսուսուցիչներ՝ Պետրոս Ղուբան և Բոնատո, որոնք միանգամ
դարձել և կրկին ընկել էին հերետիկոսութեան մէջ։ Ս. յա դա-
րումը Ս. Բարդոնիոյ Ինկվիզիցիաներ Բոզելլի դատաւ Վ. Էնեստիոյ մէջ երը-
կու հերետիկոս, որոնք յետոյ ԷՀԻՊԷԴ անուանեցան։ Նրանց գլխա-
ւորը, որի անունն էր Յակոբ Ճշմարիտ, դատապարտուեցաւ մշտն-
ջենական բանտարկելութեան. նրա աշակերտները ետ դարձան նորա
աղանդից, բայց երեք անդարձ մեռածների սկզբանքը դեռնից
հանեցին և էրէցին։ Նոյն Ինկվիզիցիաներ Բոզելլեն շատ անգամ
հրամայեց ասս-դա-ֆէ կատարել Կատալոնիայումը և միայն
էն ժամանակը դադարեցաւ վայտակոյտ էրէլից, երբոր Ս. Ինոսենտիոսը
նորա նախանձայոյզ ծառայութեան համար տուեց նրան
կարդինալութեան աստիճան։

Սրա յաջորդ Նիկոլայ Ֆ. յմերիխը սկսեց իրա ծառայութիւնը
շատ Կատալոնացիներ և Ս. Բարդոնացիներ բանտարկելով, որոնց
համար հերետիկոսութեան կասկած կար, և համարեա թէ ողջ էին
դատապարտեց խայտառակ ապաշխարանքի։ Մի-ս տարին նրա հրա-
մանաւ կենդանւոյն էրուեցաւ Կալաբրիոյ քահանան, որ ապաշ-
խարանքից յետոյ կրկին ընկել էր հերետիկոսութեան մէջ։

Երբոր Ս. Բարդոնիոյ գլխաւոր Ինկվիզիցիոր Ֆ. յմերիխը էբրև

առաջնորդ Ինկվիզիցիոնների, այսպէս նախանձայուզութեամբ էր կատարում իրա պաշտօնը, նրա ընտրածները, որոնք ուղարկած էին նահանգները, հետևում էին նմանել նորա խստութեանը, և չէին դադարում աւտո - դա - ֆէ կրակները վառելուց։ Պատմութեան մէջ անմոռանալի է էն մեծ աւտո - դա - ֆէ, որ եղաւ 1360 ին Վալենցիայումը, էնքուր որ էս աւտո - դա - ֆէ մէջ դատապարտելոց թիւը անչափ շատ էր։ Այսմբիսը Պրագոնից դէպ արաւոր Ինկվիզիցիոնի պաշտօնը կատարեց մինչև մահը և ամենայն նահանգումը կարգում էր մանաւոր Ինկվիզիցիոներ. բայց ոչինչ դրաւոր չունայ, թէ Կաստիլիոյ վիճակաւորն էլ, որ ունէր Իսպանիոյ գլխաւոր Ինկվիզիցիոնի անուն, ունէր նոյն իրաւունքները։ Այս հանգամանքը ստիպում է կարծել, թէ հերետիկոսաւէ կամ հերձուած չէր մտել Կաստիլիայ, և էնքուր համար հարկաւոր չէին համարում Դոմինիկեան կրօնաւորներից օգնութիւն խնդրել։

Ժ.Ա. Գրիգորը մեռաւ 1378 թուին։ Նրա տեղը ընտրեցին Գ. Ուրբանոսին։ Մին քանի կարդինալներ էն ընտրութիւնից անբաւական լինելով, Ֆրանսից դուրս ժողովեցան և Գ. Կլէմենտոսին ընտրեցին պապ։ Էն ժամանակը ծագեցաւ արևմտեան մեծ հերձուածը և տևեց մինչև Կլէմենտոսի հրաժարիլը 1429 ին։ Դոմինիկեան կրօնաւորները, որոնք բնակուած էին Պորթուգալիումը, բաժանուեցան և սկսեցին կառավարուիլ Ուրբանոսի անձնաւորը առաջնորդներից, մեւանները հնազանդեցան Կլէմենտոսին։ Յետոյ խրաքանչիւր նոր պապ նմանապէս և նրա փոխանորդները նշանակում էին Ինկվիզիցիոր իրանց ընտրութիւնով, և էս պատճառաւ Ինկվիզիցիոների մէջ կար մեծ կռիւ։ Ասփսոս, որ Իսպանիացիք էս վէճերի ժամանակը իրանք էլ խաղաղ չէին, և ընդ հակառակը խրաքանչիւր Ինկվիզիցիոր համարեա թէ կրկնապատկում էր նախանձայուզութիւնը և խստութիւնը։ Դատակնիքները և սքսորանքը (պրոսկրիպցիոները) էնքան շատացան, որ տասն և հինգերորդ դարու կէսին զոհերի թիւը քիչ էր թուում Ինկվիզիցիայի աչքին, թէպէտ և մանաւոր կասկածն էլ բաւական էր ողբմելիներին կորցնելու համար։

Այս դարումը պապերը սարքեցին Աւիգնիոնումը և Վալենցիումը նոր Ինկվիզիցիայի նահանգական տեսաններ։ Դաջուայ Ինկվիզիցիայի տեսանի բաժանումն էլ նոյնպէս ենթարկուեցաւ զանազան տեղական փոփոխութիւնների, այսինքն փոքր ինչ նրանց

թիւը պակսեցաւ, երբու թէ հեռաւորութիւնը պակսեցնելու մաքով։ Կաստիլիան նոյնպէս ունէր իրա համար ղեներալ Ինկվիզիցիոն դատարանի վճիռները, որոնց լուծի տակ Կաստիլիան ընկաւ միայն էն ժամանակ, երբոր Ս. Արագոնիան և Կաստիլիան միացան Ֆերդինանդի և Իզաբէլի ամուսնութեամբը։ Մինչեն էն ժամանակը, այսինքն ժե դարի վերջումը, Ինկվիզիցիան մնաւ այս թագաւորութեան մէջ, երբ որ կանոնի և օրինաց մէջ մնաւ չափազանց խստութիւն։

Ս. Ինկվիզիցիան, որը որ Դոր է կոչւում, տիրեց Իսպանիոյ վրայ 1481 թ. մինչև էն ժամանակ, երբ Ֆրանսացիները առաջին ոչնչացրին նրան, և էս ոչնչացնելը մեծ ուրախութիւն պատճառեց Իսպանիացւոց, բոլոր ազատ դաւանութեան, մարդասիրութեան և լուսաւորութեան բարեկամներին։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Լն յանցանքները, որոնց եպեսէ ընդուած էր հին Ինկիլեղեցին։

Երբ որ պապերը սարքում էին Ինկվիզիցիան, նրանց միտքն էր միայն յանցաւոր հերետիկոսներին դատել և պատժել. բայց երբոր Աշմարիտ հերետիկոսներ գտան, էն ժամանակ հրամայեցին Ինկվիզիթորներին անդադար հալածել էն քրիստոնեաներին, որոնք բանիւ կամ գործով ցոյց կըտան վատ զգացմունք կամ ծուռը կարծիք եկեղեցւոյ վարդապետութեան վրայ. և էս բաւական էր համարւում նրանց հերետիկոսութիւնը հաստատ համարելու, գըցելով նրանց քննութեան տակ՝ որից անբաժան է միշտ մատնողութիւնը։

Ինչպէս էն յանցանքների քննութիւնը, որոնք հաւատոյ հետ ամենևին կապակցութիւն չունէին, օրէնքով կըպատկանէր սովորական դատարանին, բայց նրանք գտնում էին շատ էնպիսի յանցանքներ, որոնց մէջ պապերի կարծիքով չէր կարելի ընկնել առանց հետևելու ուրիշի և լոյէ վատառակար ուսման։ Այս պատճառաւ քիչ ժամանակից յետոյ հրամայեցին Ինկվիզիթորներին հերետիկոս համարել նրանց՝

1. Ո՛վ որ ստացած յայտնի հերետիկոսի անուն, սաստիկ հայհոյութիւնով ցոյց կըտայ ծուռը կարծիք Աստուծոյ ամենակարողութեան կամ ուր և լոյէ յատկութեանց վրայ։ Այսպիսի հայհոյանքը պատճառ էին տալի հերետիկոսութեան մէջ կասկածաւորը համարուելու էն ժամանակն էլ, երբոր դուրս էին գալի մարդու բերանից նեղացած և հարբած ժամանակը։ Ինկվիզիթորները էս բանը ապացոյց էին համարում, թէ նրանց սովորական զգացմունքն էլ ընդդէմ են հաւատոյ։

2. Ո՛վ որ պարապում էր կախարդութիւնով, հմայութիւնով և կամ ուրիշ հնարքների մէջ գործ էր ածում օրհնած ջուրը, նշխարքը կամ ուրիշ մին բան, որը որ ցոյց է տալի եկեղեցւոյ խորհրդոց անպատուութիւն կամ հաւատոյ խորհուրդների կամ հան-

գէսների չարաչար գործածութիւն։ Այս տեսակ յանցաւորների կարգն էին մտնում էն մարդիք, որոնք յարակցութիւն ունէին չար հոգւոյ հետ իրանց սրբապիղծ գործերումը ապառնին լմնանալու համար։ Այս տեսակ յանցանքները, որոնք շատ սովորական էին միջին դարումը, Հռովմայ գահի պօլիտիկայի համար շատ մեծ բան էին, ենդուր համար արժանի էին դատապարտութեան։

3. Ով որ կանչում էր դևերին նրանցից օգնութիւն յուսալով. այս յանցանքը ժ՝Ա դարումը Կատալոնիայի մէջ ընդհանուր էր, և ինչպէս երևում է, խիստ շատ մարդիկ, որոնք պարապում էին էս արհեստով, սատանին ծառայում էին Կաթոլիկական բոլոր հանդէսներով. շատ անգամ գտնում էին ժողովրդի ձեռին գիրքեր Սօլոմոնի քիտուլի անուանեալ, որոնց վրայ հարկաւոր ժամանակը երգում էլ էին անում։

4. Ով որ մին տարիից առելի մնում էր բանադրանքի տակ և չէր հեռևում արձակում առնելու, չէր կատարում դրած ապաշխարանքը. և էս բանը համարում էր եկեղեցական դատաստանի ամենամեծ նախատինք։

5. Այն աղանդաւորը, որ ընդունում էր բոլոր հաւատոյ մասունքը, բայց չէր ընդունում, թէ անպատճառ պէտք է հնազանդիլ Հռովմի եպիսկոպոսին, իբրև տեսանելի գլխոյ Կաթոլիկական եկեղեցւոյ և միսխանորդի Յիսուսի Քրիստոսի երկրի վրայ։ Ամենապէս նա, որ չի հաւատալ արևմտեան եկեղեցւոյ ընկալած հաւատոյ հանգանակի որ և իցէ մասին, զորօրինակ Յոյնք (և Հայք), որք չեն դատանում հոգւոյն սրբոյ բղխումը յորդւոյ Աստուծոյ, այլ միայն 'ի Հօրէ։

6. Հերետիկոսաց թաքցնողները, պաշտպանները, գործակիցները, իբրև Կաթոլիկաց եկեղեցւոյ անարգուք և հերետիկոսութիւնը զարգացնողք։

7. Ով որ Ինկվիզիցիայի դէմ կենայ կամ Ինկվիզիթորներին արգելք տայ նրանց հետազօտութեան ժամանակը, ենդուր որ չ'է կարելի Կաթոլիկ լինիլ և Ինկվիզիթորներին չ'օգնել։

8. Ամենայն իշխանք, որք զանց կ'առնեն էն երդումը, որով պարտաւորուած են Ինկվիզիցիայի ատիչանաւորների առաջ դուրս անել հերետիկոսներին իրանց երկրից։

9. Տէրութեան բոլոր նահանգների, դաւառների և քաղաքների պետերը, որոնք չ'են պաշտպանել եկեղեցին հերետիկոսներից էն

ժամանակը, երբ Ինկվիզիցիոն-օրենքը նրանցից օգնություն են ուզել։

10. Ո՛վ որ չի համաձայնիլ քաղաքի մէջ արգելել օրինաց և կանոնադրության զօրությունները, երբոր նրանք անհամաձայն են Ինկվիզիցիայի ահմանադրություններին։

11. Ադվոկատները (փաստաբանները) հօտերները և ամէն օրէնսդէտները, որոնք պաշտպանեն հերետիկոսին, օգնեն նրան խորհրդով ազատելու Ինկվիզիցիոն-օրենքի ձեռքից, կամ էն թղթերի թաքցնողները, որոնց մէջ կարելի է գտնել հերետիկոսության նշանները։

12. Էն ամէնքը, որոնք օրինաւոր կերպիւ թաղում են հերետիկոսին, որը որ էրա բերնով խոստովանած է կամ վէճով հրատարակուած է։

13. Ո՛վ որ վարդապետության դորձից զննողության ժամանակը հրաժարում է երդում անել, ինչ բանի համար կ՚ուզէ լինի ըստ պահանջման։

14. Ամենայն յոյսի հերետիկոսության մէջ մեռածները. նրանց յիշատակը անարգանքի մատնուի, մարմինք դերեզմաններից հանուելով այրուի, և նրանց կայքը խլուի։

15. Ընկայք և Պաւերը (Ռեքոյնչ Մահմեդիանք) որոնք կաթոլիկին գարձնում են իրանց կրօնին կամ գրով կամ քարոզությունով։ Ռայոսիները մատնուին Ինկվիզիցիայի դատարանին։

16. Վերջապէս նրանք, որոնք թէև վերոյ գրեալ բոլոր յոդուածների զօրությամբ դատաստանի չեն պատկանում, բայց նրանց հետ մերձաւորություն ունին բանիւ, կամ դորձով, կամ շարադրությունով։

Հերետիկոսության կասկածը ընկնում էր նաև էն շարադրությունների վրայ, որոնք պարունակում էին հերետիկոսական ուսումն կամ նրան մատակացնում էին։ Որանց հեղինակները կասկածաւոր էին համարում։

Կասկածաւորները երեք կարգ էին բաժանուում. սաստիկ կասկածանաց պատկանեալները նշանակում էին էս բառով Վեհեմենտ սուսպեկ. խակ թեթևները լեվէ ընկնա բառով։ Թէև ընդհանուր կանոնի զօրությամբ Ինկվիզիցիայի դատարանին պատկանում էին առանց բացառության էս վերոյ յիշեալ յանցանքներով մեղապարտները, բայց լինում էր բացառություն պապերի փոխանորդների, քարոզիչների, սատիչանաւորների և ուրբանց մերձաւորների համար, այնպէս, որ եթէ նրանք հերե-

տիկոս երևին, Ինկվիզիթորը իրաւունք ունի նրանցից միայն ստորագրութիւն առնել և ուղարկել պապին։ Այդ բացառութիւնը տարածուած էր եպիսկոպոսների վրայ էլ, իսկ թագաւորները և իշխանները ստորադրեալ էին Ինկվիզիցիայի ատեանին։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ։

Հին Ինկվիզիցիայի պատմութիւնից մեջ եղած գործերի ընթացքը։

Աբեղան, որ նշանակւում էր Ինկվիզիթոր, իրա ընտրութեանը համար իմաց էր տալիս թագաւորին, որ իսկոյն հրաման էր գրում էն ամենայն քաղաքների ատեաններին, որոնք Ինկվիզիթորը ընտրել էր իրա վիճակ, ամենայն կերպիւ օգնել նրան, բանտը գցել ամէն մարդու, որին Ինկվիզիթորը հերետիկոս կամ կասկածաւոր կը համարի, Ինկվիզիցիայի ատեանի վճիռները կատարել, պաշտպանել Ինկվիզիթորին կամ նրա օգնականներին ամենայն նախատանքից կամ ծաղր անելից և վերջապէս տալ նրան բնակարան և ման գալու բոլոր միջոցները։

Դրաջ Ինկվիզիթորները չէին ստանում ռոճիկ։ Այլանք, որոնք էս պաշտօնումը կարգւում էին, աղքատութիւն ուխտեալ կրօնաւորներ էին. իսկ քահանայք, որոնք երբեմն նրանց գործակից էին լինում, իրանց եկեղեցւոյ արդիւնքով էին կառավարւում։ Բայց այսպիսի կարգը 'ի հարկէ վտանգաւորութիւն էր պահանջում, երբ որ Ինկվիզիթորները գնում էին երկրէ երկիր ման գալու քահանաների, ուսիկանութեան (պոլիցիի) աստիճանաւորների և զինուորների ուղեկցութեամբ։ Այն ժամանակը պապը էս ծախքը

գրեց Եպիսկոպոսների վրայ էն պատճառում, որ Ինկվիզիցիոնները իբրու թէ աշխատում էին ջնջել հերետիկոսութիւնը նրանց վիճակներից։ Եպիսկոպոսները անբաւականութիւն յայտնեցին այսպիսի դժուար տանելու հարկի վրայ և շուռ տուին կալուածատէրների վրայ, որոնք պարտաւորեալ էին չլսել իրանց հողումը և ուշ մնին հերետիկոս։ Երջապէս այս բոլոր ծախսերը դրուեցան Ինկվիզիցիայի վրայ, որ մեծ արդիւնք էր ստանում խլած կայքերի գնից, կամ դրած տուգանքներից, երբ որ խլելու կայք չլինար։

Հենց Ինկվիզիցիօրը գալիս էր մին քաղաք իրա պաշտօնի դործը կատարելու և վեր էր գալիս Ս.ըք եպիսկոպոսի տանը, իսկոյն գրաւոր տեղեկութիւն էր տրում կառավարչին, որ նշանակած օրը և ժամը ներկայանայ Ինկվիզիցիօրին։ Յետոյ ներկայանում էր նրան քաղաքապետը և երդում էր անում նրա հերետիկոսաց դէմ բոլոր հրամանները կատարելու, նմանապէս հերետիկոսներին գրտնելու և բանտարկելու ամենայն հնարքները գործածել։ Ինկվիզիցիօրը իրաւունք ունէր իրա հրամանին անհնազանդ բոլոր աստիճանաւորներին բանադրել և պաշտօնից զրկել. նաև իրաւունք ունէր ամբողջ քաղաքի վրայ էլ արդելք դնել։ Եթէ նահանգապետները և կառավարութիւնը դժուարանում էին Ինկվիզիցիօրի հրամանը կատարելու, էն ժամանակը նա իրա նշանակած հանդիսաւոր օրը եկեղեցւոյ մէջ ամբիոնից յայտնում էր ժողովրդին իրա վրայ դրած պարտաւորութիւնը, և միանդամայն հրատարակում էր, թէ էն մարդը, որ հերետիկոսութեան մէջ ընկած է, եթէ ինքնակամ կըներկայանայ դատաստանից առաջ, միայն թեթեւ եկեղեցական ապաշխարանաց տակ կընկնի. իսկ եթէ նրա հերետիկոսութիւնը կը յայտնուի նշանակած ժամանակակէտից յետոյ, կընկնի դատաստանի բոլոր խստութեան տակ։ Ժամանակակէտը սովորաբար նշանակւում էր մին ամիս։

Եթէ ժամանակակէտից առաջ ստացւում էր մատնութիւն, միայն գրում էին օրագրութեան մէջ, բայց ոչինչ անօրէնութիւն չէին անում, ապասելով յանցաւորի ինքնակամ ներկայանալուն։

Նշանակած ժամանակը անցնելից յետոյ կանչում էին մատնիչին և ճշմարտութիւնը յայտնելու համար տալիս էին նրան երեք հնարք՝ տեղապրանք, հաստչակ յուսումն և Ինքվիզիցիա։ Այս ամէնը կախուած էր նրա ընտրութիւնից։ Եթէ նա ընտրում էր առաջինը, նրան իրաւունք էին տալիս իրա հակառակորդի յանցանքը

ապացուցանել. բայց առաջ յայտնում էին նրան, թէ ինքն էլ չի մեռել առանց պատժի, եթէ մատնութիւնը կըլինի սուտ զրպարտութիւն։ Այս հնարքը, որովհետև վտանգաւոր էր, քիչ էին ընտրում. անմիտ պէտք է լինէր էն մարդը, որ յուսար, թէ առանց իրա անձը պատժի տակ դցելու կարող է կորցնել հակառակորդին։ Մեծ մասը իրա մատնութեան պատճառ բերում էր հերետիկոսութիւն համար Ինկվիզիցիային չը յայտնելու օրէնքի ահը։ Այն ժամանակը նրանց քաւական էր միայն ատելները տալ էն մարդկերանց, որոնք նրանց կարծիքով կարող էին մատնածի մեզքը ապացուցանել։ Ոմանք էլ հացնում էին Ինկվիզիցիայի առեանը ժողովրդի մէջ խլած համբաւը, որ թուի թէ մատնածին կապածանաց տակ էր դցում։ Այս վերջի տեսակումը Ինկվիզիցիան էնքան էր կատարում մատնիչի պաշտօնը։

Ինկանելի հարցումը Ինկվիզիցիօրը ինքն էր անում միայն առանձնաւորի և երկու քահանայի ներկայութեամբ։

Եթէ յանցանքը կամ հերետիկոսութեան կասկածը ստուգում էր առաջին հարցման ժամանակը, էն ժամանակը Ինկվիզիցիօրը յանցաւորին բանտ էր դնում։ Այն ըստէջ՝ երբեր նա ընկաւ Ինկվիզիցիօրի ձեռը, ոչ ոք չէր կարող նրա հետ հաղորդակցութիւն ունենալ։ Այս էն ըստէջումը զրկում էր ամէն մարդից և ամէն տեսակ միխիթարութիւնից։ Այդ էն վիճակում որտեղ ամէն մարդուն, որը որ Ինկվիզիցիայի զոհին մի տեսակ գութ ցոյց տար։ Յանցաւորին գցում էին զարհուրելի բանտի մէջ և պահում էին էնքան ժամանակ, մինչև որ Ինկվիզիցիօրի կամքը լիներ կանչել նրան հարցմունքի համար։

Մինչև հարցմունքի ժամանակը գալը Ինկվիզիցիայի ատեչանաւորները գալիս էին բանտարկեալի տունը, գրում էին տանը լուածը, և արդեալքի տակ էին դցում բոլոր կայքը։ Այն ժամանակը յանցաւորների պարտքատէրները կորցնում էին իրանց իրաւունքը։ Կինը և որդիքը մնում էին յետին ողբալի վիճակի մէջ, և շատ անգամ բարեմտունք և առաքինի դերդաստաններ հասնում էին վերջին թշուառութեան և յուսահատութեան, միայն էն քամբաղտութեամբ անունը կոտրուելով, որ նրանց մարդը Ինկվիզիցիայի հալածանաց տակն էր։

Երբոր յանցաւորը մնում էր բանտի մէջ շատ օրեր, շատ ամիսներ, էն ժամանակ Ինկվիզիցիօրները հրամայում էին բանտա-

պետին, որ բանտարկածին ստիպէ դատաստան խնդրել։ Այսպէս էր էս ատեանի ընդհանրական կարգը, որ յանցաւորը ինքը դառնայ խնդրող։ Երբոր առաջին անգամ բերում էին նրան դատաւորների առաջ, էնպէս հարցմունքներ էին անում որ իբրու թէ նրան բնաւ չեն ճանաչում, և ստանալով խօսքը դէս ու դէն շուռ տալով, հարկադրում էին, որ ինքը խոստովանուի յանցանքը։ Եթէ ինքը հերետիկոսութիւնը յանձն էր առնում և հրաման էր խնդրում հրաժարուիլ հերետիկոսութիւնից, էն ժամանակ Ինկվիզիցիոնը համաձայնում էր նրա դարձին, եթէ նա երկրորդ անգամ հերետիկոսութեան մէջ ընկածներից չէր. որովհետև երկրորդ անգամ ընկնելը միշտ մահուան պատիժի տակ էր։ Ինկվիզիցիան երկու անգամ ներել չըգիտէր։ Դարձի եկողին կրկին ուղարկում էին բանտը և պահում էին մինչև առաջիկայ աֆդօ-դա-ֆէ, ուր որ էրում էին նրա պատիները. դարձ եկողին եկեղեցական ապաշխարանքի տակն էին դցում և յետոյ արձակում. շատ պատահում էր, որ բանտարկեալները իրանց խիղճը մաքուր ունէին, բայց լաւ էին համարում յանձն առնուլ մին տեսակ յանցանք, քան թէ հաշուիլ, մաշուիլ և մեռնիլ բանտի մէջ։

Եթէ յանցանքը, որ դրուում էր մեղադրանքի վրայ, ոչինչ բանով չըհաստատուեցաւ, և ինքը իրա բերանովը չըխոստովանեցաւ հարցմունքի ժամանակը, Ինկվիզիցիոնը արձակում էր նրան, միայն առնելով նրանից հրապարակական հրաժարում ամենայն հերետիկոսութիւնից և պահանջելով, որ իրան մաքրէ կրօնաւորական ճանապարհով էն կասկածներից՝ որոնց տակն էր ընկած. յետոյ նա ստանում էր արձակում, որ կոչւում էր ապ էքզիլիում, այսինքն հերետիկոսութեան մէջ կասկածաւոր։

Եթէ Ինկվիզիցիայի ահագին քննողական գործի տակից պարզ դուրս եկածը հաստատ չէր ապացուցանում յանցաւորի հերետիկոսութիւնը, բայց այնու ամենայնիւ համարեա թէ միշտ դուրս էին բերում, թէ նա կասկածաւոր է էդ յանցանքի մէջ խօսքով կամ գործով, էն ժամանակը Ինկվիզիցիան, կշռելով յանցանքի ամենութեան համար դրած պատիժը, կասկածը անուանում էր կամ ԼԵՔԻՈ, կամ ՎԵՔՈ և կամ ՂԷՐԷՂ, և յանցաւորի վիճակը կտրում էր էս երեք տեսակից մինի համեմատ։

Եթէ յանցաւորի համար եղած գանգատները խիստ ծանր էին, և նա չէր յանձն առնում իրա վրայ եղած յանցանքը, էն

ժամանակը նրա վրա մտիկ էին անում իբրև կամակոր հերետիկոսի. ուստի տանում էին նրան բանտը և պահում էին շատ տարիներ, երբեմն երբեմն դատաստանի առեանը կանչելով և կրկին բանտը դցելով. տալիս էին նրան քննողական թղթերի պատճէնը առանց նշանակելու մատնչի և վկաների անունները, նաև էն հանդամանքները, որոնք կարող էին յայտնել նրանց։ Էն ժամանակն էլ տալիս էին նրանց ադվոկատ, բայց էս գործողութիւնը մին ծիծաղելի կատակ (հումորիստ) էր, էնդուր որ ադվոկատը կարող էր տեսնել յանցաւորին միայն Ինկվիզիցիօնների ներկայութեանը, և էն ժամանակն էլ յանցաւորը կարող էր խօսել միայն իրա մեղքի յանձնառութիւնը։

Երբ որ յանցաւորը իրա պաշտպանելու համար ոչքան կարող էր փաստեր էր առաջ բերում և երբոր պատասխանում էր ամէն հարցմունքներին, բայց էն պատասխանները Ինկվիզիցիօնեներին դուր չէին գալի, իսկ յանցանքը փաստերով չէր հաստատում, Ինկվիզիցիօնները կարդում էին պոնչոնոչ, իբրև այնպիսի ճշմարիտ հնարք, որով համարեա թէ միշտ կարելի է քաղել յանցաւորի բերնից ճշմարիտ կամ ճշմարտանման խոստովանութիւն։ Եւ էս խոստովանութիւնները, որոնք զարհուրելի տանջանքներով քաշում էին յանցաւորների բերնից, Ինկվիզիցիօնները բաւական էին համարում իրանց խիղճը հանդարտելու համար։

Երբեմն տանջանքն էլ հարկաւոր չէր համարվում, ուղղակի սկսում էին դատաստան անել և Ինկվիզիցիօրը տալիս էր դատավճիռը։ Յանցաւորը կարդում էր դատարանի վճիռը էն ըսպէին, երբոր վճիռը պէտք էր կատարուէր։

Ինկվիզիցիան կանոնաւոր քննութեան կարգ չէր պահում, և դատաւորները ժամանակ չէին նշանակում քննողական գործերի ապացոյցները լսելու համար։ Ընդհանուր ժամանակներումը բանտարկու (ֆեռիշ) էլ չկար, որ կասկածաւորի վրայ յանցանքներ բարդէ. էս պաշտօնը յանձն էր առնում ինքը Ինկվիզիցիօրը, էն էլ խօսքով, վկաներին հարցնելից յետոյ։

Ինկվիզիցիայի առջևը վկաները չէին պարտաւոր ապացուցանել իրանց խօսքը և երես երես չէին կանգնում մատնածի հետ. անարգ և շատ անպիտան մարդկանց վկայութիւնն էլ ընդունուում էր, և շատ անգամ պատուաւոր մարդկանց այրելու վճիռը տալու համար բաւական էր համարում էն յանցանքը, երբ նրա թշնա-

մեջը այնպիսի չարագործներ էին, որոնք իրանց խօսքը հաստատելու համար երդում անելուց չէին վախենում։ Նրանք ուրիշից լաւ վկաները մին ակատատես և իրա ականջով լաւ վկայի տեղ էին բռնում. մատնիչները իրանք էլ վկայ էին դառնում. վերջապէս, ամենայն օրէնքի, հակառակ կարող էին վկայել ծառան՝ իրա տէրոջը դէմ, կինը՝ իրա մարդու դէմ, մարդը՝ իրա կնոջ դէմ, հայրը՝ իրա որդու դէմ, որդին՝ հօրը դէմ և այլն։ Այս ինչ ընդարձակ ասպարէզ է վրէժխնդրութեան և մատնութեան համար, որը որ դաղտնի՝ ծածկած էր։

Ինկվիզիցիօնները չէին թողնում վկային հեռացնել, միայն թէ խիստ սաստիկ թշնամութեան պատճառաւ. բայց էս թշնամութեան խնդութիւնը իմանալու համար նրանք մատնածին հարցնում էին՝ ունեցել է նա թշնամիներ, ինչ ժամանակից կամ ինչ պատճառաւ. եթէ շատ գերապանց ապացոյց էին բերում, ընդունում էին։ Ապա Ինկվիզիցիօնները սատանու

կատարել այսպիսի արիւնախանձ կանոնգրքի պահանջունքները, բայց նոր Ինկվիզիցիան գործով հաստատեց էս ամէնի կատարելու հեշտութիւնը։

ԳԼՈՒԽ ՀՈՐՐՈՐԴ։

Աստուած Ինքնէջեցեալ ողորմութիւնը և ողորմիութիւնը։

Ընդհանուր լուսաւորութեան և արևմտեան եկեղեցւոյ կանոնիկական կարգերի պակասութիւնը տուին Ինկվիզիցիայի դատարանին (Ընդ և հոգեորականն էր) իրաւունք, դնել ամենայն տեսակ ժամանակաւոր պատիժներ, բաց 'ի գլխապարտութիւնից. և թէպէտև զրկած էր էս իշխանութիւնից, բայց նրա փոխարէն մատնում էր իրա զոհերը մարմնաւոր դատաւորների ձեռը, որոնք չէին համարձակւում մահու վճիռ գրելից հրաժարել։

Ու այսպէս ամենայն մարդ, սկսած թեթև կասկածաւոր հերետիկոսից, մինչև յայտնի կամակորը կամ կրկին անգամ հերետիկոսութեան մէջ ընկածը, դատապարտւում էր էնպիսի ապաշխարանքի և մահուան պատիժի տակ ընկնել, որոնք չէին կարող ջրշարժել խիստ մեծ ցաւումն էն դատարանի դէմ, որ հերետիկոսներին սպանում էր բազմախնամ և մարդասէր Աստուծոյ անունով։

Ոչ միայն թեթև պատիժը տրւում էր էն հերետիկոսին, որ համարւում էր ինչ իսոկիծաւոր. առաջ նա պարտաւոր էր հրապարակաւ հրաժարիլ էն հերետիկոսութիւնից, որի մէջ կասկածաւոր

էր համարում. Էստուր համար սարքում էին հանդէս ողջ քաղաքի բնակիչներին հրաւիրելով։ Նշանակած օրը բոլոր հոգևորականները և ժողովուրդը հաւաքւում էին եկեղեցումը, մեղապարտին կանգնեցնում էին բեմի վրայ դէնաքաց, յետոյ սկսում էին պատարագը։ Ուրեմտարանը կարդալից յետոյ Ինկվիզիցիոն օրդ հերետիկոսութեանց դէմ Ճառ էր ասում։ Այն ժամանակը մեղապարտին հարկադրում էին ասել հրաժարիմքը խաչի և աւետարանի առաջ, և նրա ձեռքը դրել հրաժարումը, եթէ դիր գիտէր։ Սրանից յետոյ Ինկվիզիցիոն օրը տալիս էր նրան արձակում, կրկին ընդունում էր նրան եկեղեցւոյ գոգը և նրա վրայ դնում էր հեռևեալ ապաշխարանքը։ ‘‘Ամենայն սրբոց ոտնի օրը, Բրիատոսի ծննդեան օրը, ,, միրտուլթեան օրը, Տեառն ընդ առաջի օրը, և մեծ պասի ամենայն կիրակի օրը, նորադարձը պարտաւոր է ներկայ գտնուիլ ,, մայր եկեղեցումը հանդէսի ժամանակը շապկանց, բոպիկ, ձեռքը կուրծքին խաչած, և տաճար եպիսկոպոսից կամ քահանայից մին Ճիպոտի հարուած, բաց ’ի ծաղկազարդի կիրակիից, որ ,, օրը պէտք է արձակում տանայ. աւագ շաբաթի օրը նա ,, կրկին պէտք է ներկայանայ մայր եկեղեցին, և նրան եկեղեցուց ,, դուրս կքաշեն մինչև պասի վերջը։ Այն օրերը նա պէտք է գայ ,, եկեղեցւոյ դուռը և կանգնի էնտեղ մինչև ժամերգութեան ,, վերջը։ Աւագ հինգշաբաթի օրը նա կրկանգնի էլի էնտեղ և ,, կրկին արձակում կըտանայ։ Մեծ պասի ամենայն կիրակի օր ,, նա մտնում է եկեղեցին արձակման յուսով, և կրկին կան- ,, գնացնում են նրան եկեղեցւոյ դրանը. կուրծքի վրայ միշտ կրե- ,, լու է երկու խաչ, որոնց գոյնը շորի գոյնից ջոկ լինի ,, ։

Այս ապաշխարանքը քաշում էր երեք տարի թեթև կամ կածաւոր հերետիկոսների համար, հինգ տարի ծանր կասկածաւորների համար, և եօթը տարի ամենածանր կասկածաւորների համար։

Այս աղանդ ուսուցանող յայտնի հերետիկոսներին, եթէ նեղուն էին խրնդրում, առաջ հրաժարումն էին տալիս, կրկին ընդունում էին Ճշմարիտ հաւատացելոց թիւը. յետոյ գցում էին բանտը, և բնաւ չէին հանում դուրս մինչև ’ի մահը։

Եթէ մեղապարտն էր կամակոր և անդարձ հերետիկոս նրան մատնում էին աշխարհական դատաւորների ձեռքը, թէ և կրկին ընկածներից չը լինէր։ Երբեմն ոմանք աֆդօ - դա - ֆէ հանդէսի ժամանակը մօտենալուս դարձ էին դալի, և էսպէսներին չէին ապա-

նում՝, այլ ուղարկում էին մշտնջենական բանտը։

Կրկին անգամ հերետիկոսութեան մէջ ընկածը՝ է զուր խնդրում էր հրաման կրկին եկեղեցին դառնալու. երկու անգամ մահից ազատուիլ չէր կարող. նրան միայն մին ողորմութիւն էին անում - կրակի տանջանքից ազատուիլ, այսինքն դահիճը առաջ նրան խեղդում էր, յետոյ դցում էր փայտակոյտի վրայ։

Բանտերից փախածներին և նրանց՝ որոնց չէր կարելի բանտարկել, դատապարտում էին կամակորների համար սահմանած օրէնքով, փայտակոյտի վրա էրում էին նրանց պատկերները. նոյն օրէնքով վարում էին անդարձ մեռած հերետիկոսների ոսկրների հետ։

Ս. յսպէս Կոնկիլեզեցեան ոչմի չէր խնայում. ներկայ դտնուածներին, հեռաւորներին, նաև մեռելներին էրում էին աֆդօ - դա - ֆէ ժամանակը կամ իրանց, կամ նրանց պատկերները։

Վերոյ յիշեալ ապաշխարանքներից և պատիժներից զատ Կոնկիլեթօրները դնում էին դրամական տուգանքներ, կայքերը խլում էին կամ բոլորը կամ մին մասը, և հանգամանքներին մտիկ տալով ուրիշ զանազան պահանջմունքներ էին անում։ Կոնկիլեզեցական դատարանի պատիժների կարգումն էին նմանապէս աքսորը, հայրենիքից զրկելը, խոյտուռակ անելը, պաշտօնից հանելը, պատիւը և արժանաւորութիւնը խլելը։

Դատարանի վճիռների մէջ նկատման արժանի է մին հանգամանք. այսինքն, այն կեղծաւոր ձևը, որ գրում էին Կոնկիլեթօրները ամենայն դատավճիռների տակը, այն յանցաւորի համար, որին տալիս էին մարմնաւոր դատաւորների ձեռք՝ ինչպէսով չըպատուել յանցաւորին։ Ս. յս խնդիրը էր յայտնի կեղծաւորութիւն. շատ օրինակներ ցոյց տուին, որ եթէ դատաւորը յանցաւորին մահու չէր մատնում, ինքը ընկնում էր Կոնկիլեզեցական հալածանաց տակ, իբրև հերետիկոսութեան մէջ կասկածաւոր, պատճառ բռնելով թէ հերետիկոսաց դէմ քաղաքական օրէնքները թոյլ բանեցնելը բաւական ապացոյց է դատաւորի հերետիկոսութեան մէջ կասկածաւոր լինելուն։

Ահա այս է էն թղթի իսկական օրինակը, որ յօրինել է Ռոմինիկոսը հերետիկոսների եկեղեցւոյ հետ հաշտուելու համար։ Որովհետև սա գործ էր ածում Կոնկիլեզեցական առաջի ժամանակները, էնդուր համար տալիս է մեզ ապաշխարանքի խստութեան կատարեալ տեղեկութիւնը, որ դնում էր եկեղեցւոյ հետ հաշ-

տուօղների վրայ, և հաստատում է էն կարծիքը, թէ արդեօք Դոմինիկան էր Ինկվիզիցիայի հիմնադիրը, թէ ոչ. նմանապէս մատենագիրներին հաւատացնել, թէ արդեօք արժանի էր նա Ինկվիզիցիօնների գլուխ լինել։

“ Ամենայն Աշմարիտ հաւատացեալ քրիստոնեաներին, որոնց
“ կը հասնի այս թուղթը, Ֆրանչիսկոս Դոմինիկոս Օսմայի Կա-
“ նոնիկոս, քարոզիչների մէջ նուաստս, ողջոյն 'ի Քրիստոս Յիսուս։։

“ Սուրբ առաքելական աթոռի դեսպան Սիտոյի Աբբայի
“ իշխանութիւնի զօրութեամբ, (որոյ պէղտիշ ընելոյ պոպի-ին ես
“ պրգիանոպել եմ) մենք ընդունեցինք հաւատացելոց կարգի մէջ էս
“ թղթաբերը Պոնտիոս Ռօբերտին, որ Աստուծոյ տղրմութեամբը
“ թողեց հերետիկոսների աղանդը, և հրամայեցինք նրան (էրէոր ԝա
“ էրպոմ պրա հրամայեցինքը կոպրել) յանձնուիլ եպիսկոպոսին, որ
“ երեք կիրակի շարունակաբար պարտ է մանր ածել որան տակը
“ (ներկ) քաղաքի դռնից մինչև եկեղեցւոյ դուռը, ծեծելով Ա-
“ նապարհումը։ Ամանապէս ապաշխարանքի համար մենք հրա-
“ մայում ենք որան, 'ի նշան հերետիկոսութիւնից հրաժարուելուն՝
“ չուտել միս, ձու, պանիր և ճչինչ կենդանեաց կարգից բոլոր
“ իրա կեանքումը, բաց 'ի զատկի, հոգեգալստեան և Աստուա-
“ ծածնի ծննդեան օրերից. պահել ամէն տարի երեք պաս, և
“ էս ժամանակը ձուկն էլ չուտել. բոլոր կեանքումը շաբաթը
“ երեք օր պաս պահել, և պահել գինիից և ձէթից, բաց 'ի
“ հիւանդ ժամանակից և ծանր աշխատանքից։ Կրօնաւորի շոր
“ հագնել ձեռով և դունով, կուրծքի վրայ երկու մանր խաչերով.
“ ամենայն օր պատարագ տեսնել, եթէ կարելի է, իսկ կիրակի
“ և տօնի օրերը երեկոյեան ժամն էլ. անպատճառ ասել առա-
“ ւօտեան և երեկոյեան աղօթքները Հայր Մերը եօթն անգամ
“ առաւօտը, տասը երեկոյին, և տասն երկու կէս գիշերին. մնալ ա-
“ ռանց կնոջ մերձենալու. և այս թուղթը ամէնը մէկ անգամ
“ յայտնել տեղի քահանային, որին հրամայում ենք մտիկ տալ էս
“ թղթաբերին լրբև հերետիկոսի, երդմնազանցի և բանադրածի,
“ և հեռացնել որան Աշմարիտ հաւատացեալների հաղորդու-
“ թիւնից։ ։։

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԻՆԿԱԼԻՕՅԻՑԻՑ· ՏՈՐԿՈՒԵՄԱՏՅՑ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՅԻՆՍՄԵԾ ԳԼԽԵՐԱՒ, ԻՆԿԱԼԻՕՅԻՑՈՎ· ԲԱՐՁՐԱՑԱԾ ԵՒ ՊԱՏԻԺՆԵՐ·

ԳՈՒՅՍ ԱՌԱՔԻՆ։

Խոպոնիկոց ՃԿՉ դար Ինքիզիզիոյնե հարցաւորը։

Ընդարձակ առուտուրը, որ անում էին Իսպանիոց Հրեաները ԺԵ դարումը, նրանց ձեռքը գցեց ոչ միայն Թրակղզիի հարստութեան մեծ մասը, այլ և նրա լիհտիբարը (հրեէիա) և պաշտպանութիւնը, որոնք հարստութիւնից անբաժան են։ Բրիստոնեայք զօրութիւն չունենալով նրանց հաւասարիլ, համարեա թէ քոլորը նրանց պարտական դառան, ինդուր համար նախանձը շուտով զինուորեց նրանց իրանց պարտքատէրերի դէմ։ Ընդարդար առեւտրութիւնը շատ խառնվածեան պատճառ էլաւ, որոնց մէջ հոտորուեցան հաղարաւոր Հրեայք։ Շատերը մահից ազատուեցան քրիստոնեայ դառնալով, և եկեղեցիները լքցուեցան ամէն տեսակ արուեստ և էդ Հրեաներով։ Ոչ ժամանակումը համարեա թէ միլիոնաւորը մարդիկ՝ կամ ուղիղ սրով կամ կեղծաւորութեամբ թողին Մովսէսի օրէնքը և ցանկացան քրիստոնէութիւն ընդունել։ Այսպիսի դարձողների թիւը շատացաւ ԺԵ դարի առաջին տարիները, բայց որովհետև Պարբանոս անուանեալ նոր քրիստոնէից դարձը աւելի ահից էր, քան թէ Հշմարիտ հաւատալից, ուստի շատերը փոշիմանեցան, որ ուրացան հին հաւատը, և թաքուն կրկին հրէութիւնն

էին անում։ Ս. յոպխի թշուառ վիճակի մէջ չբնակալով երկար ժամանակ կենալ, նրանք շուտ շուտ յայտնուում էին, և քիչ ժամանակումը շատ ուրացեալներ յայտնուեցան։

Ընդհակայած հարկաւորութիւնը, թէ պէտք է ուրիշներին օրինակ տալու համար պատժել այսպիսի յանցաւորներին, պատճառ տուեց Դ. Սիքստոս պապին և Ն. Ֆերդինանդ թագաւորին Խպանիումը Ինկվիզիցիայ սարքել։ Այն պատճառը՝ որ երեսանց կրօնի համար էր երևում, արծաթասէր Ֆերդինանդի համար միջոց դառաւ խլել էն մեծ հարստութիւնները, որ Մարրանոսները վատրեկել էին Խպանիումը, և պապը հաւանեցաւ դատարան կարգել, որ, 'ի հարկէ, Ս. լեան Սարերի էն կողմերի կանոնաց ի հոտիբարը (ինքիսիսը) մեծացում էր. էս խորհուրդը կատարելու հարկաւոր էր յաղթել միայն էն արդելքին, որ երևում էր Ֆերդինանդի ինոջ Իզաբելլայի կողմից, որ չէր համաձայնում Ինկվիզիթորների Կատոլիկայ մոնելուն։ Հեղ և բարի թագուհին չէր կամենում, որ իրա հպատակների հետ վարուին էն կերպով, որ նրա բնութիւնը հակառակ էր։ Բայց նրա խոստովանահայրը Թոմաս Տորքեմադոն, որ Սիվիլայի Դոմինիկեան վանքի վանահայրն էր, գտաւ հնարք թագուհի կարծիքը հանդարտեցնելու։ Ա՛յս հաւատացրուց նրան, թէ էս հնարքը էնպիսի պարտաւորութիւն է, որը որ պահանջում է հաւատը էն հանգամանաց մէջ, որոնց մէջ այժմ գրանում է Կատոլիան. և ստացաւ թագուհիից համաձայնութիւն։ Այն ժամանակը պապի դեսպանը ուղարկեց երկու Ինկվիզիթորներ Սիվիլայ, որ էնտեղ դատարան բացանեն. նմանապէս հրաման դուրս էկաւ բոլոր նահանգների կառավարիչներին, որ Ինկվիզիթորներին և նրանց մարդկերանց տան ամենայն, ինչ որ հարկաւոր է մեն գալու համար։ Կատոլիացիք էնքան մեծ անբաւականութիւնով հանդիպեցան Ինկվիզիցիային, որ Ինկվիզիթորները Սիվիլայ գալուց յետոյ բնաւ չբնակացին հաւաքել որքան հարկաւոր էր մարդիկ, և ոչ իրանց գործը սկսելու հնարքներ։ Ֆերդինանդը և Իզաբելլան շատ անպատմ կրկնել ստիպուեցան դաւառապետներին հրամաններ, բայց այնու ամենայնիւ տեսնում էին, որ շատ դանդաղաբարեամբ էին հնազանդում։

Էնոց Ինկվիզիթորները սարքուեցան, նոր քրիստոնեաները համարեա 'թէ ողջը գաղթեցին Դուքս Մեդինայ Սիդոնիի, Կադիկսի Մարքեզի, Ս. Բիկտ Կոմսի և ուրիշների երկիրները։ Ինկվիզիթորները

երբ որ իմացան այս գաղթականութիւնը, մանաւանդ Թովմայ Տրիւեմն դա առաջին ղենեբալ Ինկվիզիթօրը, զարհուրանքով տեսան, թէ պատրաստեալ զոհերը սլքուեցան առեանի ոլթնութիւնից և իշխանութիւնից. ուստի 1481 թուի յունվարի 2 ից հրովարտակաւ յայտնեցին, թէ ամէն գաղթականները իրանց փոխէլեալը ապացուցել են իրանց հերետիկոսութիւնը, և հրամայեցին Կարդինալ Մարքէզին, Աբիսի Դքսին, և բոլոր Կաստիլիայի իշխաններին՝ բռնել գաղթականներին, պահապաններով ղրկել նրանց Կաստիլիայ և նրանց կայքը խլել. ապա թէ ոչ կըբանդրուին, իրանց կալուածները խլուին, և իրանք կը ղրկուին պատիւից և արժանաւորութիւնից։

Վասն ժամանակումը հերետիկոսների թիւը էնքան շատացաւ, որ էն վանքը, որ տեղ նրանց հաւաքում էին, բաւական չէիլաւ. էն միջոցումը Ինկվիզիթօրները էնքան ողորմելիների մատնութեամբ զբաղուածելով հրատարակեցին նոր հրաման (որ իսչատամ էր հրովարտակ ողորմութեան) որ ամենայն ուրացողք, որոնք դեռ չեն բռնուած, ինքնակամ յանձնուին դատարանին, և էտուր համար նրանց խոստացան ներողութիւն, գոնէ թեթեւ ապաշխարանք և կայքերին ձեռք չտալ։ Այս առաջարկած ողորմութիւնը հրովարտակը շատ Մարքանոներին խաբեց. շատերը ներկայացան դատաւորներին։ Ինկվիզիթօրները հրամայեցին նրանց բանտը գցել, որտեղից ուրիշ կերպիւ չէին քաց թողնում, բայց եթէ հարկադրելով յայտնել էն ուրացողների անունները և տեղերը, որոնց կըձանաչէին անձամբ կամ լսելով։ Ինչպէս ողորմութեան հրովարտակը դառաւ մատնութեան հրովարտակ։ Վասն ժամանակից յետոյ ղենեբալ Ինկվիզիթօրը հրատարակեց Կաստիլիումը նոր հրովարտակ։ Այս երկրորդ հրովարտակը, որ էնքան խաբեբայ և կեղծաւորական չէր, ցոյց էր տալիս էն զանազան դիպուածները, որոնց մէջ հրամայում էր, թէ էն մարդիք, որ մատնութիւն չէ անել, կընկնի մահացու մեղքի և մեծ նզովքի տակ։ Այս հրովարտակումը գրած էին քսան յօդուածներ, որոնցով կաբելի էր ապացուցանել հրէութիւնը. բայց այս յօդուածները այնքան նոյնանշան և դարտակ էին, որ բոլորը միասին հազիւ թէ մին ապացոյց կաղմելու պէտք կուգային, եթէ Ինկվիզիթօրները չըդառնէին հնարքի՝ իրանց ծաղրական բանը մեծացնելը անհակառակ ճշմարտութիւն ցոյց տալու։

Էնքան զոհեր շատացնելու պէտքի հնարքները չըմնացին ա-

ռանց զարհուրելի հետևանքի։ Խորհրդոյն ատեանը շուտով բաց արաւ իրա զարհուրելի դատաքննութիւնները։ Իրա Սեվիլիայումը կարգուելու չորս օրից յետոյ Ինկվիզիցիան այրեց վեց դատապարտեալները, մին քանի օրից յետոյ տասն և եօթը, և դեռ կէս տարին չը լրացած փայտակուտի վրայ այրուեցան 298 նոր քրիստոնեաներ, 79 ուղղափառեցան մշտնջենաւորեան բանտը, և էս ամէնը միայն Սեվիլիայումը։ Մին նոյն ժամանակումը էն նահանջի ուրիշ տեղերումը այրուեցան աւելի քան 2000 Մարրանոներ, և որանից շատ աւելի մարդոց պատկերներ, և 17000 մարդ ընկան եկեղեցական ապաշխարանքի տակ։ Փայտակոյտերի վրա այրածների մէջ կային շատ հարուստ մարդիկ, որոնց կայքը մտան գանձարանը։

Այրելու դատապարտեալների թիւը այնքան շատացաւ, որ Սեվիլիայի քաղաքապետը ստիպուեցաւ քաղաքից դուրս շինել հատուկ քարաշէն էշաֆօթ, որի վրայ դրին չորս քարէ արձանի մէջերը դարտակ։ այս քարերի մէջ կանգնեցնում էին կենդանի նոր քրիստոնեայ-ուրացեալներին, և զարհուրելի տանջանքներումը մեռցնում էին ծանր մահուամբ։ այս էշաֆօթը, որի անունն էր Բուէնոռետիրо, շատ ժամանակ մնաց։ Եւ ինչ յոյս կարելի էր ունենալ դատարանի այսպիսի կարգադրութիւններից։

Երկիւղը՝ որն որ աղդեցին քրիստոնէից մէջ այսպիսի պատիժները, ստիպեց նրանց հազարներով փախչել Ֆրանսիայ, Փորթուգալիայ, նաև Աֆրիկայ։ Շատերը՝ որոնք կամակոր էին կարծուում, դնացին Հռոմ պապից դատաստան խնդրելու, բայց պապը բաւական համարեցաւ միայն թեթեւ ապառնալիք տալ Ինկվիզիցիոնեներին, բայց էս ապառնալիքները 'ի զուր դատապարտածներին ոչ ինչ օգուտ չը բերին։

Այն ժամանակը Իզաբէլլայ թագուհին տանջուելով իրա խըղճմտանքից կայքերի խլելու համար խնդրեց պապից հատատուն ձև տալ էս դատարանին, որ ամէնքը բաւական լինին։ Միանգամայն որ կորած վէճերը լինին վախճանական առանց Հռոմին բողոքելու երաւունքի։ Սակայն Դ շատ դոմեց թագուհի Ինկվիզիցիայի համար ունեցած նախանձայուղութիւնը, հեռացրուց նրա ամենայն կասկածները և Ինկվիզիցիայի վրայ կարդեց ապաշխարանքի պատարագը, և յանձնեց նրան պատասխան տալ էն ամէն բողոքներին, որ լինում էին Ինկվիզիցիայի վճիռների վրայ։ էս ատենը ընկաւ Դ Ինոկոյ Մանրիկ Սեվիլիոյ Եպիսկոպոսը։

Քաղաքացոց տեսանը, որ Խապանիուն էր, շատ օգտակար էր բնակչաց համար. նրանց փողերը էն տէրութեան սահմանից դուրս չէին գնում. բայց Հռոմայ գահը էս տեսանէ նախասպասութիւնը վեր գցեց. նա չէր դադարում ընդունել բողոքները շատ Խապանիացիներից, որոնք վախենում էին Կասթիլիումը երթալ. Ս. Յակոբի ծայրագոյն իշխանութեանց մէկ մէկու դպչելը ծանրացրուց էն ողորմելիների թշուառութիւնը, որոնք Հռոմին էին բողքում։ Թէ և պապին փող տալիս էին և նրանից ներողութիւն ստացած դալիս էին Խապանիայ, այնու ամենայնիւ դատապարտուում էին, մինչ չըտալով հաշտեցուցչէ և ներողութեան կոնդակներին։ Ս. Յակոբ Ֆերդինանդը շատ սիրելով կայք խլելը, բանի տեղ չէր գնում պապի կոնդակը, որ Ինկվիզիցիայի անիրաւութեան և խստութեան վրայ անբաւականութիւն էր ցոյց տալիս, և որ հրամայում էր հեղութեան հոգով վարուել յոժարակամ ապաշխարողների հետ։ Ինկվիզիտորները թանկ համարելով ժողովրդի յարդը և չ՚ընկալելով նրանց վնասները անիրաւ ցոյց տալ, սատանի վնասում էին նրանց բռնած կանոնների վրայ, որոնք որ շատ յարմար էին նրանց նպատակին։ Այս չարութիւնը կարող էր բառնալ միայն պապը, բայց նա վախենում էր Ֆերդինանդի կամքին դիմանել, և միայն մտածում էր, թէ Խապանիայ Ինկվիզիցիային ինչպէս տայ հաստատուն և վայելուչ ձև։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ։

Մեծ Ղ ԷՆԵՐԱԼ ԺՈՂՈՎԻ Ա — Ծայրագոյն Խորհրդարան։

Սկսած Ղ 1483 թուի կոնդակով սկիզբն դրեց շատ նոր կանոնների, որոնց մէջ հրովարտակաւ հրամայած էր, թէ Ինկվիզիցիան պէտք է լինի հաստատուն դատարան, որը որ ունենայ յատուկ պետ ամենայն Ինկվիզիթորների, ընդհանրապէս և մասամբ։ Այն ժամանակը Թռալմոյ Տօրկուեմադան, որ Կաստիլիոյ զեներալ Ինկվիզիթոր էր, իրա իշխանութեան տակ առաւ Ս. ըրագոնիոյ նահանգներն էլ։ Ինոսենտիոս Ը և նրա յաջորդները հաստատեցին այս ընդարձակ իշխանութիւնը։

Տօրկուեմադան իրա ընտրութիւնը լիովին ճշմարտոց։ Չէր կարելի գտնել ուրիշ մարդ, որ սրանից աւելի ընդունակ լինէր կատարելու Ֆերդինանդի միտքերը կայքեր խլելու համար, Հռոմայ դահի միտքերը՝ տարածելով նրա իշխանութիւնը և քարոզելով կանոնները, և նոյն Ինկվիզիցիայի նպատակը՝ այն սաստիկ ահուդողով, որը որ նրան անշուշտ հարկաւոր էր։ Մեծ զեներալ Ինկվիզիթորը առաջ բաց արաւ չորս երկրորդ կարգի դատարաններ՝ Սեվիլիայում, Կորդուվայում, Լայենում և Սիուդատ-ռեալում. յետոյ հրամայեց Գրանիկանտներին սկսել իրանց պաշտօնը Կաստիլիայի զանազան վիճակներում։ Դատարանի նոր կարգադրութիւնները կատարելու համար Տօրկուեմադան կարգեց երկու օրէնսդիրներ իբրև անդամ և խորհրդական։

Ֆերդինանդը, որ շատ լաւ հասկանում էր, թէ գանձարանի համար ինչքան մեծ բան է այս առեանը յարմարաւոր կարգի մէջ տեսնելը, հաստատեց աղքունի խորհրդարան Ինկվիզիցիայի, որ անուանեցաւ Ծայրագոյն խորհրդարան։ Մեծ Ինկվիզիթորն էր նախագահ, մին Ալկիսկոպոս և երկու Օրէնսդիրներ խորհրդակիցք, որոնք ունէին վճռական ձայն միայն քաղաքական իրաւանց վերաբերեալ

գործոց մէջ. իսկ այն գործոց մէջ, որոնք վերաբերում էին եկեղեցոյ իշխանութեան, ունէին միայն խորհրդակցութիւն. էս բանը շատ անգամ ղեներալ Ինքվիզիտորի և ծայրագոյն խորհրդարանի անդամոց մէջ վէճերի պատճառ էր լինում։

Որչափ ժամանակից յետոյ, այն է 1484 թուին, Տորկուեմադան հաւաքեց ընդհանուր ժողով Ինկվիզիտորների Սեվիլիոյ քաղաքում, և այն ժողովը Իսպանիոյ Ինկվիզիցիայի առաջին օրէնքները հրատարակեց, անուանելով հանուն։ Այդ կանոնագիրքը քան և ութը անդամ էր բաժանած։ Առաջին երեք անդամները խօսում էին, թէ ինչպէս պէտք է քաղաքներում դատարան բացուի, թէ ինչպէս պէտք է հրատարակել կամաւ չը յայտնուող հերետիկոսաց և ուրացողաց դէմ սահմանած վճիռները, և նշանակեցին ժամանակակէտ ողորմութեան կայքերը չքնելու համար. այս կանոնագրութիւնները շատ բանում նման էին հին Ինկվիզիցիայի կանոններին։

Չորրորդ անդամը ասում է, թէ ողորմութեան ժամանակակէտից առաջ ինքնակամ խոստովանութիւնը պէտք է գրել դատարանի հաշիւնին գրելը. այսպէսի դիպուածումը ողորմութիւն անում էին միայն նրանց, որոնք մատնում էին ուրիշներին։

Հինգերորդ անդամը արգելում էր ծածուկ արձակում տալ բացի Ի մին դիպուածից՝ երբոր ապաշխարողի յանցանքը ոչ ով չէր իմանում. էս կանոնը մատնում էր ա՛ֆդօ - տա - ֆէ խոյտառակութեանը էն մարդին էլ, որ կամաւ խոստովանում էր իրա մեղքը, և ստիպում էր մեծ գումար փող ուղարկել Հռոմ, որ հրաման էր տալիս էն փող տուողին ազատել խայտառակութեան հանդէսից։

Վեցերորդ անդամը վճռում էր զղջացողին զրկել ամենայն պաշտօնից և արգելել, որ չը գործ ածէ ոսկեղէն, արծաթէղէն, ակնեղէն, ճոթեղէն և բարակ շալեղէն. այսպէսի ապաշխարութիւնը հարստացնում էր Հռոմայ գահը անթիւ խնդիրքներով իրանց վերադրեալ զարդերը գործ ածելու իրաւունքը ետ դարձնելու համար. այսպէսի խնդիրքները քննում էին Հռոմումը և առ ձեռն փողով բաւականում էին տալիս։

Եօթներորդ անդամը դրամական ապաշխարանք էր դնում նրանց վրա էլ, որոնք յօժարակամ խոստովանում էին իրանց հերետիկութիւնը։

Ութերորդ անդամը ասում էր, թէ կամաւ զղջացողը ողոր-

մութեանը ժամանակակից յեւոյ չէ կարող ազատուել կայքի խլելից, բայց էն կանոնին Կ'ենթերկուի հերետիկոսութիւն ընկած օրից։ Այս երկու գլուխը ցոյց են տալի, թէ Ֆիրդինանդի ծաթոլիքութիւնը ոչքան բանի ակնկալութիւն ունէր Ինկվիզիցիայից։

Ինեերորդ անդամը հրամայում էր թեթեւ ապաշխարանք դնել միայն տանելու տարեկաններին վրա, եթէ նրանք ինքնակամ խոստովանուին, բայց թէ այս տառն օրինադիրները ի՞նչ էին հասկանում ասելու ապաշխարանք բառը։

Տասներորդ անդամը պահանջում էր նշանակել էն ժամանակը, երբ եկեղեցւոյ հետ հաշտուողը ընկել է հերետիկոսութեան մէջ, որ գիտենան, թէ նրա կայքի ո՞ր մասը պէտք է մտնի գանձարանը։ Այս անդամի զօրութեամբ խլուեցան շատ կանանց բաժինքումը բերած կայքերը, էնդուր որ նրանց կայքը խլում էին իրանց հօրը մեղքի համար։ Տե՛ս թէ ի՞նչ անկարգութիւն է գերդաստանի համար։

Եթէ հերետիկոսը երկար ժամանակ մնում էր դատարանի գաղտնի բանտումը, և Ճշմարիտ զղջմամբ խնդրում էր արձակում, էն ժամանակը 11 անդամը ընդունում էր էս զղջումը և դնում էր նրա վրա ապաշխարանք։ և էս ապաշխարանքն էր մշտնջենական բանտարկելութիւն։

Երկոտասաներորդ անդամը իրաւունք էր տալիս Ինկվիզիցիօնարին մատնել մարմնաւոր դատաստանի եկեղեցւոյ հետ էն հաշտուողներին, որոնց խոստովանութիւնը անկատար էր համարում և զղջումները երեսանց, ուրեմն մարդոյ կեանքը կախուած էր Ինկվիզիցիօրի կամքից։

Երեքտասաներորդ անդամը մի և նոյն պատիժը սահմանում էր էն ամենի վրա, որոնք պարծենում էին, թէ խաստովանութիւնում թաքցրել էին իրանց մեղքերը։

Չորեքտասաներորդ անդամը անզեղջութեան մէջ էր դատապարտում նրան՝ ում որ իրա վրա իլած ամբաստանութիւնների բոլոր յօդուածները հերքում էր։ Այս անդամի զօրութեամբ հազարաւոր ողջակէզներ ընկնում էին վիայտակոյտի վրա, որոնք թէ և բոլորովին անմեղ էին, բայց համարւում էին իսկական յանցաւոր։

Հնգետասաներորդ անդամի զօրութեամբ, եթէ յանձն չառնող մեղապարտի դէմ դուրս էր գալի ապացոյց, էնպիսին պէտք

էր մատնուէր տանջանքի. եթէ տանջանքի մէջ վէրքն էր առնում իրա մեղքը, և յետոյ իրա խոստովանութիւնի վրա հաստատ էր մնում, էն ժամանակը դատապարտուում էր իբրև յոյժ նանցաւոր. իսկ եթէ տանջանքի մէջ ասած խոստովանութիւնից հետո էր կանգնում, էն ժամանակը կրկին մատնում էին տանջանքի։

Պեշտատներդրդի անդամը արդելում էր տալ մեղապարտին վկաների ցուցմունքի լիակատար պատճէնը։

Տաներեթներդրդի անդամը պարտաւորութիւն էր դնում Ինկվիզիցիայի օրենքի վրա, որ իրանք հարցնեն վկաներին։

Տան և ութներդրդի անդամը հրամայում էր, որ տանջանքի ժամանակը ներկայ գտնուին մին կամ երկու Ինկվիզիցիայի օր, որպէս զի մեղապարտի ցուցումը լսեն։

Տան և իններդրդի անդամը յոյժ հերետիկոս էր համարում նրան, ով որ չէր ներկայացնում Ինկվիզիցիայի օրենքին պաշտօնական հրաւիրանօքը։

Տաներդրդի անդամի զօրութիւնը եթէ մեռած մարդոյ դրքերից կամ նրա վարած կեանքից երևի, թէ նա հերետիկոս է էլել, էն ժամանակը պէտք է նրան պատժել իբրև հերետիկոս, հանել գերեզմանից նրա ոսկորները և խլել էն կայքը, որ նրա ժառանգներին է մնացել։

Տասներեքի անդամը հրամայում էր Ինկվիզիցիայի օրենքին դատաստանի տակ գցել ամենայն իշխանաց վատաղներին. պատժապարտ համարել իշխաններին էլ, եթէ նրանք որպէսի և էլ ընդդիմութիւն ցոյց տան։

Տասն երկու անդամը հրամայում էր պատժապարտից խլած կայքի մին վեցը մասը տալ նրանց որդկերանցը իբրև ողորմութիւն. քայց էս դարդակ խաբէութիւն էր. Ինկվիզիցիայի բանք չէր տապաքաղների համար հոգալ, որոնց բաժինն էր միայն աղքատութիւն և յուսահատութիւն։ Այս կանոնագրքի վերջի վեց անդամները բուլանդակում էին, թէ ինչպէս պէտք է Ինկվիզիցիայի օրենքը վարուին իրար հետ և իրանց ստորադրեալների հետ։

Այս կանոնադրութիւնները անդադար աւելանում էին ուրիշ նոր կարգադրութիւններով նաև սկզբից. քայց թէպէտ փոփոխութիւնները լինում էին, այնու ամենայնի դատաստանի ձևը մնում էր մի և նոյն։ Ինկվիզիցիայի օրենքները միշտ կատարում էին իրանց կամքը, որ այնքան ատելի և անխնայ օրինադրութեան հիմն էր. պատժա-

պարտք ոչինչ հնարք չունէր օրինաւոր կերպիւ պաշտպանել իւրան, և դատաւորները ունենալով իրանց ձեռքումը իրաւունք՝ հաճարել նրան մեղապարտ կամ կասկածաւոր՝ առանց պահանջելու ոչ և լոյէ ապացոյց, միշտ վերջինն էին վնասում։

Ս. յաղխի արիւնածարաւ կանոնդիրքը, որ յանձնուած էր մարդկանց՝ որոնք հաղարաւոր մարդիկ ոչրերով կարծում էին պաշտօն մատուցանել Ս. առաջ, չէր կարելի որ Ինկվիզիցիայի չ'առնէր առել։ Շատով նրա դէմ զարթաւ մեծ առերեսութիւն։ Խարանիցը նրա դէմ կանդնեցան չը խնայելով իրանց արիւնը՝ մանաւանդ Ս. ըրադոնիայումը, որ տեղ կայքի խլելը անկարելի էր էն կանոնների զօրութիւնով, որոնք տրուած էին Ս. ըրադոնացոց։ Ս՚որ կանոնների դարձածութիւնը և կատարումը ապատամբեցրին ազնուականներին և ժողովրդին. տէրութեան դլխաւորները դիմեցին դէպ 'ի Պապին և Ֆերդինանդին Ինկվիզիցիայի նոր հրատարակած կանոնադրքի դէմ, ուղարկուեցան դեսպաններ Հռոմի և Խարանիոյ դուռը խնդրել, որ դանեան արդելուն կայքի խլելը, որը որ անհամաձայն էր էն թադաւորութեան օրէնքներին։ Ս. ըրադոնացիք յոյս ունէին, թէ էս կանոնի ոչնչանալովը Ինկվիզիցիան էլ ինքն իրան կըմերջանայ, բայց մինչև Ս. ըրադոնիայի ազնուականները խնդիրը կըտային, նոր Ինկվիզիթօրները շատ նոր քրիստոնեաներ դատապարտեցին հրապարակական և մահաւոր աֆիթոդա-ֆէ։ էս պատիժները աւելի կատաղեցրին Ս. ըրադոնիայ Պարլամանտներին։ Սրանք վախենում էին, թէ չը լինի որ իրանց մէջ էլ պատահին Կասակիայի էն տեսարանները, որոնց մէջ երեք տարուայ ապրուած Ինկվիզիցիան, որ ստորադրեալ էր կրօնաւորների և Ֆրանսիի քահանաների, ոչրեց հաղարաւոր մարդիկ։ Այսպիսի խառն դործերումը տեսնելով, թէ անօգուտ է պապին և թադաւորին դիմելը, Ս. ըրադոնի շատ ընտիրները միաբանեցան և խօսք դրին ապանել մին կամ երկու Ինկվիզիթօր, որ մէկէլներին վախեցնեն, և էնդրում ստիպեն միւսներին հրաժարել իրանց պաշտօնից։

Մի քանի ամիսների առաջին հարուածը ուղղած էր Ինկվիզիթօր Պետրա Ս. ըրուէի դէմ, բայց կատարումը անցաջող դուրս եկաւ։ Ս. ըրուէն իմանալով պատրաստած վտանգը՝ փրկուելու հնարքներ դործ դրաւ, հաղաւ շորերի տակից զրահ և դտակի տակից երկաթի արանձ։ Բայց այնու ամենայնիւ միաբանած-

ներըը երեկոյեան ժամանակ մօտացան նրան եկեղեցւոյ սեղանումը, խնեցին վրէն, և էնպէս սատիկ վիրաւորեցին, որ նա երկու օրից յետոյ մեռաւ, այն է 17 ն սեպ" 1485 թուին։

Բայց այս ապանութեան ներդործութիւնը էնպէս չ'իլաւ, ինչպէս յոյս ունէին դաւակիցները։ Իւր քրիստոնեաները Ինկվիզիթօրների դրդելովը կամենում էին Ադրուէի մահուան վրէժը առնել. նրանք մեծ խռովութիւն հանեցին, որոյ հետևանքներըը շատ զարհուրելի կը լինէին, եթէ Ֆանատիկ բազմութեան սրտերը չը հանդարտացնէին մեղապարտներին պատժելու խոստմամբ։

Ինկվիզիթօր Ադրուէին մեծ հանդէսով թաղեցին, և քիչ մնաց որ սրբոց կարգը դնէին։ Քիչ մնաց, որ էս Գոմինիկեան կրօնաւորին համարէին պատրոն (փէր) Ինկվիզիցիայի և դատարանի անդամների պաշտպան, և էս խնդութեամբ կատարուեցաւ էլ 1664 ին Ֆ Ադէքսանդր Պապի ժամանակը։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

Լեռներում Ինկվիզիցիան Պիրենէական Լեռներում։

Գոմինիկեան կրօնաւոր Ադրուէի ապանութիւնը սատիկ կատաղացրուց բոլոր Ինկվիզիթօրներին, որոնք երդուեցան նրա մահուան վրէժն առնել, և Տորկուեմադը հրատարակեց սատկագոյն հրամաններ՝ զոնել Ինկվիզիցիայի պատիւը ոռի տակ առնող յանցաւորներին և նրանց խորհրդակիցներին, և իբրև Ինկվիզիցիայի թշնամիներ և հերետիկոսներ մատնել պատուհասի։ Ապանողներից մինը տանջանքի մէջ բոլոր բանը քաց արաւ ինչ որ գիտէր էն

վիրաբանութեան վրայ, և Ինկվիզիթորների հետաքննութիւնը թեթեւացրուց յոյժ մեծ քանի դաւակիցների անունները։ Ոչ միայն է համարձակ դրել էին բոլոր գերդաստանները, որոնք Ինկվիզիթորների վրէժխնդրութեան զոհ դառան. քիչ ժամանակուանը նրանք վիճաբանին երկու հարիւր մարդից աւելի. և որովհետև մեծ դարտակ ցուցումն էլ հատատ ապացոյցի տեղն էր բռնում, ենդուր համար աւելի շատ մարդիք խորը բանտերումը դանդաղ մահով կորան։ Բաւական էր միայն մեծ վիճաստակների ապատանարան տալ, և էս կարեկցութեան համար շատ փոքր պատիժն էր խոյտառակելը, այն է ապաշխարողի շորերով կանգնեցնել, և յետոյ առաջնակայ Աֆթօ-տա-ֆէ պատկերքը այրել։ Ինկվիզիթորները ուշալին չէին խնայում, ենդուր համար ապնուա-կանաց վերին երեք կարգումը չքիար տուն, որի գոնեա մեծ անդամը պատժապարտ չը լինեը խոյտառակ շարջարանքի։ Աւարքից Տօն Յակոբան էլ, որ էր որդի երևելի Ինֆանտա Դոն-Կարլոսի, դրցուեցաւ Սարրակոսի բանտը, որտեղից դուրս բերին նրան հրապարակական ապաշխարանքի համար, որպէս օգնականի դաւակից-ներից մեծ քանիսի փախչելուն։ Ամբուէի ապանութեան գլխաւոր մեղապարտներին չորս կտոր արին. էշաֆոթի վրա տանելուց առաջ նրանց ձեռքերը կտրեցին, յետոյ չորս կտոր արին, և կտոր կտոր շարեցին ամէն հրապարակումը։ Նրանցից մինը պատիժից մեծ օր առաջ ինքն իրան սպանեց բանտումը, բայց նրա մարմինը ենտով չ'ազատուեցաւ մուսների վրէճակից։ Ինկվիզիթորները խոստանում էին շնորհել նրանց կեանքը, որոնք իրանց դաւակիցին կըմատնէին, և էստուր էլ մտիկ չ'անելով քաշ էին անում ամենքին առանց բացառութեան, միայն մեծ զանազանութիւնով, որ մատնողների ձեռները մեռնելից յետոյ էին կտրում։ Բարեբաղտաբար Ֆրանսիա փախած դատապարտածների մէջ էր մեծ Գասպար դէ Սանտակրուց անուն աղնուական մարդ, որ և մեռաւ Տուլուզայումը, նրա պատկերքը Սարրակոսումը այրելուց յետոյ. նրա որդիներանցից մինին բանտը դրին հօրը փախչելը իմանալուն համար. դեռ էս ուշինչ։ Ինկվիզիթորները դատապարտեցին նրան հրապարակական աֆթօ-տա-ֆէ և յետոյ ուղարկեցին նրան Տուլուզայ խնդրել էն տեղի Ռոմինիկեան կրօնաւորներից, որ հանեն դերեզմանից իրա հօր ոսկորները և այրեն. սրանից ջոկ պարտաւորեցին որդուն վերադառնալ Սարրակոսայ և խօսքով յայտնել

Ինկվիզիցիոն օրենքին էս Հայրապետութիւնը։ Ինկվիզիցիայի աղդած ահը սուխլեց որդուն անտրտունջ հնազանդել այսպիսի բարբարոսական հրամանի և անդութ ապաշխարանաց տակ ընկնել։ Այսպիսի վիճակը, որոյ լսելը անգամ մարդու միտքը սառեցնում է, բաւականաչափ ցոյց է տալիս մեզ այդ վիճակ դրօղ Ինկվիզիցիոն օրենքի բնութիւնը, և պարզ յայտնում է մեզ, թէ մինչև ո՞ր աստիճան անարդութեան մէջ էին էն ժամանակի ժողովուրդը։

Բանի որ Սարբակոսիայի Ինկվիզիցիոն օրենքը օրէ օր աւելացնում էին իրանց ողջակէզների թիւը, նրանց ընկերները մէկ մէկու առաջը կտրելով հեռանում էին նամանիլ նրանց ուրիշ երկրները։ Տօլեդոյ դատարանը էնքան շատ կատաղաւոր մարդիկ էր բանտը դցել, որ չէր հասնում օրինաւոր կարգաւ նրանց վրայ քննութիւն անել։ Երբոր ողբմութեան ամիսն անցկացաւ Ինկվիզիցիան ուզեց հաշտութեան ափթօ-դա-ֆէ, երբ 750 պատժապարտ այր և կին ենթարկեցան հրապարակական ապաշխարանքի, բոբլիկ, շապկանց և ձեռներին մոմ բռնած։ Դատն և հինգ օրից յետոյ էլի 750 մարդ քշեցին նոյն հանդէսը, և դեռ տարին չէր բոլորուել դրուեցաւ ջորրորդ դատակնիքը, որով այրուեցան քսան և եօթը անձինք, որոնց մէջ կային երկու քահանայ, և 950 հոգի հաշտուեցան եկեղեցւոյ հետ 'ի ձեռն դատարան սոսկալի ապաշխարանքների։ Այսպէս Տօլեդոյ Ինկվիզիցիան մին տարուայ մէջ սկսեց և վերջացուց 3327 դործ, չհամարելով նրանց, որք դեռ բանտերումը բռնած էին։ Այս դումարը ցոյց է տալիս, թէ մինչև անկանոն պէտք էր լինէին էս դործքերի ընթացքը, աւելի էն ժամանակը, երբոր դիտենք, թէ այս դրադրութիւնը՝ որի տասներորդ մասն էլ շատ ծանր է մին դատարանի համար, անում էին միայն երկու Ինկվիզիցիոն և երկու դրադիր։

Իսպանիայի միւս դատարանքի Ինկվիզիցիոն էլ համարեա թէ էնպէս էին վարում, ինչպէս Սեվիլայի, Տօլեդայի և Սարակոսի, և կարելի է վերաբար ասել, թէ նոր Ինկվիզիցիան իրա տարբերելու առաջին տարիներումը Իսպանիայի համար աւելի մահաբեր իրաւ, քան թէ շատ պատերազմներ միասին։ Ահա չափազանց խստութիւնը հարիւր հազար դերդաստանի ստիպեց թողնել հայրենիքը և տանել շատ միլիոն ֆրանկներ Ֆրանսիայ, որ ծախսում էր իրա ներքուստեան կոնդակները։

Կարծես թէ Ինկվիզիցիօնները դաշնակից էին իլել ժողովուրդին դէմ, բայց ժողովուրդն էլ շուտով միաբանեցաւ Ինկվիզիցիօնների դէմ։ Այս դատարանի խստութիւնը ամենայն տեղ այնպիսի խռովութիւններ յարոյց, որ մինչը թագաւորը հաղիւ թէ կարաց հանդարտացնել։ Շլեզիները մի և նոյն ժամանակումը յանկարծ բորբոքեցան Տերուէլումը, Վալենցիայումը, Լերիդումը, Բարցելոնումը և Կատալոնիայի համարեա թէ բոլոր քաղաքներումը, այնպիսի կամակորութեամբ, որ Ֆերդինանդը հարկադրեցաւ նրանց հանդարտացնելու համար գործածել ամենատարբեր միջոցներ։ Երկու տարի չափ ժամանակ հարկաւորեցաւ ապստամբներին հանդարտեցնելու, որոնց գլխաւորներն էին երևելի անձինք։ Մեծի Բարցելոնայ քաղաքը արութեամբ դէմ դրեց։ Այնտեղի՝ նմանապէս բոլոր գաւառի բնակիչները չէին՝ կամենում՝ մտնել նոր Ինկվիզիցիայի լուծի տակ, չէին ընդունում Տորկուէմադի իշխանութիւնը. հարկաւոր համարուեցաւ ամենայն բռնութիւնները գործ ածել, որ էստեղ մտցնեն Ինկվիզիցիան և Կատալոնացւոց կառավարեն։ Այն դրութեան մէջ էին Մայիորկայ և Մինորկայ կղզիները, որոնց բնակիչները ութը տարի շարունակ մնա չէին թողնում Ինկվիզիցիային. բայց 1450 թուին նա էնտեղերն էլ մտաւ։

Ընդհանրական ընդդիմութեան էս ամէն յայտնի նշանները անհերքելի ապացոյցներ են, թէ Ինկվիզիցիայի դատարանը մտցրած է թերակղզի մէջ բոլորովին Իսպանիացւոց կաւելին հակառակ բռնութեամբ և ահարկութեամբ։ Պապի փառասէր նպատակը, Ֆերդինանդի արծաթասիրութիւնը, և մին քանի կրոնաւորների ֆանատիզմը դցեցին Իսպանիան չարեաց այն անդունդի մէջ, որ հատարակ ժողովրդի խելքն էլ նախադուշակում էր, երբ ընդդիմանում էր Պապի կոնդակներին։

Այս կռիւի ժամանակը Տորկուեմադան, որ հաստատ դիմում՝ էր իրա նպատակին, դատարանի հրատարակած յօդուածների վրա աւելցրուց նոր յօդուածներ, և բոլոր Ինկվիզիցիօնների ժողով գումարեց։ Այս ժողովը հրատարակեց շատ նոր կանոններ, որոնք ղեներալ Ինկվիզիցիօրի իշխանութեան վրայ աւելցրին էլի մեծ զօրութիւն։ Այս ժամանակումը Տորկուեմադան հրատարակեց նոր կանոններ կայքերը խլելու ժամանակը պատահած չարութիւնները խափանելու համար։ Ոչ միայն խլած կայքերի կոյտը

շատ ահագին էր, բայց նրանց չարաչար գործածութիւնը և Ինկ-
վիզիթօրների կողոպտութիւնը մինչև էն աստիճան պակասցրուց դա-
տարանի եկամուտը, որ հաղիւ թէ ծախսը ծածկելու բաւական
էլ լինում։ Պարձկան զօրականները, որոնցով շրջապատած էին
նրանք, և Ինկվիզիցիի բանտատուները անդադար լցրած ողորմելի
բանտարներով, նրանց գանձարանը դատարկեցին։ Ֆերդինանդը
էլ չըստանալով նրանցից փող, հրամայեց վերաքննել Ինկվիզի-
թօրների ձեռքի գումարները և պակսածը լցնել։ Ինկվիզիթօր-
ների անհաւատարմութիւնը էնդով աւելի արժանի է նախա-
տանքի, որ թագաւորը նրանց ապրուստը չափից աւելի էր նշա-
նակել, նաև էն հանգամանքներումը, որոնք դաշնախօսութեան
մէջ յիշուած չէին։ Պ. Յապիսի վճիռներով և դրամական ապաշ-
խարանքներով, որոնք դրուում էին եկեղեցւոյ հետ հաշտուող մարդ-
կերանց վրայ, Տօրկուէմադը Ինկվիզիցիայի գանձարանը կարգի
դրեց, և ծախուց շատ յօդուածների վրայ կարողացաւ նշանակել
ռոճիկ հաղարաւոր լրտեսների որոնք ցրուած էին ըոլոր Խապա-
նիումը։ Այս վերջին հնարքը ահ գցելով նաև առաջուան քրիս-
տոնեաների սիրտը, ատելի արաւ մեծ զեներալ Ինկվիզիթօրին
և նրա կենացն էլ մեծ վտանգ էր սպառնում։

ՀՈՐԴՈՐԴ ԳԼՈՒԽ։

Հոլանդուհի Իզաբելլայ, Լեոպոլդ և հահ Տօրքուեմադայ։

Խալանիոյ նախկին քրիստոնեաները, որոնց Հրէից դէմ ուղեցած ատելութիւնը համարեա թէ աւելանում էր Ինկվիզիցիայի հետաքննութեան չափով, ոչինչ բան չէին խնայում, որ խեղճ Իսրայէլացիներին ատելի անեն դատարանի և կառավարութեան աչքում էլ։ Որանց յանցաւոր էին ցոյց տալի ոչ միայն հին քրիստոնեաներին ուրացութիւնի համոզելումը, այլ և բարդում էին նրանց վրա զանազան որբապղծութիւններ և յանցանքներ. զոբօրինակ. ասում էին, իբրու թէ նրանք յաւիշտակում էին քրիստոնէից մանկունքը, խաչում էին նրանց աւագ ուրբաթ օրը, ծաղը էին անում եկեղեցւոյ խորհրդոյ վրա, և միշտ դաւակից են լինում տէրութեան խաղաղութեան դէմ իլած խորհրդներումը։ Որանցից ջոկ մեղադրում էին Հրէից բժիշկներին և դեղավաճառներին, իբրու թէ նոքա քրիստոնէից դեղում են։ Այս ամէն ամբաստանութիւնները հաստատելու համար բերած ապացոյցներն էին դարդակ. բայց կուսակցութեան հոգին ընդունեց նրանց իբրև անհերքելի և պահանջում էր Հրէից դուրս քշել այն տերութիւնից։

Հրէայք նախագուշակում էին ապառնացեալ մրրիկը, և փորձով գիտենալով, որ նրան ետ դարձնելու համար բաւական կըլլինի փողով յագեցնել Ֆերդինանդի բարկութիւնը, պարտաւորեցան հասցնել նրան երեսուն հազար դուքաթ, Ֆերդինանդի Մաւրերի դէմ իլած պատերազմի ծախքը ծածկելու համար։ Թագաւորը ընկալաւ էս ընծան, բայց Ֆանատիկ Տօրքուեմադը յանդգնեցաւ դէմ կենալ։ 1492 թուի Մարտի 31 ին հրամայեցաւ դուրս եկաւ որ Հրէայք՝ այր և կին, մեծ և պզտիկ դուրս գնան Խալանիայից։ Ֆերդինանդը ապառնացաւ նոյնև գըլխատ պարտութեան պատիժ և կայից յաւիշտակութիւն նրանց՝

որոնք չեն կատարել հրամանը չորս ամսուան։ Այս խիստ հրամանը ստիպեց Հրեաներին կամ փախչել կամ մկրտուել։ Ամարեան թէ ամէնքը շտապում էին կայքերը ծախել և թողնել էն երկիրը, ուր տեղ ապահովութիւնը այնքան քիչ էր և էս գաղթականութիւնումը Խալանիան կորցրուց աւելի քան 800000 բնակիչներ։ բաց 'ի սրանից Գրենադի թագաւորութեան նուաճումը ստիպեց Մաւրերի մեծ բազմութիւնը գաղթել Աֆրիկայ։

Հրեից հալածումը և Ֆերդինանդի զօրաց Գրենադի նուաճելը մատոյց Ինկվիզիցիային նոր ոգջակիզներ։ Էնդուր որ Խալիֆայից և Մահմատականաց մէջից, որոնք ընդունեցին քրիստոնէութիւնը միայն ցանկանալով մնալ իրանց հայրենիքումը, խիստ քիչերը դարձան Հիմարիա եկեղեցին անկեղծաբար։ Ինկվիզիտորները ժամանակ չ'անցկացրին գտնել փոքրհոգիներ և փայտակոտները շուտով շատ մարդիկ լսեցին։ Ֆերդինանդը էս բանումն էլ Ինկվիզիցիայի արիւնածարաւութեան մատակից դառաւ։ Գաղութիւնը հացրուց մեղ էն չարչարանքների աւանդութիւնը, որոնցով տիչացան Հրեաները, որոնք գտնուում էին Պալակայումը էս քաղաքը առնելից յետոյ։ Նա հրամայեց նրանց ծեծել ծայրերը սրած Հիպառներով։ Այսպէս չարչարանք դրած էին ածում միայն Մաւրերը էն յանցաւորների վրա, որոնք ատելագում էին թագաւորին։ Այնու ամենայնիւ, Տօրկուեմադի Ֆանատիզմը չկիշացաւ Հրեից և Մաւրերի հալածանքովը։ Մատնուեցան դատաստանի Սիկսվիի և Կալակսրի եպիսկոպոսները, որոնք բոլոր հասարակութեան մէջ մեծ պատիւ ունէին, և նոցա մեղքը միայն էն էր, որ մկրտուած Հրեից սերունդ էին։ Ի զուր էս երկու վիճակաւորները ցոյց էին տալիս Պապի կոնդակները, որոնք Ինկվիզիտորներին արգելում էին եպիսկոպոսներին դատապարտել, այլ նոցա դատաստանը պահուած էր ամ միայն Պապին։ Տօրկուեմադը կարցեց դաղտնի կարգադրութիւն, որի զօրութեամբը երկու եպիսկոպոսը պէտք է դնային Հռոմ և էնտեղ Պապի առաջը իրանց գլուխը ուղղեին։ Այս ժամանակներումը Ինկվիզիցիայի համար միայն բաւական էր դիտենալ, թէ ամէկ դարձած և ապա մեռած Հրեայ հարուստ կայք է թողել։ Այս իսկոյն ամենայն հնարքները դրած կ'ածէր հաղուցեալին հերետիկոս դուրս բերել, որպէս զի նրա յիշատակը անարգանաց տակ գցի, կայքը յափշտակի, հանէ ոսկորները իրակը տալու - Ենրա որդիքը զրկէ

ամենայն իրաւունքից։ Այսպէս էր Տօրկուեմադէ դիտաւորութիւնը երկու վիճակաւորների դէմ։ Բայց էս բանը չը յաջողեցաւ։ Պապը ինքը վերացուցեց դործը և ուղարկեց ուրիշ եպիսկոպոսների մօտ, որոնք վճռեցին յօդուտ մեղադարտների։ Սրանից ջոկ՝ պապը կամենալով քաշած հալածանքների փոխարէն վարձատրել նրանց՝ նշանակեց Սիկիլիի եպիսկոպոսին Անտապօլիի դեռապան, և Կալաբրիայի եպիսկոպոսին Անեստիկի դեռապան։

Տօրկուեմադը տեսնելով, թէ զոհերը սլքուեցան ձեռքից, կատաղութեամբ նոր դատ բաց արաւ, և կարաց ապացուցանել, թէ էն եպիսկոպոսները հերետիկաութեան մէջ են ընկած և մինչև էն տեղ հասաւ, որ նրանց կայքը խլեց, և եպիսկոպոսական կարգը վերը առնելից յետոյ դցեց բանտը։ Մէն խօսքով, Ինկվիզիցիօնների բոլոր սատանութիւնը միշտ վերջանում էր անշուշտ յաջողութեամբ ինչպէս մոքերումը դրած էին. նոքա չէին վախենում ձեռք տալ նոյն անիրաւ ամբաստանութեանց, միայն թէ էն իրանց բռնաւորութիւնը պաշտպանելու օդտէր։

Ոչ միայն մարդիկ էին առաջիկայ Տօրկուեմադէ նախանձոտ հալածմունքներին, այլ և դրքերն էլ չէին պրծնում նրա արթուն աչադրութիւնից։ Թէպէտ և նրանից առաջ էլ կար ժողով եպիսկոպոսների և դիւանատանց նախադահների, որոնք մտիկ էին տալիս դրեանց տպուելուն, դուրս տալուն և ծախուելուն վրա, բայց Տօրկուեմադը ամենայն հանդամանքներից օդուտ էր հանում, իրա իրաւունքը ամէն տպարանների մատուցից (դոպիսկ) դուրս եկածների վրա տարածելու համար։ 1490 թուին նա հրամայեց Սալամանկումը էրել աֆ-թօ-դա-ֆէ ժամանակը Հրէից շատ Աստուածաշունչներ էն պատճառաւ, որ թէ նրանք լիքն էին Հրէական մոլորութիւններով։ Հետոյ երկրորդ աֆթօ-դա-ֆէ ժամանակ էրուեցան 6,000 դրքեր, որոնք Ինկվիզիցիայի գրոց քննիչները համարեցին վատաւորը, թէ և նրանց մէջը դտնուում էին շատ երևելի յօրինուածներ, որոնք հալածանաց տակ ընկան միայն էնդուր, որ նրանց չէին հասկանում։ Տօրկուեմադի յանդգնութիւնը մինչև էնտեղ հասաւ, որ նա հրամայեց Սարբոնայի աբբայարանը Հենրիխի դրքատունը բոլորովին ոչնչացնել։ Այսպէս բարբարոսական հրովարտակի տակն ընկան բոլոր դրականութիւնը, բոլոր արհեստները և դիտութիւնը, նաև Աստուածաբանութիւնը,

որը որ Ինկվիզիցիոնները դնում էին ուսումնարանում և հմայական գրքերի կարդումը։

Տասն և ութը տարի արած չարագործութիւնները, որոնք գործուեցան Տօրկուեմադէ Խարանիումը զեներալ - Ինկվիզիցիոնի օր նշանակուած օրից մինչև նրա մահը, այն է մինչև 16 սեպտեմբերի 1498 թուն, ենքան շատ էին, որ պատմիչներին անկարելի է համարքի տակ դցել նրա կատարուածեան մասնուած զոհերը։ Ամենք պնդում էին, թէ Տօրկուեմադը այրել է կամ մոռնել է անարդանաց. պատիժ ունեցել քան 200,000 հոգի այր և կին։ Ուրիշները հիմը բռնելով են ժամանակուայ շարադրութիւնները և հին ձեռագիրները առաջարկում են իրրև անելիքայ, թէ 13 Ինկվիզիցիաները՝ Սեվիլիումը, Կորդուվումը, Ջաէնումը, Տոլեդումը, Կադիկսումը, Վալլադոլիդումը, Դալլակորումը, Մուրցիումը, Կուենցիումը, Սարրակոսումը, Վալենցիումը, Բարցելոնիումը և Մայորկումը, որոնց մէջ կամաց կամաց մեռան 1481 ից մինչև 1487ը, կրակով վէջացան Տօրկուեմադի կատարուածեան ժամանակ 10,220 հոգի, 6860 հոգուց պատկերները էրուեցան, և մոռնուեցան կայքերից ջնջուելով ուրիշ պատիժների 97,371 մարդ։ Խաղ անպատճառ պէտք է ունենալ մին հարկաւոր ծանօթութիւն, որ բաղմացնում է Ինկվիզիցիայի զոհերի իսկական թիւը։ Պատկերները էրածներից զոնէ 4 հազարը կամաց կամաց մեռան դատարանի բանտերումը, 2 հազար ողջակէզների ոսկրները հողից հանեցին և էրեցին, ուրեմն պատկերները էրածներից շատ քիչը կարացան վախնել Ինկվիզիցիայի ձեռքից, և այսպէս բոլոր դումարով 114,400 դերդաստան վնասուեցան անարգանաց տակ ընկնելով և քարուքանդ լինելով էս սրբուենաճարաւ բռնաւորի ժամանակը։

Այս ամէն վերագրեալ քամբախտութիւնները առաջին մեծ զեներալ - Ինկվիզիցիոնի բռնած կատարուածեան Խանէռս հետևանքներն էին. նրանք Աշմարտեցին ընդհանուր ատելութիւնը, որոնք որ ուղեկից էլան նրան մինչև գերեզմանը, և նրա գլխին թափեցին անէծքներ, որոնք ծանրաբեռնեցին նրա յիշատակը։

Տօրկուեմադը գիտէր, թէ իրա կեանքը միշտ վտանգի մէջ էր, և էնդուր համար պէտք էր միշտ զգուշանար։ Ամենայն Խանապարհ գնալիս նա իրա հետ առնում էր 50 Ինկվիզիցիայի հեծեալ ասպիսանաւորներ և 200 հետևակ։ Այն Խանապարհները, որտեղանց

անոյ էր կենում, պայծառ լուսաւորւում էին ջահերով, իբրու թէ թշնամի երկրից անցկացող դունդերի համար։ Այստուրից ջոկ նրա դրասեղանի վրա միշտ դրած էր միեղջերուի եղջիւր, որի համար ասում էին, թէ թոյնը յայտնելու և ոչնչացնելու զօրութիւն ունի։ Նրա անդուլ կրաւալարութիւնը և անթիւ աղաղակները պապին էլ վախացրին։ Տօրկուեմադը երբէք անդամ ատելիանաւորը ղրկեց Հռոմ անդադար մեղապարտութիւնից իրան պաշտպանելու համար։ Վերջապէս Գ. Զէքսանդը Օ դադարելով ամէնօրեայ ամենայն կողմից եկած բողոքներից մեծ Ինկվիզիցիօրի դէմ, վատահացաւ հանել նրա վրայից էս ծանր պաշտօնը, բայց Խսպանիոյ դրան հետ ունեցած պոլիտիկական նպատակներին մոլեկ տալով չկարաց կատարել իրա մտադրութիւնը։ Ուստի 23 ին յուլիսի 1494 թուի միայն ղրկեց Հրամանն, որի մէջ ասում էր, թէ նրա զառամեալ տարիքը և գործերի շատութիւնը յորդելով, տալիս է նրան օգնական չորս եպիսկոպոսներ ղեներալ-Ինկվիզիցիօրների ասուամբ, իրաւունքով որ նրանք մեծ Ինկվիզիցիօրի հետ վճռեն ամենայն հաւատոյ վերաբերեալ գործերը։ Իրաւի այս հնարքը լաւ հետևանքներ կունենար, եթէ Տօրկուեմադը էս Հրամանի ամ կարգադրութիւնները անօգուտ չանէր։ Նա մեռաւ առանց դադրեցնելու իրա անդուլ բռնութիւնը և իրա վարելու ձևը ասանդեց իրա յաջորդներին։

Տօրկուեմադը այնքան մեծ ահ էր դցել բոլոր Խսպանիացւոյ սիրտը, որ շատ երևելի աշնուականներ լաւ էին համարում իրանց մոլորմութիւնը ցոյց տալ դատարանին, քան թէ էսօր կամ էդուց ընկնել կասկածաւորների հաշիւը։ Էնդուր համար կամաւ մանում էին դատարանի մոլորում ասուիճանաւորների կարգը։ Այս օրինակը այն արտօնութիւնների հետ միասին, որոնք Ֆերդինանդը տուեց հոգևորական ժողովի անդամներին, շատ ստորին կարգի մարդիկ էլ դրաւեց։ Գ. Յակէս հաւաքուեցաւ փրիորութիւնը, որոյ լեգէօնները կարճ միջոցումը այնպէս ահեղ շատացան, որ մինչև քաղաքներումը ասուիճանաւորների թիւը ընակչաց թուից անցկացաւ։ Ասուիճանաւորները կատարում էին մեծ ղեներալ-Ինկվիզիցիօրի և նահանգական Ինկվիզիցիօրների թիկնապահների պաշտօնը։ Այս հոգևորական ընկերութեան մէջ գտնուելիս նրանք երդում էին անում հետապօտ լինել հերետիկոսներին և հերետիկութեան մէջ կասկածաւորներին համանապէս ամենատարակ

օգնութիւն ցոյց տալ դատարանի պաշտօնեաներին և զինուորներին մեղապարտներին բռնելու ժամանակը։ Այս աստիճանաւորներից մին քանի նախանձայոյզները իրանց վրա վերբ էին առնում լուտեսի, մատնչի և որոնողի պաշտօն։ Այս վայ նրա գլխին, ով որ էս աստիճանաւորներից մինի հետ փոքր ինչ անբաւականութիւն ի՛ունենար։ Ամենայն աստիճանաւորի աղատութիւնը համարեա՛ թէ միշտ կախուած էր 'ի զուր մատնութիւնից և սուտ մեղադրելից. ամենայն օր նա ուրիշ բան չէր տեսնում, բաց 'ի բանտերից, տանջանքներից և փայտակոխներից։

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

Ինչպէս էր հին ատենուանց պատիժները։

Ինկվիզիցիօնների իրանց զոհերը մատնած պատիժների թիւրամը պէտք է առաջին կարդումը դնել էն պատիժները, որոնք տալիս էին բանտի մէջ դերի իլած բոլոր ժամանակումը։ Դատարանի բանտերը շատ քաղաքներումը էին մանր և ցեխոտ սենեակներ, 12 ոտք երկայնութեամբ և 10 ոտք լայնութեամբ, վերից մին փոքր լուսամուտով, որտեղից այնքան նուազ լոյս էր մտնում, որ բանտարկեալները հազիւ թէ կարողանում էին բան ջոկել։ Այս սենեակի կիսումը տախտ էր կապած, ուրտեղ նրանք քնում էին։ Որովհետև էս տախտերը երեք մարդու համար հազիւ էին բաւական լինում, և մին սենեակի մէջ շատ անգամ պահում էին վեց կամ աւելի մարդիք, էն պատճառաւ առողջները հարկադրւում էին քնել գետնի վրա, մին գերեզմանատեսի տե-

ղումը։ Սենեակների մէջ այնպիսի խոնաւութիւն կար, որ և՛ քամբաղանները ին անկողնի վրայեն տուած խոտը քիչ ժամանակումը վերանում էր։ Սրանից կարելի է դուշակել թէ ինչ աստիճան ապականած էր հնոտեղի օդը, որ շատերին բանտի մէջ էր սպանում, և հնոտեղից դուրս հիւանդները էլ այնպէս այլանդակ էին լինում, որ նմանում էին մահ եկող կմախքների։

Բաց 'ի նեղ և ժանտախտային բնակարանից, խեղճ բանտարկեալներին չէին տալիս գէր կամ ուրիշ բան, որոնցով գոնէ մին ըսպէ մառանային իրանց զարհուրելի վիճակը։ Գանկատն էլ արգելած էր նրանց։ եթէ բանտարկեալը ցաւի աղաղակ հանէր, էն ժամանակ նրա պռօշները մին քանի օր բուշտի էին կապում։ եթէ հատրով ձէնը չէր կտրում, էն ժամանակը խեղճ նահատակին վազեցնում էին սրահումը և մարակով ծեծում էին։ Այս ծեծի տակն էին ընկնում նմանապէս նրանք, որոնք սենեակները մեղաղակ էին հանում և լրար հետ վիճում էին։ Այս բարբարական պատիժի տակ առանց զանազանութեան ընկնում էին այր և կին, մեծ և փոքր։ Պրահաս աղջկերանց, կուսերին և պատուաւոր տիկիններին միօրինակ մերկացնում և ծեծում էին։

Այսպէս էին դատարանի բանտերը և այսպէս էին վարում բանտարկեալների հետ Ժն դարու վերջերումը։ Յետոյ բանտերը մին փոքր լաւացրին, բայց բանտարկեալների վիճակը համարեա թէ միշտ միատեսակ էր։ Տարաբաղանների շատերը կամելով իրանց նահատակութեան վախճանին հասնել, իրանք իրանց սպանում էին։ Ուրիշներին, որոնք աւելի արժանի են խղճալու, հանում էին բանտից և տանում էին տանջանաց տունը։ Այստեղ ամենայն մեղապարտ, որը որ յանձն չէր առնում իրա վրա բարդած յանցանքը, մատնում էր տանջանքի։

Տանջանքի տեղն էր գետնափոր այր (Խուցաց), ուր մտցնում էին շատ ձախ ուժուռ ճանապարհներից. տանջանաց տան մէջ խորին լռութիւնը և տանջանաց գործիքները, որոնց վրա ընկնում էր երկու սեւ կերպարների նուազ լոյսը, մահաբեր ահ էին դցում ողորմելի պատժապարտի սիրտը։ Էնց Ինկվիզիցիօնների դէմուդէմ կանգնում էր մեղապարտը, երկու դահիճ սեւ կտաւից երկայն շոր հագած, երեսները ծածկած պլխանոցով, ուր միայն երկու աչքերի, քթի և բերանի համար ծակերը էին բաց արած, բռնում էին ողորմելին և մերկացնում էին մինչև շապիկը։

Ինկվիզիցիոն օրենքը իրանց անզիջումնեան հետ դիզձաւորութիւն խառնելով, յորդորում էին զոհին, որ խոստովանուի իրա յանցանքը, և եթէ բացասական պատասխան էին տանում, հրամայում էին սկսել տանջանքը՝ տահմանելով ձևը և ժամանակը։ Եթէ պատահում էր շահատուիլ, ասկորի կտրուիլ կամ մեռնել, Ինկվիզիցիոն օրենքը բողոքում էին, ամենայն քանի պատճառ դատապարտեալին ցոյց տալով։

Տանջանքը լինում էր երեք տեսակ. Ֆոռիով, (Հրատով), Ջրով և Կրակով։ Ֆոռիով պատիժը տալիս՝ պատժապարտի ձեռքերը մէջքի վրա ծալում և կապում էին, թոկի ծայրը անց էին կացնում Ճախարակից, որ պնդացրած էր օդոռքումը, և դահիճները քաշում էին ողորմելին բարձր ոչքան կարելի էր, մին փոքր ժամանակ նրան կախ ընկած բռնում էին, և յանկարծ թոկը թողնում էին. նահատակը գլխի վրա վէր էր ընկնում և գետնից կէս կանգուն բարձր քաշ էր մնում։ Այս սատանի թաւի տալը ամէն անդամների յօդերը քանդում էր. թոկը, որով կռնները կապած էր, մարմինը կտրում էր մինչև ջլերը և ասկորները։ Այնթէ տանջանքը մին ժամից աւելի էր քաշում, ողորմելի նահատակը զօրութիւնից և ամենայն շարժմունքից ընկնում էր, և էն ժամանակը միայն տանջանքը դադրեցնելով ղրկում էին նրանց բանտը, երբ որ Ինկվիզիցիայի բժիշկը յայտնում էր, թէ նահատակը կրմեռնի եթէ էլի չարչարեն։ Ողորմելին բանտումը մնում էր մատնուած տանջանաց և յուսահատութեան մինչև որ դատարանը կամենար նրա համար պատրաստել ուրիշ աւելի զարհուրելի տանջանք։

Տանջանք Ջրով։ Դահիճները պատրաստում էին պատժապարտին մին մէջը փորած դերանի վրա, որի մէջ կարող էր մին մարդի մարմին մտնել, և մէջ տեղը մին ճեղուկ էր դցած. մարմինը երկու տակ էր ընում և էնպէս էր ծռում, որ ոտները գլխից բարձր էին մնում։ Դ հարկէ էսպէս պատռած լինելով շնչառութիւնը շատ դժուարանում էր, և խեղճի ամենայն անդամները ցաւում էին թոկերի ճնշելից, որանք կտրելով մտնում էին նրա յօդուածների մէջ, և հանում էին արիւնները կապիչներից ոռաջ։ Մտիկ չդնելով այսպիսի զարհուրելի վիճակին դահիճները կոխում էին նահատակի բերանը մինչև խուչափողը բարակ թաց արած կտաւ, և էնդրոյ երեսն էլ էին ծածկում կշլակից մինչև աչքերը. յետոյ էս շորի վրայից քինոթը և բերանը ջուր էին ա-

ծում, և էնքան ծանր էին կախվում, որ մին ժամումը մին փունտ ջուր հաղիւ թէ կարելի էր կուլ տալ, թէև անդադար աճում էին։ Լոպէս ողորմելի նահատակը ոչուտ շնչառութեան համար մին վայրկեան էլ չէր ունենում. ամենայն րոպէ նա ուժ էր առնում կուլ տալ ջուրը յուսալով թէ գոնէ մին փոքր մասն օդ կը մտնի նրա միջ, բայց էդ արդելում էր թաց շորը, որով ծածկած էր նրա քիթը, և ջուրը, որ մտնում էր էնտեղից։ Լոտուր համար երբոր տանջանքը վերջանում էր՝ երեսի վրա ծածկած շորը արիւնաթաթախ էր լինում այն արեան ջղերից, որոնք բացւում էին նահատակի չարչարանց ճգանքից։ Այս էլ աւելը, որ ամէն րոպէ դերանը պատռտ էին տալի, և ամէն պատռտտալուց թոկերը, որոնցով կապած էին ձեռները և ոտները, հասնում էին մինչև ոսկրները։

Նթէ էս երկրորդ տանջանքով հնար չէր լինում յանձն առնուլ տալ, Ինկվիզիցիոնները սկսում էին հրդեհով պանջանքը։ Դահիճները կապում էին պատժապարտի ձեռները և ոտները էնպէս, որ նա չըկարողանայ ժաժդալ, յետոյ քսում էին ոտներին ճէթ, լուղ և ուրիշ էապիսի նիւթեր և բռնում էին կրակի դէմ էնքան ժամանակ, մինչև ոսկի աստիները տրաքում էին և երևում էին ջիղերը և ոսկորները։

Այս էին բարբարոսական միջոցները, որոնք Իսպանիական Ինկվիզիցիան գործ էր ածում պատժապարտներին իրանց կարծիքական մեղքը ասել տալու համար։ Պէտք էր ունենալ առանձին առողջուն որ մարդ կարողանար դիմանալ էսքան դառն տանջանքներին, որոնք կրկնւում էին շատ անգամ, քանի որ դատը շարունակւում էր, էնպէս որ՝ հէնց մեղապարտը սկսում էր փոքր ինչ լաւանալ, իսկոյն ընկնում էր նոր տանջանքի տակ։

Ինկվիզիցիոնները այնքան առաջ գնացին իրանց զոհերի համար նոր տանջանքներ գտնելումը, որ բարձրագոյն խորհրդարանը շատ անգամ արգելից նրանց մի և նոյն մարդին երկու անգամ տանջելից, բայց էս կրօնաւորները - սուտ բարբարոսները - գտնում էին պաշտպաններին խաբելու հնարը, և առաջնորդ իրանց ունենալով էն խորամանկութիւնը, որը որ յայտնելու համար յարմար բառ չենք գտնում, մին ամբողջ ժամ նահատակելուց յետոյ կրկին ուղարկում էին բանտը, և յայտնում էին, թէ տանջանքը էն. րոպէին դադարեցաւ, երբ որ անշուշտ հարկաւոր էր շա-

բանակել։

Դասէս նրանք մաշում էին նահատակները, և համարեա թէ միշտ ստիպում էին աւելի յանցաւոր խոստովանել իրանց, քան որչափ էին։ Նահատակները չարչարանքներումը մահը իրանց համար թեթեւութիւն էին համարում, իսկ ոմանք առանց վախի և տրտունջեան սպասում էին ա՛ՀՄՈ-ՊԱ-ՖԷ, որ իրանց ոչէրը էր բարձրացնէր վայելուչ վրայ։

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

Ա՛ՀՄՈ-ՊԱ-ՖԷ։

Ինկվիզիցիայի դատարանը սովորութիւն ունէր երկու անգամ կատարել Ա՛ՀՄՈ-ՊԱ-ՖԷ՝ հանդիսաւոր և ընդհանրական։

Մանաւոր Ա՛ՀՄՈ-ՊԱ-ՖԷՆ տարին մի քանի անգամ էր կատարւում, սահմանեալ օրերումը, զորօրինակ՝ աւագ ուրբաթ օրը, և մեծ պասի ուրիշ օրերումը, ինչպէս որ նշանակում էին։ Պատկերներով այրած ողջակէզների թիւը միշտ պակաս էր լինում, քան իսկական պատժածների թիւը։

Ընդհանրական պատիժները ուշ ուշ էին կատարում։ Ա՛յս հոգեւորականը պահում էին երեւելի դիպուածների համար, որպիսի են՝ Թագաւորի գահ բարձրանալը, նրա պատկի օրը, արքայազանց ծնունդը, երեւելի տարեկան տօնախմբութիւն։ Այս օրերումը Ինկվիզիցիան ուզղափառների համար կատարում էր տօն ընդհանրական Ա՛ՀՄՈ-ՊԱ-ՖԷ։

Ա՛ՄԵՆ պատժապարտեալներին, որոնցից շատը երկար տարիներով

տնքում էին բանտերումը, դուրս էին բերում էն տեղից մեռած կամ կենդանի և ներկայացնում էին բարբարոսական հանդէսին։

Ընդհանրական Ֆեստո-դա-ֆէ համար նշանակած օրից մինչև առաջ Ինկվիզիցիայի անդամները իրանց դրօշակով դատապարտեալներ արահլից դուրս էին գալիս և գնում էին մեծ հրապարակը, և յայտնում էին բնակիչներին, թէ մինչև ամսից յետոյ այս ինչ օր Ինկվիզիցիայից դատապարտեալ պատժապարտներին ընդհանուր վէճ կլինի։ Յետոյ ողջ քաղաքումը մանր էին գալիս մուներները վառով և շեփորայով (էպոքէոնով)։ Այս օրից սկսած պարապում էին պատարաստութիւնով, որ հանդէսը լինի փառաւոր և շքեղ։ Դատը համար սարքում էին մեծ հրապարակումը յիսուն տնանոցաւոր լայնութեամբ տախտ, որի բարձրութիւնը հաւասարւում էր թագաւորի նստելու պաշտօնական (էսլէոն) հետ։ Թէ թագաւորական քաղաքումն էր պատահում, թագաւորի պաշտօնական աջ կողմը տախտի բոլոր տարածութեամբ կանգնեցնում էին ամֆիթէատրոն 25 կամ 30 աստիճանի բարձրութեամբ, որանց վրա պէտք էր բազմէին բարձրագոյն խորհրդարանի բոլոր անդամները և Խպանիոյ մեծ ատենակալները։ Բարձր աստիճանի վրա ամպհովանոցի տակ բազմում էր անթափակալ աթոռի վրա Ինկվիզիցիայի գլխաւորը թագաւորի պաշտօնականից շատ բարձր։ Տախտի և պաշտօնականների ձախ կողմը սարքում էին երկրորդ ամֆիթէատրոն պատժապարտների համար։ Գլխաւոր տախտի մէջ տեղումը սարքում էին մէն ուրիշ տախտ, որի վրա շարում էին երկու տեսակ փայտեայ վանդակներ, որոնց մէջ նստեցնում էին պատժապարտներին մինչև դատավճռի կարդալու վերջը։ Վանդակների ետեմ ու դէմ կանգնեցնում էին երկու ամբիոն, մէնը ամբաստանչի կամ վէճերը կարդողի համար, մէսը քարոզչի համար։ Վերջապէս ատենակալների կարգումը դնում էին զոհարանները։

Թագաւորը, արքունի դերդաստանը, պալատի բոլոր տիկնները նստում էին պաշտօնականի վրա։ Մէս պաշտօնականն էլ սարքում էին դեսպանների և ուրիշ մեծ մարդկերանց համար։ Խէ ժողովուրդի համար սարքում էին ուրիշ տեղեր։ Պուներտիկների հրապարակելից մէն ամէս յետոյ հանդէսը սկսում էր։ Նէմնից առաջ գնում էին գործապանները, Դոմինիկեանները և ատիճանաւորները։ Երանք դուրս էին գալիս եկեղեցուց և գնում էին մեծ հրապարակը, կանգնեցնում էին նստեղ ու քոզով ծածկած կանգնելը

խաչ և Ինկվիզիցիայի դրոշակը և յեռ էին դառնում. միայն Դոմինիկեանները մնում էին ամիսթեատրոնի վրա և դիշերուայ վին մասը անց էին կացնում սաղմոս երգելով և եկեղեցական ժամասացութիւնով։

Ուրաւօտեան 7 ժամին թաղաւորը, թագուհին և բոլոր պալատականքը գուրս էին գալի պաշտօնքի. 8 ժամին հանդէսը գուրս էր գալի Ինկվիզիցիայի տնից և սկսում էր գնալ մեծ հրապարակը հետևեալ կարգաւ՝

Ա. Յարիւր գործլատան ձեռներին բռնած տէգեր և կարճ հրացաններ։ Այս հանդիսումը ներկայ գտնուելու իրաւունք ունէին նրանք ենգուք համար, որ հերետիկոսներին այրելու համար միայն էին բերում։

Բ. Դոմինիկեանները, որոնց առաջից տանում էին մեծ խաչ։

Գ. Ինկվիզիցիայի դրոշակը, որը որ տանում էր Մէդինացելի դուքսը էն արտօնութիւնով, որ տուած էր նրա տոհմին։ Այս դրոշակն էր կարմիր Հոթից, որի մի կողմը կարած էր Խապանիայ թաղաւորութեան նշանը, միւս կողմը հանած սուր դաքնի պատկով։

Դ. Խապանիոյ աղնուականքը և Ինկվիզիցիայի սատիճանաւորները։

Ե. Ամենայն ողջակիզելուները խառը այր և կին պատիժի յարմար դատակարդած։

Զ. Ամենայն ապաշխարանքի պատժապարտները գնում էին առաջ գլխաբաց, բոպլիկ, հագած վշեայ պատանք, կուրծքի և քամակի վրա սուրբ Անդրեասի մեծ խաչերով։ Նրանցից յետոյ գնում էին մնրակաւ ծեծելու, աքսորանքի և բանտարկելութեան պատժապարտները։ Երրորդ կարգումը գնում էին էն մարդիկը, որոնք դատաստանից յետոյ խոստովանութեամբ ազատուած էին այրուելուց։ Նրանք թոկով պինդ խեղդուէին. նրանց պատանքի վրա նկարած էին սատանէք և կրակ. նրանց դլխին գնում էին թղթեայ դատք երեք ոտնաչափ բարձրութեամբ, որ սուում էր (Կրոսոյո), պատանքի վրայի նման նկարներով։

Կամակորները, կրկին հերետիկոսութեան մէջ ընկածները, և բոլոր կենդանեայն այրուելունները գնում էին ամենից վերջը լրանցից առաջ գնացողների շորերով, միայն էն զանազանութեամբ, որ նրանց պատանքների վրա նկարած բոցերը քաշած

էին բուրգաձև։ Այս տարաբաղձներից շատ անգամ շատերը գնում էին բերանները կապած։ Բոլոր մահապարտների հետ գնում էին երկու ատամնաքաղ և երկու աբեղայ. ամենայն պատ-ժապարտները ձեռները ետին բռնած ունենին վատաց մեղրամոմ։

Կենդանի ողջակիզների հետ տանում էին այրուելու նշա-նակած, բայց ոչիտ-դա-ֆէ առաջ մեռածների խաւարտից (Տուխուչէյից) ձեռած պատկերները, նմանապէս նրանց ոսկորները ար-կղներով։

Գլխաւոր դատարանի անդամների, Ինկվիզիցիօնների և հո-գևորականների մեծ ճիտխումբը գնում էին բոլոր հանդէսի վեր-ջը և սրանց ետևից գնում էր Ինկվիզիցիօնը ծիրանի շորերով և նրա թիկնապահներով շրջապատած։

Հէնց ինչպէս հանդէսը հասնում էր մեծ հրապարակը և ամէն մարդ կանգնում էր նրա տեղը, քահանան սկսում էր պա-տարագը և գալիս էր մինչև աւետարանի կարդալը։ Այն ժամա-նակը մեծ Ինկվիզիցիօնը վեր էր կենում աթոռից և ծանկելով նրա թաղը մօտենում էր թագաւորի պաշտօնամերին և առաջար-կում էր թագաւորին կարդալ էն երդման թուղթը, որով Իս-պանիոյ թագաւորները պարտաւորած են պաշտպանել կաթոլի-կական հաւատը, արմատախիլ անել հերետիկոսութիւնը, և նրանց ամենայն իշխանութեամբ օգնել Ինկվիզիցիայի դործերին։ Որին արքայական մեծութիւնը ոտին կանգնած գլուխը բաց երդում էր անում էս կարդալ-պրութիւնները պահպանել։ Այն երդումը տալիս էին և բոլոր ժողովականները։ Յետոյ մին Դոմինիկեան կրօնաւոր կանգնում էր ամպիոնի վրա և քարոզ էր տալի հերե-տիկոսութեան դէմ, դոմելով Ինկվիզիցիան. քարոզը վերջանալից յետոյ դատարանի գլխաւորը կարդում էր դատավճիռները. ամէն մին պատժապարտ լսում էր իրա դատավճիռը վանդակի մէջ ջո-քած, և յետոյ դնում էր իրա տեղը։

Կարդալից յետոյ մեծ Ինկվիզիցիօնը վեր էր կենում իրա տեղից և կարդում էր եկեղեցւոյ հետ հաշտուողների արձակումը։ տարաբաղձ մահապարտները մատնում էին մարմնաւոր դատաւորաց։ Յետոյ նստեցնում էին նրանց լուսերի վրա և տանում էին Պրո-էքս-տէսո (1) անուանեալ Այշաֆօթի մօտ։ Այնտեղ պատրաստած էին

(1) տես երես 35.

այնքան ջոկ ջոկ միայտակոյտները, որքան էին ողջակէզները։ Ուռաջ էրում էին պատկերները և մեռածների տակորները. յետոյ բոլոր մահապարտներին կապում էին սիւների հետ, որոնք կանգնած էին իւրաքանչիւր միայտակոյտների մէջ տեղը, և յետոյ տակից կրակ էին տալիս։ Ողորմելները միայն մին ողորմութեան յոյս կարող էին ունենալ, այն է՝ գուցէ հարցնեն իրանց, թէ կամենում են մեռնել քրիստոնէի պէս։ Եթէ մինը էս ողորմութեան արժանի էր լինում, էն ժամանակ դահիճը նրան առաջ խեղդում էր և յետոյ գցում էր կրակի մէջ։

Ընկեղեցւոյ հետ հաշտուածներին՝ որոնք գատապարտած էին մշտնջենական բանտարգելութեան, տաժանելի աշխատանոց և մրտրակով ծեծելու, տանում էին. կրկին դատարանի բանտը, որ տեղից նրանց դուրս էին քերում էն ժամանակը, երբ ապաշխարանքը էին դնում և զրկում էին նշանակուած տեղերը։

Դապէս էին կարդը և հանդէսի ձևը, որ գործ էին դնում այս բարբարոսական ոճնախմբութեանց մէջ, որը որ յանդգնում էին անուանել գործ հաւատոյ, և որի ներկայ էին գտնուում թագաւորը և պալատը իբրու մեծ ոճնախմբութեան։ Իսպանիան Ինկվիզիցիայի շնորհօք զրկուեցաւ իրա բնակիչների կէսից և ստացաւ հախտաթինը, որին այնքան գաղրը համբերում էր մեմարտաբար։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ.

ԵՐԵՍԵԼԻ ԳԻՊՄԻՍԱԾՈՒ ՏՕՐԿՈՒԵՄԱԴԻ ՊԵՏՈՒՆԵԼՈՒՑ ՄԻՆՉԵՎ ԵՎ ԿԱՐԳԱԼՈՒԱԾ ՄԱՍԻՆ.

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ.

Գ. Էջ՝ Երէլրորդ Գ. Էնեբաշ — Ինկվիզիցիօն.

Խալանիոյ Գ. Ենեբաշ Ինկվիզիցիօր Ֆօմայ Տօրկուեմադի իբա ընդարձակ իշխանութեան չարաչար կիրառութիւնը, նահանգական Ինկվիզիցիօնների անդիմութիւնները և բարբարոսական բարքերը պէտք էր որ ստիպէին հեռանալ հանդուցելոյն տեղը յաջորդ դնելու մտքից, և առելի շտապեն ոչնչացնել էս արիւնարբու և աւետարանի գթառատ հոգուից շատ հեռու դատարանը։ Բայց կոյր Ֆերդինանդը և Իզաբելլան չկարացին էս բարեյաջող միջոցից օգուտ քաղել։ Ա՛չ միայն կորցրին էս պատեհութիւնը, այլ և իրանք առաջարկեցին Պապին Տօրկուեմադի յաջորդ Գոմինիկեան Գիեկո Գեցային, որը որ դառաւ ստիմեան աստիմեան եպիսկոպոս Ջամօրի, Սալամանկի և Վալենցիի։ Պապը ուղարկեց հաստատութեան կոնդակ 1 ին դեկտեմբերի 1408 թուին, բայց արդելելով էս երկրորդ ղենեբալ - Ինկվիզիցիային խառնուիլ Գաստիլիոյ թագաւորութեան դործերումը։ Գեցան անբաւական մնաց Ալբրադոնիի վրա առանց իշխանութեան մնալով, և էնքան ժամանակ չընկալաւ պաշտօնը, մինչև որ պապը չը յանձնեց նրան

Տօրկուեմադի բոլոր իրաւունքները։

Երկրորդ զեներալ - Ինկվիզիցիօն խատուցիւնը ուշինչ բանով յետ չընկաց իրա նախորդի գործերից։ Հէնց ինչպէս նա ակսեց իրա ծառայութեան պաշտօնը, հրատարակեց, որ Ինկվիզիցիայի գործերուն լաւ մոխիկ տան, իբրու թէ Տօրկուեմադի սատանիկ մէջոցները բաւական չէին, և իբրու թէ նա շատ քան պակաս էր թողել Ինկվիզիցիայի բաղկացութեան մէջ։ Ռեցան աւելացրուց մին քանի անդամներ կոյքերը խլելու պաշտօնի մէջ, որը որ թագաւորի և դատարանի մատրութեան հատատուն առարկան էր։

Իրա ունեցած նախանձայուզութեամբը և փառասիրութեամբը նա չուշացաւ առաջարկել Ֆերդինանդին հատատաել Ինկվիզիցիայ Սեցիլիան և Նեապոլը ըստ նոր ձևակերպութեան, և էն երկաւան էլ գցել Խպանիայ զեներալ Ինկվիզիցիօրի իշխանութեան տակ, քան թէ յանձնել նրանց իշխանութիւնը պապին։ Թագաւորը գալեց էս առաջարկութիւնը և հրամայեց մոցնել Ինկվիզիցիան առաջ Սեցիլիան էն ձևալ ինչպէս մոցրին Խպանիան։ Բայց Սեցիլիացիք սատանիկ դէմ կացան, և երեք տարի պէտք էլաւ աղմուկները գցելու համար հատատուն զօրք պահել էն տեղ, մինչև որ երկրորդ կարգի մեծ Ինկվիզիցիօրը իրա գործը սկսի։ Վերջապէս Ինկվիզիցիօրները յաղթօղ հանդիսացան և քիչ ժամանակուցը այնքան անզթութիւն արին Սեցիլիան, ինչքան որ Խպանիայումը։ Ա՛յս ամենայնիւ ժողովուրդը չկարաց սովորիլ էս նոր կառավարութեան ձևին, և միայն մնում էր բարեպատեհ դիպուածի նրանից ազատուելու։ Այս դիպուածը արդարև առաջ եկաւ 1516 թուին։ Բոլոր կղզի մէջ եղ էկաւ ապստամբութիւն Ինկվիզիցիայի դէմ։ Բանտարկեալներին արձակեցին, Ինկվիզիցիօրների գրած լուծերը բոլորին դէն գցեցին. և եթէ Սեցիլիան յետի ժամանակներումն էլ էնպէս կարողանար դէմ դնել Ի Կարողի հզօր կարգութեանը, Ինկվիզիցիան չէր կարող կրկին անգամ էնտեղ մտնել։

Նեապոլը բաղտաւոր էլաւ։ Բնակիչքը այնպիսի խիստ ընդդիմութիւն ցոյց տուին, մինչև փոխարքան առիպուեցաւ արդելել Ֆերդինանդի մտադրութիւնը և ցոյց տուեց նրան այնպիսի կրակ կտրած քրիստոնէից հետ կռիւ բաց անելու կամքները։ Ֆերդինանդը բաւական համարեց հրամայել Ա՛նեապոլիտանցւոց դուրս անել քաղաքից նոր քրիստոնեաներին, որոնք էնտեղ ապաստանա-

բան էին մնում։ Իս բանումն էլ նրան տեղիք չտուին։ Թէեւ Անտալուսանցիք առում էին Մարրանոներին, բայց Ինկվիզիցիէ ասելի էին առում։

Դեցան էս Անտալուսը պատահած անյաջողութեան վրայ խորհեն համոզեց Ֆերդինանդին մոցնել Ինկվիզիցիան Գրենադումը։ Թագուհին՝ որ խոստացել էր մկրտած Մաւրերին չըդցել նրանց դատարանի տակ, առաջ չընդունեց էն առաջարկութիւնը։ Բայց Դեցան այնպէս խորամանկութեամբ տէրել էր նրա կամքին, որ առաւ նրանից հրաման, որ Կորդովի Ինկվիզիթորները տարածեն իրանց իշխանութիւնը Գրենադի վրա էլ և էնդրով հասաւ իրա նպատակին։

Կորդովի գլխաւոր Ինկվիզիթոր էր էն ժամանակը դոն Բորդիգեց Լուցերոն, որին որ ծաղը անելով կոչում էին Տենեբրերո (ոմպոպ)։ Նրա քնութեան անչափ խստութիւնը Մորիսկներին այնքան չարիք պատճառեց, մինչև նրանք ապստամբեցան և սատակ շինեցին Թադաւորին և Թագուհին։ Ուրիշ կերպով չըկարացին խաղաղացնել էս հղօր ժողովուրդը, եթէ ոչ երկար պատերազմից յետո։ Ապստամբութեան վախճանը Մորիսկների համար շատ կորստական եղաւ։ Նոյն 1502 թուին Յունվարի 12 ին Ֆերդինանդը և Իզաբելլան գործ դրին էս տարաբաղդների դէմ մի և նոյն միջոցները, որը որ ցոյց տուին 1492 թուին Հրէից դէմ։ Ամենայն աղտ Մաւրերը այր և կին հրաման ստացան Իսպանիից դուրս գնալ երեք ամսուայ միջոցումը։ Ֆերդինանդի այս երկրորդ քաղաքական անօրէնութիւնը հեռացրուց Իսպանիայից Մաւրերի բազմաթիւ դերդաստաններ։ Այս եղանակաւ Ինկվիզիցիան ամենայն կարելի հնարքներով խլեց Իսպանիայի տասներորդ մասը և մին քանի դարումը զրկեց նրան համարեա թէ երեք միլիոն բնակիչներից։

Դեցան այն եռանդով ներգործում էր Հրէից դէմ էլ, ինչպէս իրա նախորդ Տորկուեմադան։ Բաւական չըհամարելով Մաւրերին հալածելու տուած հրամանը, նա առաջարկեց Թագաւորին նորոգել դեռ 1492 թուին տուած հրամանը օտար երկրներից եկած բազմաթիւ Հրէաներին հալածելու համար, որոնք բնակւում էին էն Թագաւորութեան մէջ շատ ժամանակից դէս։ Այս նոր անօրէնութիւնը էլի խլեց Իսպանիայից վաճառական ժողովրդից մեծ բազմութիւնը, որոնցից ոմանք մկրտուեցան, էսկ ու-

ընչերը ճնային Կորին կամ Թոլիկական մեծասքեռան տէրութիւնումը խիստ անարդական պայմաններով։

Համարեա թէ մի և նոյն շրջանումը, և Գեցայի անդադար տխրմանց հետևանքներով Ֆերդինադը հրամայեց Ս. Ըրադոնիոյ Ինկվիզիցիոնին, մտիկ չդատալով էն երդումներին, որոնցով նրանք պարտաւանդած էին տէրութեան օրէնքները յարգելու, դուռմարներից (գլուխ ֆողերից) տոկոսիք (շահ) առնելը համարել ծանր մեղք թէ և այսպիսի գործերը պատկանում էին մարմնաւոր դատարանի։ Գեռ Ինկվիզիցիոնները էտուր համար կատարեալ հրաման չառած դատարանի բանտերը քքցուեցան կարծեալ յանցաւորներով։ Շուտով Ինկվիզիցիոնները սեպհականեցին իրանց ուրիշ յանցաւորների դատերն էլ և էն էլ միայն աշխարհականների վրա։

Կորդովի Ինկվիզիցիոր Լուցերոն լսելի հաւատարմութիւն ուներ Գեցայի մօտ։ Նրա գաղանաբարոյութիւնը ունեցաւ խիստ մեծ հետևանքներ։ Լուցերոն իրա համար կանոն դրեց՝ ամենայն դատաստանի տակ ընկածներին պարզ չը խօսոզի յանցաւորութեան տակ դցել, և էնքուր համար դատապարտել նրանց իբրև սուտ զրչացողի։ Նա անիծեալ ձևը շատ տարաբաղդների մահուան պատճառ դարձաւ։ Որանցից աւելի մեծ մասը էն ժամանակը տնքում էին, երբ Ս. Փիլիպպոսը Կաստիլիայի կառավարութեան սանձը ձեռն առաւ։ Նա, գիտենալով ղեներալ - Ինկվիզիցիոնի և նրա բարեկամ Լուցերոյի անդթութիւնը, հրամայեց Գեցային հեռանալ Սեվիլիայից իրա եպիսկոպոսական վիճակը և յանձնել իշխանութիւնը Կատանի եպիսկոպոս Ռ. Դոդրիգեց Գուսմանին։ Յաղաւորը նմանապէս հեռացրուց պաշտօնից Լուցերոյին և Կորդովի մէջ լսած Ինկվիզիցիի մուս դատաւորներին, հրամայելով ծայրագոյն խորհրդարանին սատիկ վերաղնել Լուցերոյի դործքերը։ Յիրաւի էս միջոցները կարող էին բարեբաղդ վախճան ունենալ, եթէ որ Ս. Փիլիպպոսը չը մեռնէր 25 սեպտեմբերի 1506 թուին, թագաւորելով միայն երեք ամիս։

Էնից ինչպէս Գեցան թագաւորի մահուան լուրը ստացաւ, դէն գցեց իրա հրաժարումը և կրկին մտաւ Ինկվիզիցիոնի պաշտօնի մէջ։ Նա իրա հեռաւորութեան ժամանակումը լսած բոլոր բաները քանդեց, և բանտերը լքցուեցան նոր զոհերով։ Կորդովի բնակիչները Գեցայից կարդած Լուցերոյի Ինկվիզիցիայի լուծի տակ ճնշուելով, կատղատեցին բանտերը և դուրս հանեցին շատ

բանտարկեալները։ Պրոկուրորին (1), լրտեսներին և դատարանի ենթակայ կարգի ուրիշ ատենակալներին բանդը գցեցին։ Ինքը Լուցերոն էլ վախենալով հաղիւ թէ ազատուեցաւ։ Այս ամոթքերը և Ֆերդինանդի ժամանակաւոր գահը բաղմելը էնքան սաստիկ ներգործեցին Ռեցայի վրա, որ նա ինքը հրաժարեցաւ իրա պաշտօնից և գնաց վանքը, ուր և մեռաւ ատելի ամենայն խոպանիացւոց։

Ռեցան կեղտոտ կերպով հալածում էր Ֆրենադի Ա.ը եպիսկոպոս Ֆերդինանդ Տալավերային և գիտնական Անտոնիա Լեբրիային, որին դպրոցական Աստուածաբանները մատնել էին դատարանի ենթադրելու համար, որ յոյսներ էր և սրբապղծել շատ ոխալներ, որոնք գրադրաց անզգուշութիւնից ներս էին մտել Վուլկատայի լատինական բնագրի մէջ։ Ֆրենադի Ա.ը եպիսկոպոսը պատրաստ հրամանաւ նրա գործքերը քննելու հաւաքած ժողովքի կարգինալների միաձայն հաւանութեամբը պաշտօնից արձակուեցաւ։ Լեբրիան դուրս եկաւ բանտից Ռեցայի հրաժարելից քիչ յետոյ։

Այս Ինկվիզիցիօր Ա.ը եպիսկոպոսի կառավարութեան միջոցումը կենդանւոյն տրուեցան 2592 հոգի, ձևակերպութեամբ 829, դատապարտուեցան բանտարկեալներ և տաժանելի վատառոյց, զրկուելով կոյքերից 32,952։ Այդ ամենից ատելի Ինկվիզիցիօրները զզուելի երևեցան իրանց գործակալների վարքով։ Որքա կողոպտում էին, արձակ համարձակ ապանում էին, և առանց ամօթի ապականում էին կոյս աղջկերանց և կանանց, որոնք որ տարբաղդութեամբ ընկնում էին նրանց ձեռքը։ Հալովուրդը շատ անգամ ոտի կանգնեցաւ էնդուր համար դատարանի դէմ, բայց ոչ մին Ինկվիզիցիօրի վրա չբիարացին յարձակիլ։ Այս չարիքը կարէին սրբել միայն պապերը և թագաւորները, բայց նոքա մոռացում էին միայն իրանց օգտի համար։

---

(1) Պրոկուրոր նշանակում է էն ատենակալը, որ կարգած է դատարանների գործոց օրինաւոր ընթացքի և վճռոյն մտիկ տալու համար։ Արարքագոյն ատեաններումը կարգւում է Ընդ - Պրոկուրոր, նահանգական դատարաններումը - նահանգական Պրոկուրոր, իսկ գաւառական ատեաններումը - գաւառական Պրոկուրոր։ Այս պաշտօնի նշանակութեամբ կոչւում է ոչ թէ Քոգիտորի։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Խոյենէս - Յիսուէրոս երիցապետ Ղ ԷՆԵՐԱԼ - Ինկիլիզեմէք։

Երբոր ժամանակաւոր թագաւորը Խապանիա եկաւ, Տօլէդի Ռըք եպիսկոպոս Ֆրանչիսկեան Խիմենէս - Յիսուէրոսը նշանակուեցաւ Կաստիլիոյ զէներալ - Ինկվիզիթօր, և իրան քնկեր ընտրեց Պէկիոյ եպիսկոպոս Յովհաննէս Անգուէրին, որին կարդեց Խապանիոյ Ինկվիզիթօրների գլուխ։

Յիսուէրոսը սկսաւ կատարել իրա պաշտօնը էն ժամանակ երբ դատարանի դէմ իլած ապստամբութիւնը դառել էր համարեա թէ ընդհանրական Կորդովի մէջ պատահած անցքի համար։ Ինկիզիցիի դէմ առելութիւն յոյժ ազնիւների միջումն էին ոչ միայն երևելի աշխարհականները, այլև եպիսկոպոսները և Կաստիլիոյ խորհրդարանի անդամները։ Դատարանի դէմ իլած էս թշնամութիւնը ստիպեց Յիսուէրոսին զգալ, թէ իրան շատ հարկաւոր է ունենալ մեծ զգուշութիւն առնել չըտալ, որ ազնուականները հաւաքուին, ինչպէս որ արդէն Խապանիացիք պահանջում էին։

Յիսուէրոսը տաղանդի տէր և հմուտ մարդ էր, և դեռ Ինկվիզիթօրի անունը չ'առած, արդարասիրութեան անունով վարք էր տացել։ Ինաճ լինելով մեծամեծ դրծողութեանց համար, նա ընութիւնից պարզև ընկալաւ վարասիրութիւնը, առանց որին մեծ մարդիքը մեռում էն աշխարքումը անյայտ։ Եւ էս վարասիրութիւնով նա վիզն առաւ էն կառավարութեան գլուխ լինելու պաշտօնը, որը որ նա ստում էր։ Էս բօպէից նա պարտաւորուեցաւ թեարկել և պաշտպանել նրան։ Ամենի էլ արաւ։ Ընդդէմ կացաւ դատարանի դրծոց մէջ մտած քաղաքական հորաճեռութիւններին, թէ և Կորդովի մէջ մօտ օրերումը իլած գործերից տեսնում էր, թէ պրան ծանր են Ինկվիզիցիոյի գաղանի և կորստական ներգործութեանց անօրէնութիւնքը։ և քաղաք չարագործութիւնները, որոնք

դրծում էին նահանգական դատարանների մառախուղներում։

Վերջապէս Յիսուսը Թագաւորից հրաման խնդրեց և ընկալաւ կարդել տերութեան մեծամեծներից 22 անձանց ժողով, որ արժանաւոր կերպով վերջացնեն Լուցերոյի Կատոլիկացուց հետ ունեցած դատը։ Այս ժողովը անուանեցաւ կոնստանցիոն ժողով և քաջ արաւ առաջին նիստը 1508 թուին Բուրգասումը։ Պշխատելով շատ ամիսներ ժողովը դատակնքով յայտնեց անարժան ամենայն հաւատարմութեան բոլոր վկաներին, որոնց ընտրել էր Լուցերոն, էն պատրուակաւ, թէ նրանց վկայութիւնները իրարու հակառակ էին և թէ նրանց վկայութիւնները ստանման և անհիմն լինելու պատճառաւ ընկնում են նենդութեան կարծիքի տակ։ Ասուն վինչև էն ժամանակ քանտերումը իլած մեղապարտներին արձակեցին։ Նրանց պատիւը և մեռածների յիշատակները վերականգնեցան, և քանդած տունները պէտք էր շինել դանձարանի ծախքով։ Վերադան արդարութիւնը, դուցէ խոհականութեամբ հասկացած, որը որ հրապարակաւ յայտնուեցաւ Ալլեգոլիդումը, ժողովականների ծախահարութեամբը ընդունուեցաւ։ որ համարեց, թէ Ինկվիզիցիի անունը խորտակուեցաւ էնդուր, որ նա ցոյց էր տալիս ուստ խաղաղութիւն։ Կորդոմի մէջ իլած պատահմունքը նմանապէս տխրեց ղեներալ - Ինկվիզիթորներին ստատիկ քանել Ինկվիզիթորների և դատարանի միւս ատիճանաւորների վրէժ ու բարքը, նրանց դպրթակղեցուցիչ դրծերը և քանտերումը իլած կանանց հետ վարմունքները։ Այս որոմներուն էս յանցաւորութիւնները յայտնուած էին շատ անդամ, ուստի Յիսուսը, հաւանութեամբ զբաղուաւոր խորհրդարանին, ասհմանեց՝ էս յանցանքների մեղապարտներին պատժել մահուամբ։ Իսկայն, յետոյ շատ դիպուածներ պատահեցան էս օրէնքը կատարելու ,բայց էն մեռց անդործ։

Ա. Փիլիպոսի մեռնելից յետոյ Խապանիայի Կատոլիան և Ադրիանեան Թագաւորութեանց բաժանուելը ծագեց ղեներալ - Ինկվիզիթորի մաքումը խորհուրդ՝ նահանգական Ինկվիզիցիաների ձևը փոխել, նշանակելով մին մին դատարան նահանգներումը, երբ որ մին մին դատարան կար ամէն եպիսկոպոսութեանց մէջ։ Ինկվիզիթորների այս կերպով պակասեալ թիւը լրացնելու համար Յիսուսը ղրկեց Ինկվիզիթորներ Բանարեան կղզիները և դատարանները քաց արաւ։ Մինչանի տարիից յետոյ Ինկվիզիցիան Կուէնցու�էլ մտաւ։

Այսպէս է, որ Յիսուսը գործ ածեց մին քանի միջոցներ գատա-
ղանի գործունէութիւնը տկարացնելու համար։ Կան փոխոխեց
շատ գործակալներ, որոնք իրանց իշխանութիւնը չարաչար էին
գործ ածում։ Բայց կամակորութիւնը, որով նա ջրհամաձայնե-
ցաւ ժողովրդեան պահանջած նորաձևութեանցը, չարեաց դոյու-
թիւնը երկարեցրուց և նրա իշխանութեան ժամանակումը աւելացաւ
զոհերի թիւը համեմատելով իրա նախորդների անօրէնութեանց
հետ։ Ինկվիզիցիան նմանապէս հանդիպեցաւ յարձակմանց Ս.ըրա-
գանիումը բոլոր ժամանակումը, ինչքան որ այս վերջինը մնաց Կաս-
տիլիայից բաժանած։ 1570 թուին, Ֆերդինանդը ստիպուեցաւ
իրանչել աղնուականներին, որ լեռ նրանց առաջարկութիւնը Ինկ-
վիզիցիի դէմ։ Փոխանորդները բարձրաձայն բողոքում էին Ինկ-
վիզիթօրների իրանց իշխանութիւնը չարաչար գործածելու վրա, ոչ
միայն հաւատոյ գործոց մէջ, այլ և շատ հաւատոյ չբովերաբեր-
եալ բաներում էլ, այն է՝ տոկոսաց (շահուց), կայից խլելու,
և այլն։ Փոխանորդները յառաջարկեցին թագաւորին, թէ Ինկ-
վիզիթօրները խառնւում են նաև հարկ պահանջելումը և թէ ա-
ւելացրել են իրանց արտօնութիւնները, որոնք տրուած են նրանց
հիմի և անցեալ ժամանակներումը. էնդրով պակասել է հարկերի
քանակութիւնը դայթակղեցուցիչ սահմանադրութիւններով. և
որովհետև Ինկվիզիցիայի պաշտօնի մէջ մտնողները հարկից ազատ-
ւում են, էն պատճառաւ շատերը ցանկանում են մտնել էն պաշ-
տօնի մէջ. էնդուր համար էս բանը անտանելի ծանրացնում է
նրանց հարկերը, որոնք պարտական են ուրիշի համար վճարել.
վերջապէս փոխանորդները բողոքեցին Ինկվիզիթօրների յանդգնութե-
և հպարտութե վրա, որոնք մէջ էին ընկնում ամէ կասկածաւոր բա-
նները դատել, և քաղաքական աստիճանաւորներին նեղացնում էին
իրանց տուած իրաւունքից դուրս։ Փոխանորդները հասկացրին թա-
գաւորին, թէ Ինկվիզիցիայի բանադրանքը, որը որ դնում են ու-
րիշների կայքը խլելու համար, աւազակութիւն է։ Ուստի նրանք
խնդրեցին միայն պահպանել տեղական սովորութիւնները և կա-
տարել Ս.ըրագոնիոյ թագաւորութեան օրէնքները և կարգադրու-
թիւնները, որի համար նա ինքնէլ երդում է արել։ Փոխանորդ-
ները իրանց խնդիրքումը էն էլ ասացին, թէ դատարանի գործերաւ
բաց լինելը, որ պահանջում են տէրութեան օրէնքները և սովո-
րութիւնները, միայն կարող է շատ տարաբաղդութեանց և խոտոր

շատ գերդաստանների կործանման առաջք առնել։

Փոխանորդների յառաջարկութիւնը բաց արաւ թագաւորի մտքի յօժարութիւնը. բայց նա խստակ պատասխան չտուաւ նրանց, այլ միայն պարտաւորեց հնազանդել նրան, և միւս ժողովքումը, որ պիտի լինէր երկու տարիից յետոյ, առաջի առնել նրան գանգատները հաստատելու համար հարկաւոր փաստերս։ Իրաւի 1512 թուին Ս.ըրագոնից փոխանորդները կրկին հաւաքուեցան և թագաւորը չկարաց չբաւարել նրանց դատողութիւնը, իբրու դաշնադրութիւն թագաւորի և ժողովրդեան մէջ։ Այս դատողութիւնները բովանդակւում էին 25 յօդուածի մէջ, որոնք ամփոփում էին Ինկվիզիցիոնների դատաստանական գործոց շարունակութիւնը, պակսեցնելով նրանց չարաչար գործածած արտօնութիւնները։ Բայց Ինկվիզիցիայի գործոց բաց լինելու վերաբերեալ ոչինչ տնօրէնութիւն չ'ելաւ, և համարեա թէ ոչինչ փոփոխութիւն էլ չ'ելաւ կայքերը խլելու բովանդակութեան մէջ. այնուամենայնիւ, թէպէտ թագաւորը խստութեամբ փոխանորդների խնդրած մէն յօդուածին էլ տեղիք չտուաւ, բայց շատով ափոսաց, որ ատրագրել էր դաշինքը։ Օգնականութեամբ խորամանկ Ինկվիզիցիոնների նա խնդրեց և ընկալաւ պապից ազատութիւն էն երդումից, որը որ առել էր փոխանորդներին, և վերադարձուց դատարանին էն իրաւունքները, որոնք որ նրան առաջուց թոյլատրած էին։ Թագաւորի այս տեսակ անօրէնութիւնը տրամութեան մէջ գցեց ողջ թագաւորութիւնը. ամենայն տեղ յայտնւում էր ժողովրդեան անբաւականութիւնը, և Ֆերդինանդը երկնչելով ընդհանուր ապստամբութիւնից, հրաժարեցաւ պապի արձակումից, նաև խնդրեց պապից փոխանորդների դատողութիւնը հաստատել։

Այն ժամանակումը երբ Ս.ըրագոնից փոխանորդները վիճում էին Ինկվիզիցիայի և թագաւորի հետ, Կաստիլեան նոր քրիստոնեայքը մատուցին թագաւորին 600000 դուքատ ոսկի, իրա եղբօր որդի Նավարից թագաւորի հետ պատերազմելու ծախքի համար, էն պայմանով, որ նոր արքայական օրէնքով կանգնեցնէ ամենայն Ինկվիզիցիական գործերս բաց լինելը։ Ֆերդինանդը համաձայնեցաւ, բայց Ֆիներսը խմանալով նոր քրիստոնէից առաջարկութիւնը, նմանապէս տուեց թագաւորին երևելի գումար միևնոյն պայմանով՝ չ'առնել ոչինչ փոփոխութիւն։ Թագաւորը շուտ եկաւ ղեկնեքալ Ինկվիզիցիոնի ոսկիներս ձայնին, և թողից գոր-

ծերը առաջին վիճակումը։ Բիչ ժամանակից յետոյ Ս. Լատերիոյ Կարոլոսն, որ Ֆերդինանդի Թառն էր և որ ելևելի իլաւ յետոյ Ն. Կարոլոս կոչմամբ Ֆլանդրիայ ընակելու ժամանակը, նրա Իսպանիայ գնալիս նոր քրիստոնեաները էլի մատուցին 800000 ոսկի էքիւ նոյն իսկ պայմաններով Թագաւորի Հանդապարհորդութեան ծախսը ծածկելու համար։ Ս. մեծայն հանգամանքները, ամենայն ուսումնականք Իսպանիոյ և Ֆլանդրիոյ, որոնց հետ խորհուրդ արաւ այս յառաջարկութեան վրա, միաձայն պատասխանեցին, թէ անուններ և բոլոր ցուցմունքի (որոնք ուշադրութեամբ էին վիճակեալ մեր գործոյ շարունակութեանը) յայտնելը համաձայն է բնական, Ս. առաւածային և մարդկային իրաւանց։ Բայց Յիսուսը շատով գերազանցեր զիկց Թագաւորի մտաց և գործածեց այնքան խորամանկութիւն, մինչև որ Կարլը Թողեց գործը անվճիռ մինչև իրա Իսպանիայ հասնելը։

Ն. այսպէս՝ Կարդինալ, զենեռալ - Ինկվիզիթոր Խիմենես Յիսուսը, որ երբեմն ջերմեռանդ կուսակից էր Ինկվիզիցիայի նորաձևութեանը, երբոր դեռ միայն Ս. ը եպիսկոպոս էր, յայտնեց իրան կամակոր պաշտպան նրա բոլոր չարագործութեանցը, երբոր ինքը դուռաւ գլուխ, և երկու անգամ չըթողեց դատարանի գործոց մէջ և ոչ մինը էն փոխոխութիւններից, որը որ ապաղակով պահանջում էին Իսպանիոյ ժողովուրդը նոր Ինկվիզիցիայի ստրքուած օրից։

Յիսուսի տասն և մի տարի կառավարութեան միջոցումը դատարանը վճռեց կենդանոյն այրելու 3,564 այր և կին, 1,232 ձևակերպութեամբ, 48059 տարաբաղդներ մատնուեցան բանտերի, աքսորանաց և ուրիշ պատիժների, միշտ կայքերից զրկուելով. ասենն ամէն մին տարին կըհասնի 4,805 զոհեր։ Սրանից երևում է, թէ Յիսուսը, որն որ առաջ նորաձևութեանց համար գովելի հակամիտութիւն ունէր, իրա տուաջի օրերը աւելի շատ շատ կատաղեց ոսկ ասիս - դա - ֆե, քան թէ իրա նախորդ Ալեցան։

Նա մեռաւ 8 ին նոյեմբերի 1517 թուին Ն. Կարլոսի Թագաւորութեան սկզբումը։ Մեռնելից մին քանի ամիս առաջ կարդեց իրան ընկեր Կարդինալ Ադրիան Ֆլորենցիոյին, որը որ յետոյ դառաւ ջորդ զենեռալ - Ինկվիզիթոր Իսպանիոյ, և կատարեց նոյն պաշտօնը մինչև պատկան գահը համբառնալու օրը։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ամբոխն Ֆլորէնցիոյ Հոյլոյթ ղէնէրալ Ինկվիզիցիոյ

Երբոր Ն. Կարոլոսը եկաւ Իսպանիայ շատ հակամիտ էր վերջացնել Ինկվիզիցիան, իսկ գոնէ դատարանի բոլոր կանոնները փոխել ընական իրաւանց կանոնների համաձայն և ուրիշ դատարանների ձեւով։ Այս բանտումը խորհուրդ էին տալի նորան իրա դատախազակ Ալիհիլմ դէ Կոռուայ և արքունի գիւանապետ Սելվաջիոյ։ Այս երկուքս էս ծաղկահատակ Թագաւորի եւ զինեալ Ինկվիզիցիոյ Ամբոխի կառավարութեան առաջի օրերումը Ինկվիզիցիան մեծ վտանգի մէջ էր։

Կաստիլիայի, Արագոնիոյ և Կատալոնիոյ փոխանորդները ցանկալով օգուտ քաղել էս բարեպատեհ դիպուածից, դէն գցել էն ատելի լուծը, որ էսքան երկար ժամանակ Ծնշում էր Իսպանիացիներին, 1581 թուի սկզբումը հաւաքուեցան և սահմանեցին՝ խնդրել Թագաւորից Ինկվիզիցիայի ձեւը փոխել։ Իրաքանչիւր ժողովք ներկայացրուց ձեւակերպութիւն օրինաց դատարանի կազմութեան և գործոց շարունակութեան համար։

Ն. Կարոլոսը խոստացաւ Կաստիլիոյ փոխանորդներին արքունի գիւանապետ Սելվաջիոյ և փոխանորդների գրած կանոնները գործ դնել, բայց էն վՀռոդական բօպէին, որ պէտք էր ուրախութիւն բերէր արդարադատութեան և մարդկութեան, Սելվաջիոն մեռաւ, և զինեալ Ինկվիզիցիոյ Ամբոխը էնպէս փոխեց Թագաւորի միտքը և հակամիտութիւնը, որ նա անհնարելի կերպով նախանձայոյզ պաշտպան դառաւ Ինկվիզիցիայի։

Արագոնացիք և Կաստիլիացիք խնդրեցին Ն. Կարոլոսից ազատել Ինկվիզիցիոյ օրենքին խառնուիլ տոկոսաց և կայքերի խլելու և այլ սրանց նման գործերումը։ Նոյնպէս հարկեր հաւաքելու մէջ եղած չարագործութիւններին սահման դնել։ Ն. Կարոլոսը հանդիսաւոր խոստացաւ յարգել ամենայն նահանգի արտօնութիւնները

և տալրաութիւնները, բայց միւս յոդուածների համար նա յայտնեց, թէ ցանկանում է ամենայն բանի մէջ վարուել համեմատ եկեղեցական կանոնների և պապի գահի սահմանադրութեան։ Թագաւորի այսպիսի պատասխանը ստիպեց փոխանորդներին կարծել, թէ Թագաւորը համաձայնեցաւ նրանց բոլոր խնդրածներին և թուէր թէ էգպէս էր խոստմունքի միտքը, այսինքն՝ պահպանել եկեղեցական կանոնները և սահմանադրութիւնները. ուստի փոխանորդները դրամական ընծայով յայտնեցին Թագաւորին իրանց շնորհակալութիւնը։ Բայց ժամանակը ցոյց տուեց, թէ Ն. Կարոլոսի խոստմունքները էնպէս սուտ էին, ինչպէս նրա նախորդներինը։

Այս միջոցումը ուղարկեցին Հռոմի Թագաւորի և Ֆրանգոնիոյ և Կաստիլիայի փոխանորդների մէջ կապած դաշնադրութիւնները, որ պապը հաստատէ։ Այն ժամանակը Ինկվիզիցիաները սկսեցին իրանց քարոզիչները Կարոլոսի և պապի պալատներումը, և էնպէս ասին, որ հաստատուեան կոնդակը հաղիւ թէ երկու տարիից յետոյ դուրս եկաւ։ Այս միջոցումը Կարոլոսի դատարանը, որ ապառնացեալ վտանգները հեռացնելու համար ամենայն տեսակ հնարքները լաւ էր համարում, հրամայեց բանտը դցել Ֆրանգանացւոց ժողովոյ Ֆռենադային էն պատրուակաւ, իբրու թէ նա Հռոմի զրկած դաշնադիրը շարադրել է այնպիսի գայթակղեցուցիչ խմաստներով, որ նորա մէջ դրած խոստմունքները անհերքելի են դառել, թէևս Թագաւորը միայն թէուրեամբ է առաջարկել։ Այսպիսի ծանր յարձակմունքը ազգային փոխանորդաց ժողովի դէմ Ֆրանգոնացիների սիրտը առաւելցուց առ Ն. Կարոլոսը։ Հռոմայեցի փոխանորդաց ժողովը հարկաւոր համարեց նոր ժողով հրաւիրել։ Կարոլոսը լսելով էգ համբաւը հրամայեց ժողովը ցրուել, իսկ ժողովականները պատասխանեցին, թէ Ֆրանգոնիոյ Թագաւորները իրաւունք չունին բռնութիւն դործ ածել, և սրա փոխարէն հրատարակեցին գիր՝ որով ապդեալում էին հարկերը ժողովել, մինչև որ Թագաւորը Ֆրանգոնացւոց իրաւացի խնդիրին բաւականութիւն տայ։ Ֆրանսական ժողովականների բաղդից Յ. Լէօնը անբաւական էր Իսպանիոյ Ինկվիզիցիայից էն տարաբաղդութեանց համար, որոնք նա հասցրել էր մարդկային ազգին, և էն խռովայոյզ հոգւոյ համար, որ նա ունեցանում էր։ Պապը վատահացաւ դատարանի ձևը փոխել, ստորադրելով նրան հատարա-

կական իրաւանց ամենայն կանոնների և ազատութեանց։ Յետոյ կոնդակ ուղարկեց հրամայելով Ինկվիզիցիոնին դուրս դալ իրանց պաշտօնից, իսկ նրանց վրա իշխող եպիսկոպոսներին հրամայեց ջոկել երկու Կանոնիկոս և ներկայացնել նրանց դիներալ-Ինկվիզիցիոնին, որը որ դատարանումը միայն պէտք էր խորհրդակից նստէր։ Ինկվիզիցիոնները պապին չըհնազանդեցան, և Կարոլոսը յատուկ դեսպան ղրկեց Հռոմ խնդրել պապից, որ էն կոնդակը անվաւեր անէ։ Լեոն Ժ. տեսնելով, թէ Կարոլոսը, որ պատրաստուում էր Ինկվիզիցիոնների պաշտպան լինել, խիստ մեծ հաղորդակցութիւն է վիզն առնում այս բանիս մէջ, Հռոմից դահլ սովորական խորամանկութեանը դիմեց, այսինքն խառնեց մին քանի խիստ դարտակ հարցմունքներ և ասիրից մոռանալ գլխաւոր առարկան։ Նոպէս էլ դրեց գլխաւոր Ինկվիզիցիոնին, թէ թէպէտ նա վստահացաւ փոխանորդների պահանջմունքներին բաւականութիւն տալ, բայց երբէք մոքիցն էլ չէ անցկացրել ձեռք տալ մին բանի առանց համաձայնութեան կայսրի, որին խոստացել է նորաձեւութիւն չանել։ Սակայն Ադրիադոնիոյ փոխանորդները չըվստահեցան. նոքա շարունակ աշխատում էին Հռոմը, և թէպէտ ժողովականաց ազատութեանց ընդ ամենայն զօրութիւնը հաստատութիւն չընկալաց ասանալ, սակայն կարացին անվաւեր համարել չըտալ երեք կոնդակները, որոնք պահանջում էին Ինկվիզիցիոնի ձեւափոխութիւնը։ Այս բանը շատ շփոթեց Կայսրին։

Ամենապէս տարաբաղդ վէճը, որ շատ մեծ էր իւրաքանչիւր կողմնակիցաց ներգործութեան հոգումը և Իսպանիոյ մէջ երկու տարի տեւած խռովութիւնների պատճառը, վերջացաւ Ադրիադոնիոյ ժողովոյ Ադրեանդրին բանից ազատուելովը և հարկերի բառնալովը։ Ժողովուրդը՝ էս բանում իրա թշուառութիւնից ոչինչ թեթեւութիւն չըստացաւ, ձեւափոխութեան կոնդակը չըկատարուեցաւ, Ինկվիզիցիան առաջուայ պէս շարունակեց թագաւորութեան մէջ իրա գայթակղեցուցիչ դործերը և անգութ վէճերը։

Ադրիադոնիումը էս բաները լսած ժամանակը ընդանի պատերազմ բորբոքեցաւ Կաստիլիումը։ Ինկվիզիցիայի դէմ լսած ապտամբների գլուխն էր Օսմօրիոյ եպիսկոպոսը շատ քահանաներով։ Ա. Կարոլոսը կամելով պատժել նրանց յօրինակ այլոց խնդ-

բեց պապից լիակատար իշխանութիւն տալ զենեբալ - Ինկվիզի-թորին, հեռախոյզ լինել եպիսկոպոսին և մեւս հոգևորականներին։ Պապը համաձայնեցաւ և հրաման գրեց, որ նրանց պատժեն մի-այն բանադրանքով։ Բայց պալատական դատաւորը էն՝ եպիս-կոպոսի վրա մահի էր տալիս իբրև կարգից և արտօնութիւնից զրկուած։ ուստի մահի վճիռ գրեց նրա համար և հրամայեց շու-տով կատարել էն վճիռը։

Զենեբալ - Ինկվիզիթորը, որի համար կարծում էին, թէ հեզ և բարի բնութեան տէր է, միայն թոյլ մարդ էր։ Նա շատ հաւատացել էր Ինկվիզիթորներին և խիստ միջոցներին շատ հա-ւանում էր։ Ադրիանը շատ զոհեր վիճացրուց և վիսանակ նրանց թիւը պակսեցնելու, շատ ուելցրուց։ Հինգ տարուայ մէջ Ադրիանը դատապարտեց 24,025 մարդ, որոնցից 1620 այրուեցան կենդանւոյն, և 550 պատկերներումը։

Նոյն զենեբալ - Ինկվիզիթորը սաբքեց դատարանի երկրորդ բաժանումն Ամերիկայումը և նրա իշխանութիւնը ընդարձակեց Հնդկաստանի և Մեքսիկոյի վրա։ Նրա համալսարանը Ն Կա-ստիլիա Ինկվիզիցիայի մէջ նորաձևութիւն անելից յետ կացաւ, որը որ խոստացել էր Կաստիլիացւոց և Ադրագոնացւոց։ Ինքնա-ր որ Ադրիանը միշտ խանգարում էր նրան, գովելի ցոյց տալով Ինկ-վիզիցիայի գործերը։

Բայց մահի չքաղով էնքան չարութիւններին, որոնք թոյ-լատրեց Ադրիանը, նա պապ ընտրուեցաւ Ժ. Լ. Լեոնի մահից յե-տոյ և նստաւ աթոռը յունվարի 9 ին 1522՝ թուին, յանձ-նելով իրա յարգը և իրաւունքները Սևիլիոյ աբք եպիսկոպոս Հոն Ադֆոնս Մանրիկին, բայց ուչ առաջ քան զ 10 սեպտեմ-բերի 1525 թուին։ Ուրեմն անիշխանութիւնը տևեց համարեա՛ թէ երկու տարի, և էս միջոցումը Ինկվիզիցիան այրեց 324 մարդիք, բաց 'ի 4481 բանտարկելութեան դատապարտեալներից կայքերը խլելով։

Ահա՛ Ն Կարոլոսի թագաւորութեան առաջի տարիների պատուղը, երբ որ նրա գահ բարձրելու ժամանակը Խպանիացւոց պա-տումը յոյս ծագեցաւ, թէ Ինկվիզիցիայի անգթութիւններին սահ-մանն կը դրուի։

ՀՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

Ալֆոնս Մանրիկի հինգերորդ ղեկուցում - Ինկվիզիցիոն։

Ալֆոնս Մանրիկի կառավարության սկզբումը Իրլանդիից դարձած նոր քրիստոնեայքը յոյս ունէին, թէ Ինկվիզիցիայի դատաստանական գործերումը փրկարար նորաձևութիւն կըտեսնեն։ Ինդուր որ Մանրիկը Ս. Կարլոսի հետ Ֆլանդրիումը իլած ժամանակը խոստում էր էն խնդիրքի կողմը, որը որ նրանք տուել էին թագաւորին։ Բայց էս հինգերորդ Ինկվիզիցիոն էլ էնքան քիչ միխիթարեց նրանց, ինչպէս իրա նախորդները։ Ինկվիզիցիոնները հաւատացրին նրան, թէ էս պահանջած նորաձևութիւնը վէր կըգցէ դատարանը, յաղթանակ կըդառնայ սուրբ հաւատոց թշնամեաց համար, որոնք խոյսն կըհրատարակեն մեղաւոր կանանները, երբոր գաղտնի հետաքրքրութեամբ չըզսպուին։

Այս շրջանումը հարաւային Եւրոպայումը սկսաւ տարածուիլ Պարոն Լուտերի վարդապետութիւնը, և պապը, որի յարդանաց վրա ասատին յարձակմունքը արաւ այս կրօնաւորը, շատ շփոթուեցաւ, երևակերպելով, թէ էս նոր ուսումը, որ բոլորը Գերմանիան պատել էր, ինչ հետևանքներ կարող է ունենալ։ Ժ. Լեոնը Լուտերի շատ առաջարկութիւնները արդէն հերետիկական էր հրատարակել։ Ադրիանը գործ դրեց ամենախիստ հնարքներ լուտերականութեան առաջը առնելու համար։

Բայց յայտնանէ Խոպանիումը լուս ընկաւ նոր աղանդ Մոլինակաց, և ղեկեբալ - Ինկվիզիցիոնը անշուշտ հարկաւոր համարեց առաջուայ ժամանակի խստութիւնները զարթացնել։ Այսն որոյ Ինկվիզիցիան Թուլացնելու փոխարէն, Մանրիկոսը տարածեց դատարանի իշխանութիւնը Մոլինակների և Լուտերականների վրա և պարտք դրեց բոլոր քրիստոնէից վրա վնց՝ օրումը հրաժարուիլ ամենայն բանից, ինչ որ տեսել են հաւատոց դէմ, վախենալով բանադրանքից և մահացու մեղքից։

Մանրիկը կարեկից էր լինում Մոլինակներին, որոնց վիճակը

այժմ պատասխանել դառաս. Նա ընդունում էր նրանց ամէն խնդիրները, և որքան կարելի է ընդդիմանում էր Ինկվիզիցիոնին նրանց հալածելու մասին, Նա իրա դիտութիւնը էլ առաջ տարաւ նորոգելով, համաձայնութեամբ բարձրագոյն խորհրդարանի, Ֆերդինանդի և Իզաբելլի էն հրովարտակները, որոնցով արգելուած էր Ինկվիզիցիոնին դատաստանի տակ գցել Մորիսկներին թեթև յանցանքի համար, և թէպէտ շատերը արդէն դատաստանի տակն էին, բայց նա հրամայեց շուտով վերջացնել նրանց գործերը յօգուտ մեղադրեալներին.

Մորիսկների քամբաղդութիւնից էս ժամանակը ընտանի պատերազմ բաց իլաւ Վալենցիայի և Կատալոնիայի թագաւորութեանց մէջ: Մորիսկները գործունեայ մասնակցութիւն էին ցոյց տալի պատերազմի մէջ: Կայսրը խիստ բարկանալով, շատերի համար մահուան վճիռ տուեց և հրովարտակ հանեց 1502 թուին հալածել Վալենցիայից և Արրագոնից Մաւրերին, որոնք էս երկու տերութեանց երևելի իշխանների ժողովակատաց մատուցած խնդիրների զօրութեամբ դեռ հրամաններին չէին հնազանդած: Յետոյ Ն Կարոլոսը արձակում խնդրեց այն երդումից, որը որ նա տուել էր Սաբրակոսից ժողովակատաց: Ադրիանը առաջ ասում էր նրան, թէ լուծումը գայթակղութեան պատճառ կլսոյ, բայց կայսրը պնդեց իրա խօսքը և ստացաւ:

Սրանից յետոյ ալքունի հրովարտակ դուրս եկաւ 1525 ին, որով հրամայւում էր Կաստիլիոյ, Արրագոնիոյ և Վալենցիոյ բոլոր Մաւրերին՝ շատ կարճ ժամանակումը կամ մկրտուիլ, կամ Իսպանիայից դուրս գնալ յատուկ նշանակած ճանապարհներով:

Ժամանակակից պատմագրանները ասում են, թէ Ա. Ֆրանցը, որ էն ժամանակ գերի էր Մադրիտումը, ասած լինի Ն Կարոլոսին, թէ Իսպանիան էն ժամանակը կըհանդարտուի, երբ նրա մէջ մին Մորիսկ էլ չըմնայ: Ընթէ էս հանգամանքը մտացածին չէ, պէտք է զարմանալ Ֆրանսիի թագաւորի հնարագէտ քաղաքականութեանը վրա, որ իրա թշնամի հակամիտութիւնները փաղաքշելով, տուաւ նրան այսպիսի ճնաակար խորհուրդ և հարկադրեց գործածել այնպիսի միջոց, որ ճնաակար էր Իսպանիոյ օգտին.

Հենց ինչպէս հրովարտակը դուրս եկաւ, Մաւրերը փախան սարերը և կուրծքերը դէմ դրին էն զօրքերին, որոնց Ն Կարոլոսը ուղարկել էր նրանց հնազանդեցնելու համար, և էն ժամա-

եակ միայն հանդարտեցան, երբոր իրանց առաջարկած դաշինքներից մին քանիսը կատարել տուին։ Գլխաւոր դաշինքներն էին՝ չեն թաղկել Ինկվիզիցիայի դատաստանին մանր բաներումը, պահել իրանց լեզուն, հագուստը, զէնքը, և հարկ տալ քրիստոնէից հետ հաւասար։ Այս դաշինքներով նրանք համարեա թէ բոլորը միաբանեցան։

Պանբիկն էլ իր կողմանից նրանց ներողութիւն տուեց բոլոր անց կացած մեղքերի համար, բայց առաջուց խմացրուց՝ եթէ նրանք ընկնեն հերետիկոսութեան կամ ուրացութեան մէջ, կ'ընկնեն Ինկվիզիցիայի օրինաց բոլոր խստութեան տակ։

Հէշտ է հասկանալ, թէ նրանք՝ որոնք մնած են իրանց նախնեաց հաւատքումը, որոնք կապուած են մահմէտականութեան օրէնքների հետ, և որոնք բռնի են ընդունել քրիստոնէական հաւատը, կրկին կըդառնան մահմէտականութեան, երբոր փոքր ինչ ապահովութիւն դտնեն։ Այդպէս համարեա թէ բոլոր Մորիսկները, որոնք դարձած էին՝ ահով և սրով, ծածուկ դառնում էին իրանց նախնի հաւատը և խակոյն ընկնում էին դատարանի ձեռքը, որի լուռանները լիքն էին ամէն քաղաքներումը, որ տեղ բնակում էին նոր քրիստոնեանները։

Այսպէս թէպէտ զինուորական - Ինկվիզիցիոն Պանբիկը մարդկութեան շատ համեմատ ձևով էր վարում Մորիսկների հետ, այնուամենայնիւ նրանց շատ մեծ բազմութիւնը դժուին փայտակոյտների վրա և քանդերը։ Մուռները շարունակ դաղթում էին Աֆրիկայ, երբոր կարողանում էին Կայսեր և Ինկվիզիցիայի աչքերի արթնութիւնը խաբել։ Յետոյ Կարոլոսը և նրա յաջորդ Ի Փիլիպպոսը ողորմութիւն արին Մորիսկներին, որոնց դատապարտել էր Ինկվիզիցիան, թոյլ չտալով խլել նրանց կայքը և էնդրով ցանկանում էին դադրեցնել էն վախտուանները, որոնք մեծ վնաս բերին Իսպանիոյ բազմամարդութեանը. բայց Ինկվիզիտորները, որոնք ծածկում էին իրանց բոլոր գործքերը անթափանցելի դաղանիքներով, ամէն անդամ թագաւորների բարերար միջոցները քանդում էին մինչև էն տեղ, որ Մորիսկները Ինկվիզիցիայից հանելով կատարութեան առնէին, մաշուեցան նրա լուծի տակ, և բոլորը միասին ոտի կանգնեցան. և էս իսկ դառաւ բոլոր էն ողդի 1609 թուին դուրս անելու պատճառը, որով Իսպանիան կրկին կորցրուց համարեա թէ մին միլիոն երկրագործ, խաշնարած,

և գերազանց արհեստաւոր բնակիչներ։ Ահա այս հալածմունքներն էլան Իսպանիոյ մէջ երկրագործութեան և ձեռակերտից վէր ընկնելու պատճառը։

Անիկը միայն Մորիսկների և Մաւրերի գործերով չէր պարապում իւրա բոլոր կառավարութեան ժամանակը։ Նրա օրով տարածուեցան բոլոր Եւրոպայի մէջ Լուտերի, Ցվինգլի, Եկոլամպատոսի, Մելանքթոնի, Մունցերի և Կալվինի վարդապետութիւնները, և թէպէտ Ինկվիզիցիան գործ էր դնում ամենայն նախազգուշութիւնները, որ էս ուսումները Իսպանիումը չըմտնեն, բայց շատ Իսպանիացիք նաև հոգևորականներ, հնարքներ գտան ձեռք բերել այն գրեանքը, որանք տպում էին Գերմանիումը Ղալէյերի բողոքականները։ Եւ որովհետև գրեանց ձեռնէ ձեռք ման գալը նոր ուսումը տարածելու ամենից լաւ միջոցն է, էնդուր համար Ինկվիզիցիաները և Ն. Կարոլոսը կամաց կամաց գործ դրին ամէն միջոցները այս հեղեղն առաջը առնելու։ 1521 թուից պապը հրաման էր գրել Իսպանիոյ գաւառապետներին գործ ածել իրանց բոլոր աշխատութիւնը, որ մօտ չը թողնեն Լուտերի ուսումը, նմանապէս բանտը գցեն էին ամենին, ով որ Լուտերականութեան հակամիտութիւն կը ցոյց տայ։ Քիչ ժամանակից յետոյ բարձրագոյն խորհրդարանը հրաման հանեց Ինկվիզիցիային վերաղնել ամենայն գրքատունները և տեսնել, թէ նրանց մէջ չկան արդեօք նորաղանդութեան գրքեր, նմանապէս հրամայեց տարեկան էդիկտի վրա առանձին յօդուած աւելցնել, որը որ ամենայն Կաթոլիկի պարտաւորում էր մատնել էն մարդկանց, որոնք էդ գրեանքը կարդացել են կամ ունին իրանց տանը։ 1539 թուին Ն. Կարոլոսը հրամայեց հրատարակել պապի հաստատած կարգալու գրեանց ցուցակը, և արգելեց կարդալ և ունենալ Լուտերի շարադրութիւնները։ Գրադաւորի էս բանի մէջ ունեցած խստութիւնը հատաւ էն ատելանն, մինչև որ նա էս օրէնքի կատարումը պահանջում էր բոլոր Ֆլանդրիայի մէջ։ Գերմանիոյ բողոքական - իշխանները զէնք առին Ն. Կարոլոսի դէմ, իսկ Պայսերը և մանաւանդ պապի լուծը դէն գցելու ցանկութիւնը ստիպեց Գերմանիոյ մեծ մասը ընդունել Լուտերի վարդապետութիւնը։

Ինչու ամենայնիւ Իսպանիոյ Ինկվիզիցիան գործ էր ածում էրա բոլոր աշխատութիւնը և խստութիւնը Լուտերականութեան

յարձանակմանց դէմ։ Ղ ենեբալ - Ինկվիզիթօրը, կամելով էս ռաման յառաջադիմութիւնը արգիլել Խպանիոյ մէջ, հին կանոնների վրա աւելցրուց մին քանի յօդուածներ և էս բոլոր գործողութիւնը անում էր Ինկվիզիցիայի խորհրդարանի համաձայնութեամբը։

Այդ կանոնները պարտաւորում էին ամենայն կաթոլիկ քրիստոնեային մահացու մեղքի և սաստիկ բանադրանքի երկիւղիւ մատնել էն ամենին, ում որ կբնօսի, կըպաշտպանէ կամ կըկարծէ, թէ Լուտերի աղանդը ուղղափառ է՝ էն ամենին, ում որ հերետիկոսական հրատարակած յօդուածներից գոնէ մինը կըսկսի հաստատել, զորօրինակ, թէ բաւական է մարդուն մեղքերը խոստովանիլ Աստուծոյ առաջը առանց քահանայի, թէ քաւարան չըկայ, թէ պապը իշխանութիւն չունի ներողութիւն և արձակում տալու, թէ քահանայք կարող են ամուսնանալ, թէ կիրակիներից աւելի ուրիշ ոտներ պահել հարկաւոր չէ, և այլն։

Ամենապէս ամենայն կաթոլիկ քրիստոնեան պարտաւոր էր ասել, թէ չի գիտում, կամ չի լսել արդեօք, թէ ոբմին գնացել է օտար երկիր լիւտերական լինելու համար։

Բայց 'ի վերոյդրեալ նախազգուշութիւններից Էլիզոնս Մանրիկը զրեց դատաւորական Ինկվիզիթօրներին, թէ նրանք կարող են եղիկոսի մէջ աւելցնել ինչ որ իրանք հարկաւոր կըհամարեն իլլումինատաց (ալիամբրատոս շուոուոպոիանոց) հերետիկոսութիւնը ընդունողներին գտնելու համար։ Այս ազանդաւորները, որոնք կոչւում էին Ալէիպոս (Ալումբրոս) իրանց առաջնորդ ունէին Մինուցերին, որ էր հիմնադիր կրկնակնուանքներին։ Ինչ ժամանակից յետոյ Ինկվիզիցիայի խորհրդարանը ինքը աւելացրուց զենեբալ - Ինկվիզիթօրի կանոնների վրա շատ յօդուածներ։

Մանրիկի կառավարութեան էս շրջանումը պատմութիւնը ներկայացնում է մեզ շատ երևելի մարդիկ, որոնք ընկան զարհուրելի դատարանի ձեռը մի միայն Լուտերի ուսմանց մէջ կասկածաւոր երևելով. զորօրինակ. Աբգոյ Յովհաննէս Էլիսայ, որ իրա առաքինական կենաց և երևելի շարադրութեանց համար Էնդալուզիոյ առաքեալ անուանեցաւ։ Նա քարոզում էր աւետարանը պարզ մտքով, չընդհատելով էն ժամանակուայ վիճելի Աստուածաբանական յօդուածներից և ոչ մինին, և կրօնաւորները նախանձով միաբանեցան նրան վէր գցելու համար։ Էլիսային դցին Ինկվի-

ղեցիայի գաղանի բանտը, մեղադրեցին լուսերակատուԹիւնը տարածելումը և իլլեւմինատայ վարդապետուԹիւնեւմը։ Դարերաղդաբար նրա համար կտրած վՃիռը չըներկայացրին բարձրագոյն խորհրդարանին և էս հանդամանքը, որ ոռնակոխ արաւ դատարանի խորամանկուԹիւնները, մեծ օգուտ բերից։ Ազատեցին արՃակեցին բանտից 1532 Թուին։

Այն տարին կրտսական իլաւ երկու անՃանց համար, որոնք երևելի են Իսպանիոյ գրականուԹեան մէջ Յովհաննէս Վերկարի և Բեռնարդին Տաբարի համար։ Տօլեդիայի Ինկվիզիցիան հրամանաւ բանտը գցուելով նրանք ուրիշ տեսակ չքաշեցին ազատուել դատարանի բանտից, բայց եԹէ հրաժարում (պե-ընիտենա) տալով Լուտերի հերետիկոսուԹիւնից. ստացան արՃակում և ընկան ծանր ապաշխարանքի տակ։ Յովհաննէս Վերկարան, որ լաւ տեղեակ էր Եբրայեցւոց և Յունաց լեզուներին, գտել էր Վուլկատայի ԹարգմանուԹեան մէջ մին քանի սխալներ, և էս բաւական էր տգէտների ատելուԹիւնը նրա վրա գցելու համար։ Նրա եղբայրը նմանապէս տանջուեցաւ նրա ուսումնականուԹեանը համար։

Ալֆոնս Վերուէց Բենեդիկտեան կրօնաւորը, որ քաջ գիտէր արևելեան լեզուները և հեղինակ էր շատ շարադրուԹեանց, նմանապէս բանտը գցուեցաւ։ Ե Կարոլոսը միշտ ականջ էր դնում նրան էնքան մեծ ախորժանօք, որ Գերմանիումը մեն գալու ժամանակը միշտ նրան հետն էր առնում և ոչոմէ քարոզը չէր ուզում լսել, բաց 'ի էս Բենեդիկտեան կրօնաւորի։ Լուտերի կարծիքների պաշտպան համարուելով Վերուէցը ընկաւ Սեւիլյայի դատարանի գաղանի բանտը։ Կայսրը խոր վերաւորուելով այս հարուածից և հաստատ գիտելով, ԹԷ Վերուէցը անողիջանելի Ինկվիզիցիայի զոհ պիտի դառնայ, Մանրինին պաշտօնից արՃակեց, հրամայելով, որ իրա Սեւիլեան աբք եպիսկոպոսական վիՃակից դուրս չըգայ։

Ամենիկ տալով կայսրը անյողդողդ մնալուն և ապիսպանցը, Վերուէցը քաշեց գաղանի բանտի մէջ չորս տարի բոլոր արհաւիրքները։ Ես կարելի էր զարմանալ, ԹԷ ինչի՞ Ե Կարոլոսը, որ էս բանումը լաւ ճանաչեց Ինկվիզիցիայի յատկուԹիւնները, էլի միշտ պաշտպանում էր նրան, եԹէ չըգիտենայինք, ԹԷ ի՞նչքան անողիջանելի ատելուԹիւն ունէր նա Լուտերի հետևողների վրա։ Այսկայն ուրիշ աւելի ընդդիմուԹիւններ տեսնելով նոյն ժամանակ-

ներումը նա 1535 թն հրամայեց խլել Ինկվիզիցիայի ձեռից արքունի դատարանը և էս հաստատ շարունակեցաւ մինչև 1545 թիւը։

Ալֆոնս Մանրիկ Ամբ եպիսկոպոս և Կարդինալը մեռաւ ութսուած Սեւիլայ քաղաքումը 28 թն սեպտեմբերի 1538 թուին 15 տարի ղեկեցաւ Ինկվիզիթորի պաշտօն կատարելուց յետոյ։ Նա ժառանգեց չքաւորաց ընկերի և բարերարի փառաւոր անունը, բայց տարաբաղդաբար միշտ ընդդիմանում էր Ինկվիզիցիայի նորաձեւութեանը և թոյլ տուեց դատարանին շատ անգթութիւններ գործել։ Նրա ժամանակի դատապարտելոց թիւը առաջին չորս ղեկեցաւ - Ինկվիզիթորների ժամանակուայ թուից պակաս է, այն է, 15 տարումը Խպանիայի տան և Հինգ Ինկվիզիցիաները այրելու դատապարտեցին 2250 այր և կին, 1125 պատկերներով և 11250 այր և կին զանազան պատիժների, որպիսի են՝ ժամանակաւոր կամ մշանջենական բանտարկելութեան, տաժանալի մշակութեանց, ութսրանաց և մարտկաւ ծեծելու։

Մանրիկը ունէր շատ պռնկորդիք, որոնցից մինը կարգ կարգ կատարեց հետեւեալ պաշտօնները՝ նահանգական Ինկվիզիթորի, բարձրագոյն խորհրդարանի անդամի, Վալլադոլիդի դիւանատան նախագահի և վերջապէս ղեկեցաւ - Ինկվիզիթորի։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

Տաբէրայ. — Լոսիլայ վէյէրոյդ. — Եօլանէրոյդ պէնէրայ - Ինկիլիլիօրնէր։

1538 թուի վերջումը Ն. Կարոլոսը կալգից Ինկիլիզիթօր Տօլլեդիոյ Ա.ը եպիսկոպոս Յովհաննէս Պարդոյ Տաբէրային, բայց Ղ. Պօլոս պապը հաստատութեան կոնդակը ուղարկեց մին տարիից յետոյ։ Ա.յս միջոցումը բարձրագոյն խորհրդարանը մինակ էր պարապում Ինկիլիզիայի գործերով, և հատեղ ծանօթութեան արժանի տեսնում ենք միայն կայսեր էն հրովարտակը, որով արգելում էր Ամերիկայի Ինկիլիզիթօրներին իրա դատարանի տակ զցել Հնդիկներին։ Կարծիք չկայ, թէ այս հրովարտակը տուեց Կարոլոսը ակամայ, ստիպեալ Ամերիկայումը դատարան բաց արած բոլոր քրիստոնեներից էկած բողոքներից։

Մեկ տարին դուրս եկաւ Ղ. Պօղոսի կոնդակը Յիսուսեան կարգի կրօնաւորաց հաստատութեան համար, և հէնց էն տարին Ինգնատիոս Լոյոլայի աշակերտները մտան Խպանիայ և Փորթուգալիայ։ Ինկիլիզիթօրները սկսան նախանձիլ նրանց։

Որովհետև դատարանը չէր պակասացնում իրա անթիւ գործերը, բարձրագոյն խորհրդարանը ինքը սկսաւ Ինկիլիզիթօրներին էնպիսի միջոցներ դրել, որոնցով պէտք էր պակասէր զոհերի թիւը. ուստի նահանգական դատարաններին խրատներ ուղարկեց և հրամայեց այսպէս։ ,, Եթէ հրամայած լինի մատնել մեղապարտին մարմնաւոր դատաստանի, իբրև անզեղջ յանցաւոր, և նա ղղջայ և ցոյց տայ անկասկածելի փոշմանութիւն, էնպիսին աշխարհական դատաւորները չըզցեն մահուան պատիժի տակ, այլ Ինկիլիզիթօրները պարտաւոր են իրաւունք տալ նրան զղջալու և եկեղեցւոյ հետ հաշտուելու։ ,, Բայց այս կանոնը չէր տարածւում կրկին անգամ ընկնողների վրա, որոնց համար առաջուայ պէս միայն մին ողորմութիւն կար, այն է՝ կենդանւոյն չ'այրուիլ, այլ մեռնել փոքր ինչ թեթև կերպիւ։

Ղ ենեբալ - Ինկվիզիցիոն Տարբերյալ ժամանակը սաղբուեցաւ դատարան Հռովմուն էլ կոնդակաւ 1 Յուլիսի 1545 թուին։ Պապը տուեց զենեբալ - Ինկվիզիցիոնների տիտղոս և իրաւունք հաւատոյ շատ կարդինալների և մին քանի Դոմինիկեանների։ Այս նորութիւնը կասկած գցեց Խպանիոյ Ինկվիզիցիոնների սիրտը, որ չը լինի թէ խլեն նրանցից նախապատուութիւնը։ Պապը ստիպուեցաւ նրա միտքը յայտնել և գրաւոր բացատրութիւն էլ ուղարկեց, ասելով՝ թէ նա մտքից էլ չէ անցկացրել առաջուայ սահմանադրութեանց մէջ փոփոխութիւններ անելու և թէ էս նոր զենեբալ - Ինկվիզիցիոնների հաստատելը չէ պակասեցնիլ ուրիշ Ինկվիզիցիոնների իրաւունքը։ Այլ թէ, ժամանակը արդէօք ծանձկեց էդ բացատրութիւնը, կամ թէ նոյն խակ գործողութիւնները թուլացան՝ յայտնի չէ, միայն թէ նոր Ինկվիզիցիան շատ անգամ օրինքներ էր դրում Խպանիոյ Ինկվիզիցիային, առկայն առանց սահման դնելու թագաւորութեան զենեբալ - Ինկվիզիցիոնների վրայ։ Ուրանք կամակորութեամբ պաշտպանում էին իրանց իրաւունքը և այնպիսի զօրութեամբ, որ շատ անգամ չէին կատարում պապի կոնդակները, եթէ տեսնում էին, թէ նրանք անհամաձայն են իրանց վէճերի հետ, որանք հաստատուած էին բարձրագոյն խորհրդարանի միաձայն հաւանութեամբ։ Ի հարկէ Խպանիոյ Ինկվիզիցիոնները ուրիշ տեսակ կըխարուէին, եթէ հաստատ ջրդիտեային, թէ դիմելով թագաւորին և նրա քաղաքական նպատակներին, կարող են բռնադատել թագաւորական իշխանութիւնը մատնակից լինել իրանց տնօրէնութեանց և դէմ կենալ պապի հրամաններին, որանք՝ առանց այսպիսի հղօր պատապարանի ՝ի հարկէ խակոյն կըհամարէին նրանց ապստամբ, և կարգընկեց անելով հաստատակ քահանայից առաջնեն կըհատցնէին։ Էս ղէնքը՝ որ Խպանիոյ Ինկվիզիցիան վստահացաւ ձեռը առնել իրա արժանաւորութիւնը ուրիշ ամէն օտար իշխանութեանց դէմ պաշտպանելու համար, և զենեբալ - Ինկվիզիցիոնների անհերքելի միջոցների շարաչար գործածութիւնը, որով գողանում էին թագաւորի մեծութիւնը, էին խիստ պատճառ էն շարունակ անբաւականութեանց, որանք վրդովում էին Խպանիոյ և պապի պալատները։

Ինկվիզիցիոնները չըհնազանդելով պապին, սովոր էին նմանապէս թագաւորին էլ չըհնազանդել, երբոր հարկաւոր էին համարում հերքել նրա հրամանները։ Այսպէս 1543 թուին, էն ժա-

մանակ, երբոր Ն. Կարոլոսը իրեց Ինկվիզիցիայից արքունի դատարանի իրաւունքը, որ էր իրա և ուրիշ աշխարհական տուլմանաւորների և հաւատոց չը վերաբերեալ յանցանքների դատելու արտոնութիւնը, Բարցելոնիայի Ինկվիզիթորները գայթակղեցուցիչ վէճ բաց արին Կատալոնիայի Թռեր-Ռբքայի հետ, ինդուր համար որ նա դատաստանի տակ էր գցել մին բանտապետի, որ էն քաղաքի Ինկվիզիցիայի մեծ Սերժանտի ծառան էր, առանց իրաւունքի զէնք կրելու համար։ Ինկվիզիթորները Թռեր-Ռբքայի այս գործը համարում էին ոտնահարութիւն և սաստիկ անարգանք հաւատոց դատարանի, և խնդրեցին Ն. Կարոլոսից պատժել նրան։ Կայսրը իրա 1535 թուի դրած հրովարտակի հակառակ հրամայեց Թռեր-Ռբքային արձակում խնդրել, և ողորմելին ստիպուեցաւ ներկայանալ ոֆտո-դա-ֆէ հանդէսի ժամանակ, որ ընդունի ներողութիւն իբրև անարգող Ինկվիզիցիայի մեծութեանը։

Համարեա թէ մի և նոյն ժամանակումը նոյն տեսարանը կրկնուեցաւ Սիցիլիայումը, որ տեղ Ինկվիզիցիան սաստուած էր Իսպանիոյ մեծ Ինկվիզիթորից կախեալ։ Ռ. յս կզզի Թռեր-Ռբքան դատաստանի տակ գցեց Ինկվիզիցիայի երկու ծառաներին, որոնք դատապարտուած էին ծեծուելու։ Սիցիլիայի Ինկվիզիթորների մեծաւորը Թռեր-Ռբքայի վրա գանկատ գրեց ղեներալ Ինկվիզիթոր Տալաբէրին, և շատ պարզ բաւականութիւն ստացաւ Ռ. Սատիկան Փիլիպպոսից, որ Ն. Կարոլոսի բացակայութեան ժամանակը կառավարում էր բոլոր Իսպանիան։ Ծաղկահասակ արքայորդին, անապաշտ լինելով իրա հայրը, խնդրեց Թռեր-Ռբքային յանձն առնուլ Ինկվիզիցիայի դրած ապաշնորհանքը, որ ստանայ նրանից ներողութիւն։

Ռ. յս երկու անցքը յայտնի ցոյց են տալիս Իսպանիոյ թագաւորների քաղաքականութեան բոլոր անհեռատեսութիւնը, որոնք կատարելով Ինկվիզիթորների անսանձ պահանջմունքները, պատրաստեցին իրանց համար ահարկու թշնամիներ։ Իսկապէս, եթէ Սիցիլիոյ Թռեր-Ռբքան լքցուէր արդար ատելութեամբ, կարող էր ընդհանուր աղմուկ յարուցանել և քանդել Ինկվիզիցիան։ Սիցիլիացիք այնքան հակամիտ էին դատարանը քանդելու, այնքան սաստիկ ցանկանում էին վէր գցել իրանց վրայից Իսպանիոյ Ինկվիզիցիայի լուծը, որ Թռեր-Ռբքայի մին խօսքը կարող էր ողջին ոտի կանգնեցնել։ Ինկվիզիթորների յանդգնութիւնը ևր-

բէք չէր մառածում իրա գործերի հետևանքը և ամէն բանը նրան յաջողում էր։

Մեծ Ինկվիզիցիոր Տարէրայի կառավարութեան ժամանակը երևեցաւ հռչակաւոր ինքնակոչ Յովհաննէս Պէրէց Սաամէդրան, որը ոչ յայտնի է Փիլոսոֆոսների սուտ-դէնոպան կոչմամբ։ Այս բանի համար պէտք է երևակայել են դարու բալրը անտիրապետութիւնը և ազիտութիւնը, որ կարանանք հասկանալ, թէ ինչպէս մին հասարակ կրօնաւոր շինուլի հրաշարանիներով կարացաւ իշխել բոլոր ազգութեան մէջ։ Այս լրբի պատմութիւնը՝ բաց 'ի սուտ առասպելներից, որոնք բարդուեցան նրա վրա, անպատճառ պէտք է դրուի Ինկվիզիցիայի պատմութեան մէջ։

Յովհաննէս Պէրեց Դե-Սաամէդրա, ունենալով անունան ձիրքը, մին քանի տարի շինում էր պատրական կոնդակներ, արքունի հրաշարանները, մուրհակներ, և այլն, և այնպիսի կատարելութեամբ նմանեցնում էր, որ նրանց դործ էր ածում առանց ոքմինի կասկածանաց տակ ընկնելու. և այսպէս նա իրա անունը դրել էր սատան և դնդատան շինուորական կարդի արբոյն Յակոբոյ, և տարի ու կէս միջոցումը ստացաւ դրեթէ երեք հազար դուքաթի արդիւնք։ Մինչ ժամանակումը՝ օգնականութեամբ շինուլի արքունի հրաշարանների, նա շահուեցաւ 36,000 դուքաթ և այսքան մեծ արդեանց գաղանիքը ոչինչ ժամանակ չէր լուս ընկնիլ, եթէ որ նորա գլխումը չլծնուէր բաղձանք՝ իրան ցոյց տալ կարդինալ և պապի փոխանորդ։

Յիսուսեանց հաստատուելից փոքր ինչ յետոյ Սաամէդրան էր Վալենսիումը և մին քահանայի մօտ տեսաւ պապի կոնդակ, որով հրամայում էր փորթուգալիումը Յիսուսականների ընկերութիւն հաստատել։ Սաամէդրան լսեց նրա քարոզը, և էնքան բաւականութիւն ստացաւ նրանից, որ էն քահանային ճաշի հրաւիրեց իրա տունը և մինչանի օր պահեց իրա մօտ։

Յիսուսեանը էդ ժամանակումը ճանաչեց Սաամէդրի ձիրքը և ցանկացաւ նրա ձեռքով դրած կոնդակի երեսը ունենալ, որ ամէն բանով նման լինի և պարունակէ իրա մէջ էս կարդի դուխասանութիւնը։ Յիսուսեանի ցանկութիւնը այնպիսի ճշդութեամբ կատարուեցաւ, որ պատճէնը կարելի էր հրատարակել բնագրի տեղ։ Այս նոր քարոզչաց ընկերութեան հաստատուելիցը Փորթուգալցիք մեծ բաղդաւորութեան յոյս ունէին, ուստի Սաա-

վերդան և Յիսուսեանը հաւկաւոր համարեցին փօրթուգալիումը Խալանիսկանի նման Ինկվիզիցիայ հաստատել։ Այդ դիտաւորութիւնը հաստատելից յետոյ Սաւլեդրան գնաց Տաբալայ քաղաքը և Յիսուսեանի օգնականութեամբը հրատարակեց պապի կոնդակը, որ այս բանի ակսելու համար անշուշտ հարկաւոր էր. նմանապէս գրեց շինովի նամակներ Ն. Կարոլոսից և նրա որդի Փիլիպպոսից փօրթուգալեոյ թագաւոր Գ. Յովհաննէսի վրայ։ Այդ կոնդակը շինած էր իբրու թէ գրած Սաւլեդրի իբրև վոխանորդի վրայ փորթուգալիումը Ինկվիզիցիայ հաստատելու համար, եթէ թագաւորը համաձայնի։

Յետոյ Սաւլեդրան ստիմանից դուրս գնաց և եկաւ Սեւիլայի թագաւորութեան Այյեամոնդ քաղաքը. նոյն քաղաքը եկաւ Հռովմայ Ֆրանչիսկեան կարգի վիճակաւորը։ Սաւլեդրան խորհեցաւ վորձել, թէ ի՞նչ կ՚ասէ վիճակաւորը վատերականութեան համար, և ներկայացոյց նրան։ Ֆրանչիսկեան կրօնաւորը էս կոնդակը իսկական համարեց և զմայլելով շատ բան խօսեցաւ էն օգուտների վրայ, որը որ էստուրից կարող է քաղել փօրթուգալիան։

Խաբերան գնաց Սեւիլայ և իրա հետ վեր առաւ երկու վոխանորդներ, մինը իբրև ատենադպիր, իսկ միւսը իբրև կառավարիչ։ Յետոյ էն երկուսին ղրկեց Կորդովայ և Գրենադայ, որ նրանք էնտեղերքումը ծառաներ վարձեն, յետոյ վերադառնան պարկուպուրկով Բադախոց քաղաքը և էնտեղ իրանց անունը յայտնեն ծառայ էն կարդինալի, որը որ եկել է Հռովմից փորթուգալիայ Ինկվիզիցիայ սարքելու համար։ Ամենապէս հրամայած էր նրանց ասել, թէ կարդինալը շուտով ապրէ գայ սուրհանդակով։

Նշանակած օրը Բադախոցից եկաւ Սեւիլայ և Կարդինալ Լայիզայի Ա.ը. եպիսկոպոսարանումը վեր եկաւ իբրև պապի խաչակիր զօրաց ղեկավար - Ինկվիզիթօր։ Ամենքը ցոյց տուին նրան յարգանք և մեծարութիւն։ Սաւլեդրան մնաց էնտեղ 18 օր, և էդ ժամանակը զործածեց սուտ մուրհակներով տուանալ Տարիֆի Մարքէզի ժառանգներից 1130 դուքատ։

Յետոյ ուղարկեց իրա ատենադպրին Լիսաբոն կոնդակներով և թղթերով, որ արքունի դուռը իմանայ նրա գալուստը և պատրաստէ ինչ որ հարկաւոր է։ Այս վոխանորդի անակնուելի էս-

տարան Հաանիլը մեծ շլոթի մէջ գցեց արքունի դուռը, ուր ոչ ամենեքին յոյս չունէին այսպիսի նոր բան տեսնելու։ Այնու ամենայնիւ թագաւորը ղրկեց իրա դրան երևելի աստիճանաւորներին Կարդինալ ութուսիալին ընդունելու համար, որը որ Լիսաբոն գալեց յետոյ մեծ պատուով մնաց հնտեղ իրեք ամիս։

Յետոյ նա գնաց տէրութեան զանազան տեղերը ման դալու և ամէն տեղ պահանջում էր ամենահեշտ հաշիւ։ Շատ դժուար պէտք է լինէր ասիպել, որ նա վերջացնէ իրա հետազօտութիւնները, եթէ մեր քանի անակնուռնելի հանդամանքներ չըստիպէին կասկածել նրա խաբերայութեան վրա։ Տաբերան իմացաւ Սաալեդրայի շինովի թղթերը, և հրամայեց նրան բռնել։ Երբոր նա մեր վանքի՝ հաշիւ էր տեսնում նրա մօտ դտան շատ մեծ գումար-ասկի, որոնք նա ժողովել էր զանազան խաբէութիւնով։ Ինկվիզիցիան վճռեց Սաալեդրին մշակութիւնի ուղարկել տասը տարով։ Բայց նա մնաց հնտեղ նշանակածից էլ տասը տարի աւել, և յետոյ աղատուեցաւ Բ Փիլիպոսի 1563 թուի հրամանի զօրութեամբ և կրկին պալատը մտաւ։

Այս է սուտ դեսպանի պատմութիւնը, որից Փորթուգալցիք շնորհակալ պէտքէ լինին, որ նա եթէ չըկարաց հնտեղ Ինկվիզիցիա տալքել, գոնէ հիմքը դրեց։ Դատարեա՛ թէ Սաալեդրայի բոլոր անօրէնութիւնները մնացին հաստատ, էն պատրուակու, թէ Փորթուգալիումը էս տաեանը անշուշտ հարկաւոր է, որովհետև Իսպանիայից վախած շատ հրէայք կան հնտեղ։ Խաբեբայ և տախտաս Սաալեդրային, որի նմաններըք միշտ մահու վճռի տակ էին ընկնում, Ինկվիզիցիան ուղարկեց աքսոր, էն ժամանակ, երբոր նոյն դատաստանք ամենայն օր այրում էր պատուելի և պատկառելի քրիստոնեականներին մեղապարտ դուրս բերելով նըքանց երկրայական մեղքերումը և քուռ և անպիտան մարդկանց գանկատներով։

Մոռիկ չանելով, թէ Տոլեդիոյ Ինկվիզիցիան պարապած էր այս գայթակղեցուցիչ գործերով, ուրիշ նահանգներումը շարունակաբար այրում էին լիւտերականներին, կախարդ կարծուածներին և հմայողներին։ Այն ժամանակը սարքուեցաւ Փորթուգալիոյ Ինկվիզիցիան նման Իսպանիականին, որ կարողանան ֆանատիկներին հալածելու գործումը իրարու օգնել։

Կարդինալ Տաբերայ վեցերորդ ղեներալ Ինկվիզիթորը մե-

ռաւ օգոստոսի 1 ին 1545 թուի, Պան Կարոլոս Ս. Բարթիայի երկրորդ Փիլիպպոսի որդւոյ ծնելուց մին քանի օրից յետոյ։ Պ. Ներալ Ինկվիզիթորի մեռնելու ժամանակը դատարանների թիւը էնքան էր, ինչքան որ իրա նախորդի ժամանակը էր։

Տարբերայի եօթն տարուան կառավարութեան ժամանակը զանազան Ինկվիզիթորներ դատապարտեցին 7720 մարդ, որոնցից 840 այրուեցան կենդանւոյն, 420 պատկերներումը, իսկ մնացածները ուղարկուեցան զանազան տանջանքների և զրկուեցան կայքերից։ Ս. յս թուի մէջ դեռ չըկան էն զոհերը, որոնք փչացան էս Ինկվիզիթորի ժամանակը Ս. մերիկայումը և Ինդկատանումը։ Նրանի թէ վայտակոյտների վրա մեռնողների թիւը շատ շատ էր, երբոր Ն. Կարոլոսը՝ Ինկվիզիցիայի նախանձայոյզ պաշտպանը՝ ստիպուեցաւ արդելել Ինդկացւոց տանջելը։

Տարբերին յաջորդեց Կարդինալ Պան Գարսիա Լոայիզա, շատ ծերացած մարդ։ Սա էր Ն. Կարոլոսի խոստովանահայը, Գոմինիկեան կարգի գլխաւոր վանահայը և խաչակիր զօրաց պատրիարքը։ Սա ոչինչ երևելի բան չ'արաւ, որովհետև շատ կարճ ժամանակ կառավարեց, և թէպէտ առաջարկեց Կայսրին ուղղել Ինկվիզիցիայի կարգը էն ձևով, ինչպէս էր ուղղուած Ֆերդինանդի դահ նստելու ժամանակը, բայց մահը արդելեց այս դիտաւորութիւնը 1545 թուին։

Մինչեոյն տարին Ն. Կարոլոսը վշտանալով Լուտերի Գերմանիումը ստացած յառաջադիմութիւններից և վախենալով, թէ նրա ուսումը չըտարածուի Եւրոպայի Հարաւային կողմերումն էլ, աշխատեցաւ կրկին անդամ Ինկվիզիցիան մտցնել Նէապոլ քաղաքը։ Սա դիտէր էն անյաջող փորձը, որ արել էր իրա պապը էս բանի համար, բայց յուսալով Կայսերական տիտղոսի վրա և իրա թագաւորութեան մէջ իլած երևելի անցքերի վրա, կարծում էր, թէ Նէապոլիտանցիք կըհնազանդին։

Գոն Պեդրո Տոլեդիոյ Գոնը - Ուբան, հրաման ստացաւ՝ ընակիչներից նշանակել Ինկվիզիթորներ և ատիճանաւորներ էնպէս մարդիք, որոնք ընդունակ լինին այս գործը կատարելու, և նշանակուածների ցուցակը և ուրիշ ամենայն դրաւոր վկայութիւնները ղրկել կառավարութեանը, որ զենեռալ - Ինկվիզիթորը պատրաստէ ռոճիկները և սահմանէ իշխանութիւն նոր Ինկվիզիթորներին։ Ս. յսպէս կարդելից յետոյ Սիցիլիայի աւագ Ինկվի-

զեկիրը պէտք էր գնար Անտիոքի Ինկվիզիցիայի Ռոմեական ատեանի հետ բաց անել էն տեղ դատարան բոլոր Ինկվիզիցիի պարագաներով, և էնդրում նոր դատարանի անդամներին միջոց տալ շուտով սկսել իրանց գործը։

Այսքան այս տնօրէնութիւնները առաջի անգամը ոչինչ ընդդիմութիւն չըհանդիպեցան, բայց հէնց նոր Ինկվիզիցիայի անդամները մինչ քանի մարդ բանտը դրին, իսկոյն Անտիոքեանցիք զէնք առան, Իսպանիական զօրքի կէսը ջարդեցին և մնացածներին փախցրին բերդը։ Ն Կարոլոսը վախենալով ընդհանրական ապստամբութիւնից սկսաւ ժողովուրդի հետ դաշնախօսութիւն անել և հնազանդեցրուց նրանց միայն էն պայմանով, որ Անտիոքի մէջ չըմտնի նոր Ինկվիզիցիան։

Այս կռիւը աւելի երևելի է էնդրում էլ, որ Գ. Պողոս պապը յայտնի օգնում էր Անտիոքեանցուց Իսպանիոյ Ինկվիզիցիան վերը գցելու համար։ Էնդուր որ շատուց անհաճոյ էր նրան Սիցիլիայի և Սարդինիի Ինկվիզիցիաների Իսպանական Ինկվիզիցիայից կախումը։ Պապը գործ էր գնում ամենայն հնարքները Անտիոքեանցիներին կատղեցնելու համար և էս պատճառաւ, երբոր երեք տարիից յետոյ Հռոմի Ինկվիզիցիան մտաւ Անտիոք, փոքր տրտունջ էլ չըհանդիպեցաւ, և Իսպանիոյ դատարանի վերայ յաղթական հանդիսացաւ։ Այս ամենից երևում է, թէ էս բոլոր կաթոլիկական կռուումը հաւատք շատ փոքր մասնակցութիւն ունէր և կռուին զոհ էին մատնուում միայն ժողովուրդը։

Այսպէս մեռաւ 1646 թուի Ապրիլի 22 ին, և նրա տասն ամեայ կառավարութեան միջոցումը Իսպանիոյ Ինկվիզիցիան դատապարտեց 750 հոգի, որոնցից 120 ը այրուեցան կենդանւոյն և 60 ը պատկերքներով։ Բայց պատիժները յայտնի թուլանում էին. բայց երբոր Ինկվիզիցիայի կառավարութեան ամէները ընկան Վալդէցի ձեռը, իսկոյն Ինկվիզիցիայի փայտակոյտները բորբոքեցան և Վալդէցի ծառայութիւնը իսկոյն ժողովուրդի միտը բերեց անիծեալ Ֆօրկուեմադի օրերը։

ԱՂԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

Գ. Էնէրալ - Ինկվիզիցիոն Ալաբէցի հաստատութիւնը սաստիկ ուժը պարէրը և Ս. Կարոլոսի մահը։

Կարդինալ Լոյոլայի յաջորդ նշանաւոր Սեւիլիոյ Ս.ը եպիսկոպոս և Խպանիոյ գլխաւոր - Ինկվիզիցիոյ գլխաւորն էր Ֆերդինանդ Ալաղէցը - երկրորդ Տօրկուեմադան։ Երկնից սրտմտութիւնը թոյլ տուաց, որ այս ֆանատիկի կեանքը երկարի։ Ալաղէցը կատարեց այս պաշտօնը ամբողջ քսան տարի։

Ս. յս ուժերորդ գլխաւոր - Ինկվիզիցիոյը իրա բոլոր կենացը մէջ հրատարակեց խիստ արիւնաշաղախ հրամանները, և ինչպէս որ Ֆրէյց վրա նրանից առաջ լսած դատաստանը շատ զոհեր մատնց կրակի, էնպէս էլ Ալաղէցը Լուտերականների եռեից ընկաւ։

Ի Պօղոսը թոյլ տուաց Ֆրենադի Պաւրերին մանել ամենայն քաղաքական պաշտօնների և հոգևորական կարգի մէջ։ Ի Կարոլոսը նորոգեց 1538 թուի ազատման տնօրէնութիւնները մերկատած Ֆրէդերիցոց և Ս.մերիկացոց մասին. բայց Ալաղէցը նոյն Պապից խնդրեց և ընկալաւ հրամարտակ կրակի մատնել Լուտերականները, թէև երկրորդ անգամ ընկած չըլլին, նաև եթէ նկեղեցոյ հետ հաշտուել խնդրեն։ Ասը մէկանց արիւնը սկսաւ դեռի պէս վազել, Խպանիան նոր մէկանց դողաց, Ինկվիզիցիոնները նոր մէկանց սկսեցին անողորմաբար խեղճերի եռեն ընկնել։ Ալաղէցը իլաւ նմանապէս առաջին և միայնակ պատճառ հոգևորական գլխոն գլխատութեանց խարխանմանը, և վատ վարուց Հաշակի այնքան ընդհանուր հատատամանը, որ տեւեց Յիսուսեանց մտնելից մինչև նրանց հալածանքը։ Ալլադոլիդի, Սեւիլայի, Տօլեդի, Պուրգոսայի և ուրիշ քաղաքների միայտակոյտները յաղթանակը տուին այն ազիտութեան ձեռը, որի պաշտպանն էր Ինկվիզիցիան։ Ա հա-

լանից շատ ուսեալ Պատուածարանները, որոնք ներկայ էին գրաքննութեան Տրիդենտեան ժողովումը։ Բուսական էր միայն արևելեան լեզու խմանալը և այն յայտնի տարացոյց էր Լատերանեանց։

Պալադիոյը մեծ հոգս էր առում գրքերը արդելելու համար և բարակ աչալրջութիւնով դադրեցրուց էն շարադրութիւնների քերելը, որոնք կարող էին տարածել Լատերի և բողքական մատենագիրների օրէնքը։ Բարձրագոյն խորհրդարանը և Ս. Կարողոսը իրանց կողմից շատ հիանալի օգնում էին ղեներալ - Ինկվիզիցիոնի ամէն հնարքներին։ Կայսեր հրամարակի զօրութեամբ Լուվենի համալսարանը և Խպանիոյ ժողովը հրատարակեցին շատ գրեանց ցուցակներ, և բոլոր տէրութեան մէջ երկրորդ անգամ գրեանց ստատիկ օրէնուն իլաւ։

Էն ուսումնականների մէջ, որոնց հալածեց Պալադիոյը Ս. Կարոլոսի մահից առաջ, երևելի էր Բարդուղիմէոս Կարրանցա Տոլեդիոյ ազգ եպիսկոպոսը, որի դէմ ղեներալ - Ինկվիզիցիոնը այնպիսի կատաղութեամբ գնուեցաւ, մինչև որ իրա գործքերի մէջ ցոյց տուեց աւելի թշնամանք, քան թէ հաւատքի նախանձ։ Յոհաննէս դե - Ֆէ հիւբընկալ կրօնաւորից կարդի հիմնադիրը, որ հոգացողութիւն էր անում խեղճ հիւանդների համար, նմանապէս արգելուեցաւ կիսարդութեան և նեկրոմանտի յանցանագ պատրուակաւ, և բարեպաշտ մարդասիրութիւնը նրան անպատճառ դատարանի բանտը կըգցէր, եթէ պապը դէմ չըկենար։ Մին Ս. Բրադոնիոյ գեղեցկախօս և Հարտար քարոզիչ, որ իրա ընդարձակ գիտուն Համար կոչում էր Պոբտոլէս (Ֆոչիոյ) Գէնիք, առաջ դատապարտուեցաւ ապաշխարանքի իբրև Լուտերականութեան մէջ շատ կասկածաւոր։ Յետոյ երբոր կայսրը նշանակեց նրան Տօրտոզի եպիսկոպոս, Ինկվիզիցիոնները բորբոքեցան ատելութիւնով և դցին նրան դատարանի բանտը։ Գէտիոյի բարքը և ընաւորութիւնը այնքան մաքուր էին, որ կայսրը ինքը գրեց նրա Համար պաշտպանութեան թուղթ։ Գէտին ազատուեցաւ, և շուտով մեռաւ։ Բայց Ինկվիզիցիոնները իրանց զոհը հանդիստ չըթողին։ Երբորդ քննողական դորձի զօրութեամբ դատարանը հանդուցեալին հերետիկոս համարեց, հրամայեց նրա մարմինը գերեզմանից հանել և պատկերի հետ միասին այրել հրապարակական աֆտո - դա - ֆէ հանդէսումը և խլել նրա կայքը։

Գէտին էր աշակերտ Բոդրիկեց Պալերցի, որի վարքը էր-

բեմն անկարգ էր, բայց փոխուեցաւ էն օրից, երբոր նա աշխարքը թողնելով նուիրեց իրա կեանքը գիշեր ցերեկ Աստուածաշունչ կարդալու։ Քանի որ ինքնաւորների և քահանաների հանդիպում էր, միշտ նախատում էր նրանց աւետարանի տարող վարդապետութիւնից հեռանալներուն համար, և վերապէս ինքն էլ սկսաւ քարոզել Աստուծի և ուրիշ բարեկարգողների վարդապետութիւնը։ Ինկվիզիցիան առաջ բանի տեղ չըդրեց Պալերոյի նախանձայուզութիւնը, յիմար համարելով նրան գիշատած շրերին համար։ բայց վերջապէս հրամայեց բանտը գցել։ Նրան դատապարտեցին իբրև Լուտերական հերետիկոս, ուրացող և սուտ վարդապետ։ Յետոյ կայքը խլեցին և մշտնջենական բանտի մատնեցին։

Մին ծառայ մատնեց Բուրգունդիոյ Մարիամին, որ էր 85 տարեկան պառաւ, իբրու թէ նա սատանայ լինի, թէ քրիստոնեայք ոչ հաւատ ունին, ոչ օրէնք։ Նրան խակոյն բանտը դրին իբրև հրէութեան մէջ կասկածաւոր և յայտնի ապացոյցներ չունենալով Ինկվիզիցիոն օրենքը բանտումը ծածուկ մտիկ էին անում, սպասելով մին տեղեկութիւն ստանալ։ Բայց հինգ տարի բանտի մէջ անօգուտ մնալուց յետոյ, Մարիամը 90 տարեկան հասակումը քիկաւ տանջանքի տակ, հակառակ բարձրագոյն խորհրդարանի կանոնին, որ էդ տանջանքի պատաւանելի վրա դորձածութիւնը արգիլել էր։ Բուրթեամբ դիմացաւ Մարիամը բոլոր զարհուրելի տանջանքներին. բայց մին քանի օրից յետոյ մեռաւ բանտումը պաշտպանելով իրա անմեղութիւնը։ Բայց Ինկվիզիցիոն օրենքը, որանք մին ոտ էլ չէին յետ կանգնում իրանց դորձից, չըվերջացրին տարաբաղդի դորձը և դատապարտեցին նրան իբրև հրէական հերետիկոսութեան մէջ յանցաւոր։ Նրա ոսկորները և պատկերը այրեցին, նրա մեծագումար կայքերը խլեցին, և նրա որդկերանցը և սերունդը անպատուութեան տակ գցեցին։ Այս սպանութիւնը արին Ֆրանսիայի Ինկվիզիցիոնները Ն. Կարոլոսի գահից հրաժարուելու տարին։

Կայսրը քառասուն տարի թագաւորելից յետոյ ամիսյա պատճառներով հրաժարուեցաւ գահից 1556 թուին Յունվարի 16 ին թողլով թագաւորութիւնը իրա Ֆիլիպպոս որդուին, և հեռացաւ սուրբ Յուստինոսի Յերոնիմիտաց վանքը Էստրամադուրայ քաղաքումը, և մեռաւ 1558 թուի սեպտեմբերի 25 ին, 58 տարեկան հասակումը։ Մին քանի պատմաբաններ ասում են, թէ Ն.

Կարոլոսը իրա միայնակեցութեան ժամանակը ընկալաւ Գերմանացի բողոքականաց ուսումը. բայց էդ բանը սուտ է և Հրամարութեան նման էլ չէ։ Նա մեռաւ ոչ միայն կաթոլիկ, այլև կտակ առանդեց իրա որդուն՝ գնալ Հօրը շուխղով, նախանձայուղութեամբ կոտորելով և ոգուժելով հերետիկոսներին, որ կարդից որ լինին։ Ե Կարոլոսը պահանջում էր իրա որդուց ամէն տեղ պաշտպանել Ինկվիզիցիայի դատարանը։ Նրա քառասուն տարուայ թագաւորութիւնը Ինկվիզիցիային տուեց էն հաստատութիւնը, որ դժար էր նախագուշակել նրա գահ բարձրելու ժամանակը, երբոր Իսպանիացիք և Ֆլամանդցիք պահանջում էին փոխել դատարանի ձևը։ Կայսրը ոչ միայն չընկատարեց իրա խօսքը, որ տուել էր Կաստիլիոյ և Արրագոնիոյ փոխանորդներին, այլև չէր համաձայնում ոչինչ նորաձևութիւն անելու, թէև իրան յայտնի էին նրանց ամենայն չարագործութիւնները։ Այսպէս կամակոր նախանձայուղութիւնը առ Ինկվիզիցիան ստիպեց շատերին ասել, թէ նա էր հոգեւորական Ֆոն-Ակինտա, պոնտիֆիկոսաց գործ և ընդհանրապէս էն նախապոնդներին, որոնք հերետիկոսները հայոյում էին քամոլ ինչպէս հաւատքին։

Ստիպեց ընտալով Ե Կարոլոսի բոլոր գործքերին, Ֆ. Պօղոս ապատը վեց բաց արաւ նրա որդի Փիլիպոսի հետ, կոչելով երկուսին էլ կախարդ և Լուտերի հերետիկոսութեան պաշտպան։ Վեցի սկիզբը յանձնուեցաւ պապի դրան Պրոկուրորին, որ հրատարակեց, թէ ապատը Ե Կարոլոսին զրկում է Կայսերական և Իսպանիոյ թագից և բոլոր իշխանութիւնից, թէ նրա և նրա որդուց դէմ դուրս են եկել բանադրանաց կոնդակները, թէ նրա հպատակ Գերմանացիք, Իսպանիացիք, Իտալացիք և մանաւանդ Նեապոլիտանցիք ազատ են հպատակութեան և հաւատարմութեան երդումից։

Բայց այսու ամենայնիւ, թէև Ֆ. Պօղոսի ատելութիւնը Ե Կարոլոսի և նրա որդուց դէմ շատ մեծ էր, սակայն քաղաքականութիւնը չէր ներում նրան իսկութեամբ կատարել Պրոկուրորի ծանուցումը։ Գառամեալ քահանայապետը դադրեցրուց գործի շարունակութիւնը և սպասում էր պատեհ ժամանակի։ Դատը հանար պապի թշնամիներն էլ թոյլ էին ներդործում բանադրանքից վախենալով։

Ե Կարոլոսը իրա թագաւորութեան առաջի տարիները Ինկվիզիցիա ստիպեց իրա հպատակների մէջ Ֆլանդրիումը։ Բայց

սկզբումը շատ խստասիրտ երևեցաւ Ինկվիզիցիան դնելով էն պա-
տիժները, որոնք կային Խպանիումը և աւելի մեծերը զանազան
հանգամանքների համեմատ։ Ռուվենի դատարանը նրա աչքի ա-
ռաջև 1522 ին շատ անգամ Ա.ֆտո-դա-ֆէ հանդէսներ կա-
տարեց։ Երկու տարիից յետոյ Ն Կարոլոսը հրատարակեց հեբ-
տիկոսաց դէմ անգութ կանոններ, որոնք կրկին հաստատեց 1531
թուին մին քանի թեթևութեամբ, որը որ յետոյ միշտ պահ-
պանում էին։

Ուս այսպէս, քննելով Ն Կարոլոսի թագաւորութեան ժա-
մանակները, տեսնում. ենք, թէ նա միշտ պաշտպան է իլել Ինկ-
վիզիթորներին, և թէ հպատակաց հոգւոյ փրկութեան համար
ունեցած հոգը էնքան մեծ էր, որ երկու կիսագունտերումը ոչ
մին Խպանիոյ տէրութեան ստորադրեալ նահանգ չըմնաց, ուր որ
չըսաղբուեցաւ կամ փորձը չ'առնուեցաւ տարբել Ինկվիզիցիայ երա-
բարբարոսական կանոնգրքով։

Ա.յնու ամենայնիւ Ֆ. Փիլիպոսը և ղեներալ - Ինկվիզիթոր
Ալ.ալդէցը նախորդի տնօրէնութիւնները թերի համարելով սկսան
կատարելագործել։

ՎԵՐՋ, ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՅ։